



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

6373

9(73)
—
C-72

ԲԵՆԻԱՄԻՆ

ՖՐԱՆԿԼԻՆի

ԿԵՐԱՔ

ԴԱՐՁ ՖԵՐԴԻՆԱՆԴ ՇՐԻՖԹ

ԹԱՐԺՄԱՆՈՒԹԻՒՆ և ԳԵՐԱՆԵՐԵՐԵՆ

Փ. Ա. Բ. Պ Գ Վ Ե Խ Ա Հ

Ի ՎԱՐԵՐՃԱՎԵՐ

Ի ՏԱՐԻՆԸ ՍՐՎԵ ԿԱՊՈՒՅՆ ԱՌԱՋԱՐԵՐ

Գ-Յ-Ե-1871

(73)

72

Printed In Turkey

ԲԵՆԻԱՄԻՆ ՑՐԱՆԿԼԻՆԻ

9(73)

Բ-72

ՄՎ

ԿԵՍԱՔԸ

ՀՅ

ԴՐՈՇ ԳԵՐԴԻՆԱՆԴ ՀՄԴԹԹ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ և ԳԵՐՄԱՆԵՐԵՆ

Փ. ՎԱՐԴԱՆԵԱՆ

"Որպէս Փիլիսոփայ՝ նա կարող էր
նիւթօն, որպէս օրէնսդիր՝ Լիկուրգ
դառնալ, բայց իւրաքանչիւրէն զերա-
զանց էր, քանզի երկուքին շնորհն ևս
բարի գործելու կենսական փիլիսոփա-
յութեան մէջ կըմիաւորէր":

Գ. Ամբ:

Ի ՎԱՂԱՐԺԱՊԱՏ

Ի ՏԱՐԱՆԻ ՄՐԵՈՑ ԿԱԹՈՂԻԿԵ ԷջմիածնԻ

ԱՅԻՍ-1871

ՎԱՐԴԱ ԱԼ ԽՈՎՅԻ

13/16

Printed In Turkey.

ՅՈՐՈՒԹԻՒՆ ԳՈՎԱՆԱՅՑ ՀԱՐՄԵՆԵԱԿԱՆԻՒՆ

73

ՀՐԵՍՄԱՆԵՐ

Տ. Տ. ԳԵՂՋԻ ԳԱՅ-Դ.

ՎԵՀԱՓ. ԵՒ ՄՐՄՋԱՆԳՈՅՑՆ ԿԱՔ-ՈՎ-ԻԿՈՆԻ



1430

39

Y

2004

Հ Խառը բանական

ՆՈՒՅՆ ՈՐԴԻՌԱԿԱՆ ՍԻՐԱՅ

ԲԵՆԻԱՄԻՆ ՖՐԱՆԿԻՆԻ

ԿԵՐՆ ՔԸ.

Ա.

Ա Շ Ա Կ Ե Ր Տ Ը :

Հետիսային Վմերիկան, ինչպէս յայտնի է, առաջ Անգլիայի գաղթականութիւնն էր, որն որ գաղթականներու բազմանալն ետքը Կոր Անգլիայ սկսաւ կոչուիլ:

Վ.յն տեղ՝ Բօստոն անուն քաղաքի վոքրիկ տպարանին մէջ՝ հետևեալ անցքն անցաւ 1721 թ: Տպարանի տէրը, որ խմբագիր էր, ու նորա հետ քանի մը կըթթեալ մարդիկ հրատարակութեան համար եկած շարադրութիւնները քննելով

Նստած էին սեղանի շշւրջը։ “Կոցամեծ
զատ տպարանի մէջ ներկայ էր նաև տասն
և վեց տարեկան գրաշար աշակերտ մը,
որ իրեն քաջ ծանօթ յօդուածի քննու-
թեան տակ ընկնելու բուգին անհամբեր
սրտով կապասէր։ Արսենք անհամբեր, ըստ
որում լրագրի համար բան մը յօրինելու
փափագին ընդդիմանալ չկրնալով, նաև ս
շարադրութիւն մը գրած էր թագուն, որ
այժմ խմբագրական արկղին մէջ կը գրտ-
նուէր՝ առանց նորա անունը կրելու։

Վարդը կը հասնի նորա յօդուածին և
խմբագիրներէն մին զայն բարձր ձայնով
կարդալ կօկուէ Վաշկերտի սիրտը կը թըն-
դայ։ Պարոններէն ոչ ոք չի գուշակէր,
թէ ինչ կանցնի այդ միջոցին դրաշարական
սեղանին մօտ կանցնած պատանու սրտին
մէջ և թէ ինչպէս նորա երեսը կը դեղնի
ընթերցմունքէն յեւ ոյր Վրդէն ստեա տե-
սած էր նա, որ լրագրի համար որոշուած
թէրթէրէն շատերը կարդացուելէն ետքը
ուսւա ու փուս մաւացութեան գետը կը

ձշուելին, որն որ տպարանին մէջ հին արկ-
դի մը պատկեր ուներ։ Վայժմ նորա ական-
ջին խօշիւն, շըշիւն կը հասնի, — ասես թէ
մահկանացու կտոր մը կաւելնայ արկղին
մէջ, և վայրիկեան մը ետքը՝ պատանու ե-
րեսքն ու ձակատը յանկարծ կը կարմրին
Կնչ. արդեօք ուղիղ լսեց։ Պարոններէն
մին կը գովի շարադրութիւնը և շնո կը
գովի, միւսը նորան կը ձայնակցի, երրորդը
նոցա կարծիքը կը հաստատէ ։ Վրդեօք
ո՞յ է այս պատուական գործի հեղինակը,
կրսեն նորա մէկմէկու, և պատասխան
գտնելու համար՝ քաղաքի մէջ համբաւ
վայելող մարդոց անունները կը յիշեն։

Ով էր այս աշակերտը, որին այդպիսի
երջանիկ ուրախութիւն վիճակուած էր
այսօր։ Իհնիամին ֆրանկին Վամբրիկացին
էր, որ ետքը իրեւ քաղաքացի, իրրեւ ու-
սումնական և տէրունական անձն հռչա-
կուելու էր աշխարհի մէջ։

Բայց ինչպէս կրցաւ տասնեւթեց ամեաց
գրաշար մը այդպիսի վառաւոր յաղթա-

նակ տանել, կը հարցնեն ի հարկէ ընթեր-
ցողներէն շատերը: Ո՞չ, ընթերցողներն
աւելի կը զարմանան, երբոր լսեն, որ Ռե-
նիամինի ձեռքով միւս դիշեր գրուած երկ-
րորդ շարադրութիւնն ևս նոյն մրցանակը
գրաւեց, որ քանիքարաւոր անյատն այնու-
հետեւ ևս շատ գովեստներ ստացաւ և թէ
իսկական հեղինակէն այնու ամենայնիւ իր
թագստեան մէջ մնաց — համեստութեան
վերին աստիճան մը — որին սակաւք միայն
կհամնի՞ն:

Արդ ընթերցողն կուզենայ անշուշտ
իմանալ, թէ ինչ էր այդ յաջողութեան
պատճառը — արդեօք հանձար, ուսումնա-
կան կրթութիւնն, թէ հմուտ դաստիա-
րակութիւն: Եւ յս հարցին պատասխանե-
լու համար, պէտք է Ռենիամինի մանկու-
թիւն աչքէ անցնել:

Ռենիամինի հայրը, Յողիաս Ֆլոանկլին,
կրօնական պատճառներով ստիպուած էր
գաղթել Ենգլիայէն Եմերիկայ ու հաս-
տատուիլ Ռօստօնի մէջ: Ենգլիայ եղած

ժամանակը մետաքսագործութեան կը պա-
րապէր, բայց Եմերիկայ գայ վ ուրիշ
գործի ձեռն արկանելու հարկ տեսաւ,
որովհետեւ այդ արհեստը օգուտ չէր բերէր:
Կորապէս շրջահայեաց, հանձարիղ, և
աշխատասէր մարդուննոր գործ մը գտնիլը
գժուար բան չէր. նոտ սկսաւ օձառ և մոմ
շննել և ուրախութեամբ սրտի տեսաւ,
որ այս նոր ձեռնարկութեամբ իր բազմա-
թիւ ընտանեաց անհրաժեշտ կարիքը հո-
գալու միջոց կարող է շահել, թէև շատ
համեստ միջոց:

Կորա տասնևերեք զտւակներէն ամե-
նափրերը մեր Ռենիամինն էր: Եյս տեղ
կուզեմ անցք մը յառաջ բերել նորա
մանկութեան օրերէն:

Մին օր մը, երբ որ ևս եօթն տարեկան
երեխայ էի, կը պատմէ նա, «բարեկամ-
ներս սև դրամ ընծայեցին ինձ: Ես ու-
զեցի իսկոյն շուկայ գնալ և խաղալիք մը
գնել ինձ համար. բայց ծամբու վրայ յան-
կարծ զմայլեցայ սրինդի մը հնչմունքէն,

որ մէկ ուրիշ երեխայ իր ձեռքին բռնած էր. և մօտենալով նորան բոլոր ստակս առաջարկեցի, ինդը ելով որ սրինգը ինձ տոյ: Այսուհետեւ զուարթ զուարթ տուն եկայ և բովանդակ տան մէջ սուլմանք բարձրացուցի յուրախութիւն իմ և ի ձանձրութիւն ամենեցուն: Երած իրենտ առքս իմանալով՝ քոյրես ու եղբարներս թափեցան վրաս և միաբերան յայտնեցին, որ չորս անգամ աւելի վճարած եմ, քան թէ սրինգին իրական արժէ ըը, և սկսան ծիծաղել յիմարութեանս վրայ: — Աւրեմն աւելի լաւ բաներ կարող էի գնել այս գրամօվս, ասացի ես մտքիս մէջ, և բարկութենէս լացի, որովհետեւ աղքականներուս ծաղրը աւելի սիրտս կը հանէր, քանթէ սրինգը կու բախացնէր: Այդ դէպ քը մնայ- ուն ապաւորութիւն ունեցաւ վրաս և վեր- ջը շատ օգուտ բերաւ ինձ, քանզի ստէպ երբ որ դատարկ բան մը գնելու փորձու- թեան մէջ կընկնէր, զգուշանալով! ըսէր ինքս ինձ. , Տե՛ս սրինգիդ շատ շատա:

Մեր Բանիամինի զլսաւոր արժանաւո- րութիւնը այս էր, որ նա զիտէր օգուտ քաղել կեանքի փորձերէն և մէկ անգամ տուած դասին յարմար ապրելու հաստատ կամք ունէր:

Մէկ զրբի մէջ, որ Բանիամին վերջը իր որդու համար յօրինած էր, նա երախ- տագէտ սրտով ծնօղները կը յիշէ և նոցա կեանքն ու բարքը համառօտ պատմելէն ետքը կըսէ, թէ իր ունեցած ամենալաւ- յատկութիւնքը նոցամէն ընդունած ա- ւանդն ու ժառանգութիւնն էր:

Հայրս, Յոզիաս Գրանկլին, կըսէ նա, միջահասակ, ամրակազմ ու սիրուն մարդ էր և ամենայն տեսակ գործերու մէջ կոր- գէ գուրս յաջողակութիւն ցոյց կուտար: Քաւականին լաւ նկարել զիտէր ու նաև մասամբ երաժիշտ էր: Նրի որ օրուայ աշխատանքէն ետքը երեկոյեան ջութակի դաշնակցութեամբ իր քաղցրիկ ձայնով սաղմոս կամ ել գ մը կերդէր, մէք զլայ- լած կըլսէինք նորան: Երջեսաներու մէջ

ևս հմուտ էր և պէտք եղած ժամանակին ամեն տեսակ գործիք բանեցնել զիտէր։ Բայց նորա յատկութիւններէն ամենաժամանկացինը՝ թէ հասարակային և թէ մասնաւոր կեանքի վերաբերեալ գործերու մէջ ցոյց տուած մարդկային առողջ միտքն ու հիմնաւոր դատողութիւնն էր։ Հասարակային գործերուն շատ չեր մասնակցեր, որովհետեւ բազմութիւ գերգաստանի նիւթական պէտքերը հոգալով, ստիպուած էր անգաղար ընտանեկան մասնաւոր բաներու վրայ հոգ տանելու, առկոյն և այնպէս միտքս էր որ շրջակայքի նշանաւոր մարդիքը շուտ շուտ կուգալին նորա մօտ և քաղաքի կամ եկեղեցւոյ հանգամանքներու վրայօք խորհուրդ կը հարցնէին և նորա կարծիքներուն շոտ մեծ յարդանք կուտային։ Մասնաւոր անձինք ևս հարկ կը համարէին երեկոն խորհուրդ լսելու նորամբն իրենց իրենց իրակուութիւնն էր, ուստի ես ևս սռվորեցայ ի մանկութենէ անտի միանգամայն ուշադրութիւն չը դարձնելու այդպիսի բաներուն և ինձ համար ամենը մին էր, թէ ինչ տեսակ ուտելիք ունեի առջես։ Վինչե անգամ և այժմ այնպէս անտարբեր եմ դէպի այդ, որ ճաշէն քանի մը ժամ ետքը գտուարութեամբ միտք կը բերեմ, թէ կերածս ինչ ու քանի տեսակ

ըեր, որ իր սեղանի վրայ միշտ ընկերներ, բանագէտ զբացիներ գտնուելին և կաշխատէր նոյցա հետ խմաստուն զըուց բանալ շահաւետ խնդիրներու վրայ, որպէս զի զաւակներն ես բան ուսանելին ու հոգեպէս կրթուեին։ Այդ կերպով մեք կը սովորէինք նորամին ամեն բանի մտադրութիւն ընծայել և միայն պատրին սիրել կեանքիս մէջ։ Կըրեք չեր խօսէր նա սեղանի վրայ դրուած կերակուրներու մասին և բնաւ չեր ասէր; թէ արդեօք համով կամ վատ եփուած էին, արդեօք լաւ համեմուած և կամ մէկ կերակուրը միւրէն նախաղասելի՞ն էր, ուստի ես ևս սռվորեցայ ի մանկութենէ անտի միանգամայն ուշադրութիւն չը դարձնելու այդպիսի բաներուն և ինձ համար ամենը մին էր, թէ ինչ տեսակ ուտելիք ունեի առջես։ Վինչե անգամ և այժմ այնպէս անտարբեր եմ դէպի այդ, որ ճաշէն քանի մը ժամ ետքը գտուարութեամբ միտք կը բերեմ, թէ կերածս ինչ ու քանի տեսակ

Էր: Այդ սովորութեան յատուկ գինը
իմացայ մանաւանդ ճամբորդութեան ժա-
մանակ. ես ուղևորած եմ զանազան մար-
դոց հետ, որք ինձմէն աւելի սրուած և
ուրեմն գժուար ամոքելի ճաշակ ունենա-
լով շատ անգամ վերին աստիճանի նե-
ղութիւնք կը քաշէին, մինչդեռ իմ քեֆս
լիովին իր տեղը կը մնար: Մայրս նմանա-
պէս կատարեալ առողջութիւն կը վայե-
լէր և զաւակները միշտ ինքը կը սննդէր:
Լսած չեմ երբէք, որ նա կամ հայրս որ
և իցէ հիւանդութեան վրայ գանգատէին
բացի նոյն հիւանդութենէն, որով եր-
կուքն ևս վախճանեցան:

Հանգուցեալ ծնողներու գերեզմանը
Բնիւամին զարդարեց մարմարեայ քարով
և տապանագիր մը փորել տուաւ, որոյ
մերջին խօսքերն էին.

,, Այրս պարկեշտ և իմաստուն էր
,, Մայրս էր համեստ և առաքինի, :
Բնիւամինի ծնողները երեի վաղ ար-
դէն նկատած էին նորա առանձին հօգե-

կան ընդունակութիւնքը, որովհետեւ մինչ-
դեռ նորա մլւս եղբայրները սովորաբար
հասարակ ժողովրդական վարժարան կը
տրուեին ու վերջը արուեստի կը յանձ-
նուեին, նա իր ութ տարեկան հասակին
արդէն Բօստօնի Լամբինական դպրոցը
ուղարկուած էր: Կոյա փափազն էր իրենց
որդին օր մը եկեղեցւոյ ամբիոնի վրայ տես-
նել, այսինքն քահանայ պատրաստել:
Թաէն Բնիւամին լու կուսանէր, բայց հայ-
րը իր զիտաւորութիւնը ծանր կշռելէն
ետքը տեսաւ, որ զայն իրագործելու հա-
մար նիւթական միջոց ունենալու չէ: Այդ
պատճառով ժողովրդական վարժարան
տարաւ զնա, սակայն մանուկը և այն տեղ-
երկար չմնայ և տասնամեայ հասակին ար-
դէն իրբեւ աշակերտ իր հօր ձեռքի տակ
արհեստի մասաւ: Բայց հօր արհեստը մի-
անգամայն չըսիրեց և ուղեց նաւաստի
դառնալ իր բան ուսանելու փափազը դեմք
մասամբ հագեցնելու համար: Ծովը, որոյ
եղեցքին լոյս աեսած, որոյ հասանքը բիւր

անդամ ձեռքերով ձեղքած էր, որոյ առ լիքներու վրայ թեթև մակոյկով արդէն ստէ, որ որսուած էր, չափէ գուրս կը սի բէր և ի սրտէ կը տենչար հեռաւոր տար աշխարհ մղուիլ և տանուիլ նորա կոհաչ ներու վրայ: Բայց այդ փափազին հայրէ վճռողապէս ընդդիմացաւ: Արդին նաւաստիներու ընկերութեան յանձնելը նորա կարծիքով միւնոյն էր, թէ իսպառ վայրնացնել զնա: Աակայն ստիպմամբ ևս որոշեալ գործի հարկադրել չեր ուզեր և կերկնչէր, որ եթէ Բենիամինիր բերմունքներուն յարմար գործ չը գտնէ գուցէ եղբօր օրինակին կը հետևէ, որ նաւով թաքուն ուրիշ երկիր մը փախած էր: Աւստէ գիտութեամբ կը տանէր զնա հիւսներու, տակառագործներու, պղնձագործներու և ուրիշ արհեստաւորներու մօտ, որպէս զիիր համար որոշեալ պարապմունք ընտրէ: Այդ թափառմունքը թէկ հօր գիտած նողատակին չը հասուցին, սակայն և այն պէս շատ օգտաւէալ եղան Բենիամինի հա-

մար: Այդպիսով ես այնքան արհեստներու հմտացայ, կը պատմէ նա, որ ետքը ինձ հարկաւոր եղած գործիքներն ու մեքենաները ինքս իմ ձեռքով պատրաստել կարող էի, առանց ուրիշի օդնութեան,, :

Սինչեւ այժմ Բենիամինի հայրն որդույթարութիւններէն մին անտես թողած էր: Բենիամին վաղուց անտի շատ ջերմ սէր ունէր զրքեր կարդալու: Աօր զրատան մզ եղած մատեանները արդէն ծայրէ ի ծայր կարդացած էր և մանաւանդ երկու գիւք նորա սիրտը միանդամայն գրաւած էին. այս զրքերէն մինն էր Մաթերի շարադրութիւնը ըստ անուամբն՝ "Բարի գործելու միջոյներ" և միւսն էր Պլութարքոսի "Կենսազրութիւնը երևելի անձանց", որ նա եռանդագին ոգեսորութեամբ ու յափշտակութեամբ հետզետէ կը կարդար ու չեր յագենար: Տեսնելով այդ ընթերցասիրութիւնը և այն, որ Բենիամինիր գումարած մանր ստակով միշտ զանազան զրքեր կառնէր, հայրը

վերջապէս վերահասու եղաւ, թէ ինչ կոչ
ման աւելի հակամիտ էր որդին և թէ ինչ
ձամբայ պէտք էր ընտրել նորա համար։
Այդ ընտրութիւնը թիթեցնելու ոչ սա-
կաւ օժանդակեց և այս հանգամանքս,
որ Բենիամինի աւագ եղբայրը Անդիայէն
վերադառնալով նոյն իսկ միջոցին տպա-
րան մը հիմնած էր Քառտօնի մէջ։ Այ-
նուհետեւ նա ասաց ինք իրեն. որովհետեւ
Բենիամինդ այդպիսի բաղձանք ունի զրբ-
քերու համար, թող որ նա գրաշար դառ-
նայ և իր բանասիրական եռանդը յագեց-
նէ. ուսումնական վարժարանները փակ
ֆնացին նորա առջեւ, ով դիտէ, գուցէ և
առանց վարժարանի—միայն գըքեր կար-
դալով ու իր բնատուր քանքարովը օր մը
պիտնական կը դառնայ։

Հօր առաջարկութիւնը գրաշարութիւն
ուսանելու Բենիամին խսկոյն ընդունեց,
տակայն քիչ մը տրտմեցաւ, որ եղբօր տը-
պարանի մէջ պէտք է աշակերտէր, և հիմք
ունէր տրամելու։

Այդ եղբայրը, ջեմս անուն, անգույթ
ու յասկոտ մարդ մ'էր. այդ ապացուցա-
նելու համար բաւական է ասել, որ նա
Բենիամինի ընդունակութեան վրայ հօր
հետ բանակցելու ժամանակ ինը դարրուց
պայման դրաւ եղօր համար և կանոնաւոր
պայմանագիր պահանջեց նորամէն։ Այնու
ամենայնիւ Բենիամին հնագան գեց հօր
կամքին և յանձն առաւ ծանր պայմանը։

Այդ միջոցին նա տասնեւերեք տարե-
կան հասակի մէջ էր։

Բենիամին ի սրտէ հաւանեց գրաշարա-
կան արուեստը և իր ճարտարութեամբ ու
մեղուի աշխատասիրութեամբ շուտով շատ
օգտաւէտ հանդիսացաւ եղբօրը Բայց
սա զգովելին ու բարին ճանաչելու ընդու-
նակութիւն չունէր, այլ աչք մը թերու-
թիւնք դիտելու, և լեզու մը և ելքեմն
այս ձեռք մը, ներելի միսալները ամենա-
կոպիտ եղանակով պատժելու։ Եթէ Բե-
նիամին հաստատուն կամքի տեր չլինէր,
շարաթ մ'անգամ չըր մնար եղօր ձեռքի

տակ. քայլց համբերելով մնաց, որովհետեւ
իր բանասիրական ծարաւը յագեցնելու
աղբիւր մը գտած էր տպարանի մէջ

“Նա բարեկամացաւ զբավաճառ պատաս
կիւներու հետ, որք ընտիր ընախր զբքեր կու-
տայիննորան, և թենիամին ամբով ջերմեկո-
ւեր, երբեմն և զիշերներ բարակ մօմիւաս ջե-
նսատած իր սիրան և հոգին պատուական
զիւք մը կարդալով կը կաղդուրէր և հե-
ղինակի հմուտ առաջնորդութեամբ մինչ
շե առաւուս մտաց աշխարհները թափա-
ռելով շատ անգամ ողջոյն կուապը ար-
ւընջեան լուսոյն։ “Խորա կարօտագին տեն-
շանքն աւասիկ լըման կը հասնէր, սա կը
նաւեր ոգեկան կենաց Ավլիանոսի վրայ և
“արշալուսի արփւոյն մէջ իւր կուրծքը
կը լուանար”։ Այդ կերպով վայելած
զուարձութեան մէջ նա ժամանակ չեր
գտնէր իր արտաքին վիճակի դառնութեան
վրայ երկար մտածելու Կմանն զնման սի-
րի։ Ուսումնուս Խորան անուն կրթուած ած
ժամանական մը, որ սահմալ տպարան կու-

գար, պատաճու շնորհալի աչքերէն ու
բարեհամբոյր կերպատանքէն, — որ այն-
պէս հասկանալի ու քննքոյշ խօսել գիտէր
— զբաւուած, ի բոլոր սրտէ սիրեց զնա
և թոյլ տուաւ որ օգուտ քաղէ իր հա-
րուստ զբաւունէն։

Պակայն կարգալը, կարդալն ու կարդա-
լը ու մանաւանդ անկարգ և առանց մար-
սելու կարդալը շատ երիտասարդներու ար-
դէն մեծ վնասներ բերած է։ Որովհետև
մեր թենիամինը կենդանի առաջնորդ մը
չունէր, ուստի պարտաւոր էր ինք իրեն
օգնել։ “Իմ թնակած քաղաքիս մէջ ար-
ևս մէկ զրասէր երիտասարդ կար Յօվ-
հաննէս Առոլինս անուամբ, որ մոտերիմ
բարեկամն էր։ “Նա և ես ստէպ վիճարա-
նութիւններ կընէինք պէսպէս խնդիրնե-
րու վրայ և շատ մեծ ուրախութիւն կըգ-
գայինք բանականութեան մէջ։ Ի դեպ
ուզեց նկատել, որ այդ տեսակ վիճամի-
րութիւնը դիւրաւ շատ վատ սովորու-
թիւն կը դառնայ ու սահմալ զղուելի կանէ

գայն մարդը, որն որ իր կարծիքը միայն ապերասան հակածառութեասք պնդելու կը ճգնի: — Օր մը կանանց դաստիարակութեան վրայ վէջ բացուեցաւ մեր մէջ. ինսդիրն այս էր, թէ արդեօք պէօք էր կանանց կրթութիւն տալ և թէ արդեօք գիտութիւն սովորելու ընդունակ են: Քոլընս կը հերքէր այդ և կըսէր, թէ ինսդիրը նոցա ընդունակութենէն շատ բարձր է. իսկ ես միանգումնցն հակառակը կը պնդէի, թերես միմայն պայքարելու ախորժակով: Քոլընս ի բնէ ինձմէն աւելի ճարտասան էր, խօսքերը ջրի պէս կը թափէին նորա շրթունքն և ես շատ անգամ կը կարծէի, որ ինձ յազթողն աւելի նորա լեզուանիութիւնն էր, քանթէ փաստերու զօրութիւնը: Մեքբաժանուեցանք առանց միարանելու յիշեալ կէտի վրայ. ուստի ես մաքերս թղթի վրայ անցուցի և օրինակը մաքուր արտագրելով նորան ուղարկեցի: “Եա պատասխանեց, և ես կրկնեցի: Արդէն շատ նամակներ դրած էինք մէկ մէկու, երբ որ

հայրս օր մը թղթերուս վրայ ընկաւ և կարդաց: Կնդրի վերաբերմամբ բան չասեց ինձ, այլ ոճս ուղղեց և յայտնեց, որ ես թէե գրաշարական պարապմունքին շնորհիւ ուղղագրութեան ու կէտադրութեան մէջ զիմագրաւէս գերազանց եմ, սակայն լեզուի գեղեցկութեան և պարզութեան նկատմամբ շատ ստոր, և այդ օրինակով մեկնեց ու հաստատեց: “Եորա նկատողութեանց ծմբարտութիւնը ես ինքս պարզ տեսայ և այնուհետև լեզուիս վրայ աւելի ուշադիր լինելով, ինքս ինձ խօսք տուի ի բոլոր զօրութենէ հոգ տանելու որ ոճս բարւոքի”:

Թերութիւնը ճանաչելէն ու զայն ուղղելու հաստատ վճիռ. մը սահմանելին ետքը, Ըենիամին սկսաւ նպատակին հասնելու պատշաճ եղանակ մ'որոնել և գըտաւ: “Եյդ միջոցին, կըսէ նա, “Ապեկտատատոր” օրագրի մէկ հատորը ձեռքս ընկաւ և ես զայն քանի մ'անգամ զմայլմամբ կարդալով՝ ոճը այնքան սիրեցի, որ նորան նմանել կամեցայ: Եյս դիտ-

մամբ քանի մը յօդուածներ ընտրեցի մէջէն և ամեն մէկի պարունակութիւնը համառօտիւ գծադրեցիւ Խոքը՝ առանց զրի վրայ նայելու աշխատեցայ յարմար բառեր գործ ածելով յօդուածներուն իրենց նախկին ձեւը տալ և իւրաքանչեւր միտք այնպէս բացատրել, ինչպէս որ բնադրի մէջ էր։ Եյու հետեւ Ապեկտատորս բնադրին հետ համեմաս եցի, զրած սխալներս ըստ կարելոյն սրբագրեցի, բայց տեսայ ընդ նմին, որ շատ բառեր չդիտեի և զանոնք պէտք եղած ժամանակին իսկոյն ի կիր առնելու յաջողակութիւն չունեի։ Խնձ կը թուէր, որ այդ պակասութենէն ևս զերծ կը մնայի, եթէ ոտանաւոր զրելու սովորութիւնս շարունակած լինէի, կը թուէր, որ ոտերու և յանդերու համար, որ հաւասար մտքի, բայց տարբեր երկարութեան ու հեշման բառեր միշա ի պատրաստի ունենալու հարկաւորութեամբ շատ հումանուններ սովորած և նոցա առագ կիրառութեան մէջ արդէն բաւակա-

նին մարզուած կրիմնեի։ Եյտէս մոռածերվ՝ Ապեկտատորս վէպերէն մէկ քանինը ոտանաւորի դարձուցի և ապա՝ զանոնք քիչ մը մոռնալոյն ետքը վնրուան յարձակ ոճ փոխարիեցի, աշխատելով որ մոքերուս կարգն ու դարձուածներուս կերպը ըստ կարելոյն բնագրին մօտենայ։ Վերջապէս շաբաթներ անցնելոյն ետքը զրորուածներս նորէն համեմատեցի բնագրին հետ ու թէև վերստին շատ վրիպակներ գտայ, բայց և այնպէս քանի մը մաշք պարագաներու մէջ արած յաջողակ քայլիրէս քաջալերիչ իրաւունք ստացոյ յուսալու, որ թերեւս ժամանակով մայրենի լեզուիս աւելի կը նախելանամ և աւելի մաքուր և հարթ ոճ կունենամ, և այդ քիչ բան չէր պատուասիրութեանս համար։

Եյդ ոտահիւսական փորձերու լուրն օր մը խատասիրտ եղբայրն լսեց և ապա պրեց Բենիամինին, որ երկու հատ ոտանաւոր յօրինէ։ Բենիամին յօրինեց և առաջին ոտանաւորի մէջ, որոյ անունը “Սա-

«արեկութիւն» էր, Առթելակ նաւապետի ու նորա գստեր ծովակուր լինելն ողբաց, իսկ երկրորդին մեջ Թիկ անուն չար աւազակի բռնուլը սարսափելի կերպով նկարագրեց: Ենուհետեւ այս քերթուածներն ոչ թէ միայն ինքն իր ձեռքով տպեց, այլ և փողոցները թափառելով վաճառելու ստիպուեցաւ: Եռաջին ոտանուորը մեծ հաւանութիւն գտնելով հեղինակի եղբօր քսակին համար անօդուտ չըմնաց: "Եյդ քերթուածները", կրսէ Ձրանկին, "թշուառական բաներ էին. բայց այն ժամանակ զնոսա ուղիղ քննելու հնար չունեի և անակնկալ յաջողութենէս զբեթէ կուրանալու վաճակի մեջ էի: Իմ բաղդէս հայրս օգնութեան հասաւ և ոտանաւորներուս քստմնելի թերութիւնքն աչքիս առջեւ զնելով՝ ողորմելի բանաստեղծ դառնալու վիճակին զիս ազատեց": — Ոչ թէ բանաստեղծութեան այլ գործնական իմաստութեան ասպարեզի վրայ շարժելու կոչուած էր նա յաշ-

խարհ, և պէտքէ գոհ լինել, որ իր հօր ազդու բացատրութեամբ ոտանաւոր գրելըն առ միշտ մեկուսի դրաւ:

Իր տասնուուվեց ամեայ հասակին Բնենիսմին զիրք մը գնեց, որն որ սրամիտ կերպով կապացուցանէր, թէ մարդուս կանոնաւոր սնունդը բռւսեզէն պիտի լինի: Նեղինակի փաստերէն համոզուելով պատանին սկսաւ մաածել — "եթէ մարդուարոյր չար ախտերը կենդանիներ սպանելու և ուտելու բարբարոսական սովորութենէն կըծագին, ուրեմն պէտք է իսպառ հրաժարուիլ այդ սովորութենէն", Զեման իր գործաւորները դրացու մը քով կըկերակերի: Եյդ Յնենիամին խնդրեց, որ հարեւանին վճարուելիք գումարի կէսն իրեն յանձնէ ու թոյլաայ որ ուտելիքն ինքը հոգայ: Զեման համաձայնեց: "Եյս պայմանս, կրսէ Ձրանկին, նոր միջոց մը տուաւ ինձ զբեր զնելու ու նաև ուրիշ կողմէն շահուետ եղաւ: Կըրոր եղբայրս միւս մարդոց հետ կէս օրին տպարանէն կըհեռա-

նար, եռ իսկոյն վերոտիշեալ գրքի խրառը
միտքս կըքերէի և կտոր մը հաց և պտուղ,
լորիայի թան և կամ ուրիշ այս ահասակ
բան մ'ուտելով ու վերջապէս վրայէն բա-
ժակ մը ջուր ըմակելով ձաշ կըպայելէի:
Այդ կանէի շատ անզամ ոտքի վրայ կանգ-
նած ու ձախ ձեռքս զիրք բռնած": Քաէն
վերոյիշեալ մատեանի դասերը միանգտմայն
սխալ էին, սակայն և այնպէս մեր պատա-
նին երկար ժամանակ հաւատարիմ ննաց
նորա տուած խորհրդին և վես չը կրեց,
ընդ հակառակն՝ իր խօսքերուն նայելով,
այդ զգաստ ժուժկալութեան արգասիքն
այս եղաւ, որ միտքը պարզուեցաւ և ըմ-
բռնողութիւնն արագացաւ:

Օր մը Բանիամին զարհուրելով տեսաւ,
որ թուարանութեան մէջ շատ տկար է: :
Նորա դպրոցական կրթութիւնը, որն որ
ինչ էս զիտենք միայն երկու տարի աւեած
ու տասնամեայ հասակին աւարտած էր,
գրեթէ ամենեին օգուտ բերած չէր նորան
այդ զիտութեան նկատմամբ: Ուստի պակա-

որ լրացնելու համար նա մէկ թուարանական
հրահանգ զնեց և զայն ինք իրեն դաս
տաղով սովորելէն ետքը, Աղջերի դասա-
դրքի օդնութեամբ երկրաշափութիւն նա
ուսանել սկսաւ: Այդ իսկ ժամանակ նա
կարդաց և Լոկի շարադրութիւնը ։ Յա-
ղաքս մարդկային մասց, և Յատածելու
արուեստը, Փորթ—Աօյալի, կտեսնենք,
որ իր ոգեոր ոննդեան համար միշտ հա-
րուստ սեղան ուներ: Իր ոճին բարուոք
ման վերայ ևս հսկելու չէր մոռնար և այդ
նպատակով անզիքերէն քերականութիւն
մը զնած էր, որն որ վերջարանին մէջ ըստ
եղանակին Առկրատեսի յօրինեալ վիճա-
բանութեան հնարք մ'ունէր: Արայիշետե
հրահանգը Քսենրֆօնի ։ Յիշատակարանք
Առկրատեսի, կոչուած շարադրութեան
վերայ հիմնուած էր, ուստի Գրանկլին իս-
կոյն այդ զիրքն ևս ձեռք բերաւ և զայն
կարդալով միանգտմայն յափշտակուեցաւ,
ինչպէս որ ինքը կը վկայէ: Յիշեալ զոր-
ծին մէջ յառաջ բերուած եղանակը (մե-

թօդը) հակառակորդին բացարձակ դիմա-
զրելու խորհուրդ չէր տար, այլ կըսէր, թէ
պէտք է զնա այն տեղը հասցնել շարունակ
հարցմունքներով, որ վերջապէս ստիպուի
ինքը զինքը ժխտելու ու հերքելու: «Քա-
նի մը տարի հետեւցի այդ մեթօդին,, կը-
սէ Ֆրանկին, սակայն ինքը մեկուսի դրի
և համեստութեամբ խօսելու սովորութիւն
արի: Ոտքերս արտայայտելու ժամանակ
այնուհետեւ չեմ գործածեր, անդարտակոյս
անշառը և այլ այս տեսակ բառեր, որք
կրնային ցոյց տալ, իր թէ կանիսակալ
մաքի մը վրայ խօսութեամբ յամառել
կուզեմ, և սոցա փոխարէն կըսէի — ըստ
ինչ, կաշծեօտ, երևէ նէ այս և այս այս ինչ
հիմամբ այսպէս լինելու է, կամ պէտք է լի-
նի, եթէ որ չեմ սխալեր: Ինձ կըթուի,
որ այս սովորութիւնս շատ անդամ օգուտ
կը բերէր ինձ, երբ որ միտքս ու բիշներուն
պարզելու և կամ իմ կարծեօք շահաւետ
ինքիր մ'առաջարկելու հանգամաք կու-
նեսայի: Եւ արդ՝ քանզի ամենայն տեսակ

խօսակցութեանց զլիաւոր նպատակը՝ բան
ուսուցանել ու սովորել, զուարծանք ու
յորդորանք է, վասնորոյ ցանկալի է ի սրբ-
տէ, որ զգաստ ու բարեմիտ մարդիկ ուրիշ-
ներուն նպաստաւոր հանդիսանալու կա-
րողութիւնին ի զուր չը նուազեցնեն յան-
դուգն ու կամակոր ոճերով ու ձեւերով,
որք գրեթէ միշտ տհաճութիւն կը յարու-
ցանեն և հակածառութեան առիթ լինե-
լով՝ զմեզ այն նպատակներէն կըհեռաց-
նեն, առ որս զիմելու համար մեզ չնորհ-
ուած է խօսելու ձիբըը: Եթէ Ֆրանկ-
ին վերցիշեալ գրքերն ուսումնասիրած
չըլինէր, թերեւս երբէք չեմ հաներ այդ
իմաստուն մտքին:

Եւ ասիկ ընթերցողս այնքան նիւթ ու-
նի, որ գրքոյկիս սկիզբը դրուած հարցից
ինքը պատասխանել կարող է: Ո՞եք աե-
սանք տասնուվեց տարեկան գրաշարի յաղ-
թանակը, որ թերեւս ամբողջ պատմու-
թեան մէջ իր նմանը չունի. լսեցինք, թէ
ինչ գովեսաներ առւին զիանական անձինք

խմբագրական արդիքն մեջ ղրուած շարա-
ղըութիւններուն, մինև տասաց՝ Քոստօնի
այս ինչ երևելին անոնց հեղինակը, միւսն
ուրիշ գուշակութիւն ըթաւ։ Ի՞նչ էր ու-
րիշն այս յաղթանակի պատճառը։ Եր-
դեօք հանձա՞ւ։ — Ե, յդ բաւական չէ։ Քա-
նի քանի մանկունք են աշխարհիս վր-
բայ, որք Ըենիամինէն աւելի հոգեկան շը-
նորհք ընդունած են ի վերուստ, բայց և
ոյնպէս արդիւնք մը չեն բերած։ — Երդեօք։
կանոնաւոր կրթութիւն։ — Տեսանք, որ
ժարժարանի զուող մանուկի համար տաս-
և վեց հասակին արդէն փակուեցաւ առ-
միշտ։ — Երդեօք ընտանեկան փրկարար աղ-
դեցութիւն։ — Տարեբազգաբար այդ կող-
մէն նորան բան չէր պակաէր. բայց մի՞թէ
քիչ օրինակներ կան, որ ամենալաւ ընտա-
նեաց օրհնութիւնն անդամ ունայն կրմնայ-
գաւառիներու համար։ — Եթէ Ըենիամինին
մէկ բան պակասած լինէր, նա ևս այս ան-
դունդի մեջ կրմնար, ուր որ հաղար ու
հազար թշուառական մարդիկ անաւնական

կեանք կրվարեն, և այդ մէկ բանն էր արդի
մաս է աստարելուն նետոն դիմելու աղնին եռաւնդ
և բարի կամ։

Երիտասարդ ընթերցող. Նայիր Ծե-
նիամինի վրայ և չափիր նորանով կամ-
քիդ ուղղութիւնն ու զօրութիւնը։ Աս-
տուծոյ արքայութիւն միայն նաև կրվայելէ,
ով որ մաքուր և հզօր կամք ունի։

“Կամքս է, որ զմեզ մեծ կրնէ և կամ
նոտառու։”

Բ.

ՄՈԼՈՐՈՒԹԻՒՆՔԸ.

Եյժմ պէտք է, որ Գրանկլնի մոլո-
րութեանց վրայ ևս հաշիւ տանք. թէն
ի բոլոր սրտեզնա սիրելով կրցանկայինք
անտես թողնել զանոնք, բայց Ճշմարտու-
թիւնն աւելի կը սիրենք, որին որ ամենքս
հետեւ պարտաւոր ենք։ Տացի այդ-
մանէ մեզ կը թուի, որ անխոհեմ վար-
ուած կը լինէնք, եթէ Գրանկլնի պէս

անձնաւորութիւնը մը միայն մի կողմէն դիտելու ուղենայինք։ Այս ազնիւ մարդու ճշմարտութեան լուսէն երկիւղ չունի, ուստի վատահ ենք, որ չընայելով իր քանի մը թերութիւններուն. նա միշտ կիմանայ գրաւել հոգով իրեն համատիպ անձնանց ուշադրութիւնը և բարի զգացմունք յարուցանել սոցա սրտի մէջ։

Կսկսենք հաշեւն առանց դանդաղելու և գիտենք, որ դժուար չէ լինիլ, քանզի Գրանկիլն իր խոստովանութեամբ ևս մարդիկներուն շահ մը մատուցանելու համար՝ սիսալներն ինքն իր ձեռքով արդէն պարզ գրած է։

Ա երը պատմուած կերպիւ լրագրի համար գրեն առ ժամանակ շարունակելին ետքը Գրանկիլն վերջապէս յայտնեց եղողը, թէ ով եր անձանօթ հեղինակը։ Այս խմանալով Զեմս թէև փոխեց իր կոպիտ զարմունքը, սակայն կարծ միջոցէն յետոյ վերստին սկսաւ առաջուայ պէս ռունօրէն չարչարել զնա, այսպէս որ Բե-

նիամին շատ անգամ հօր առջե գանգատելու ստիպուեցաւ և վերջապէս իր ճընշողական վիճակին աւելի երկար համբերել չըկրնալով՝ վճռեց որպէս և իցէ ազառուելու եղօր ձեռքէն։ Իայց ինչպէս, պայմանագրի տակ ստորագրուողը միթէ ինքը չէր։

Այդ միջոցին լրագրի յօդուածներէն մին կառավարութեան տհաճութիւնը յարուց։ Զեմս Գրանկիլն՝ իրրև տնօրէն խմբագիր դատաստանի կանչուեցաւ և մէկ ամիս բանտ նստելու և լրագիրը դադրեցնելու պատիժ ստացաւ։ Այս վերջին վճիռս զնաց առնել ուղելով եղբայրները որոշեցին, որ լրագիրն այնուհետև նոր անուամբ լոյս տեսնէ և Բենիամին խմբագիր դառնայ։ Այսկայն այս տեսակ որոշում մէկ լրումն ածելու համար նախ պէտք էր, որ Բենիամին Գրանկիլն գործաւոր աշակերտի անունը դատաստանի զիտութեամբ վերցնէր իր վրայէն և եղբայրը յօժարութիւն տար ջնջելու մեզ յայտնի պայման։

Ները: Յեմս կատարեց այդ, բայց այնուու
ամենայնիւ հին պայմանագրի շահէն զըրկու-
ուել չուզելով՝ յորդորեց իր եղբայրը որ
նոյն տեսակ ուրիշ նոր թուղթ մը ստո-
րագրէ, և խոստացաւ թաքուն պահել
զայն: Խոհեմութիւնը կը պահանջէր, որ
գէթ այսպիսի հանգամանքներու մէջ ա-
ւագ եղբայրն աւելի սիրով կամ հեղու-
թեամբ վարուէր Ըենիամինի հետ: Բայց
ոչ. բանտէն դուրս ելածին պէս, նա վե-
րստին նորոգեց անիրաւ հարստահարու-
թիւնը և վերջպահէս բանն այն տեղ հա-
սաւ, որ Ըենիամին՝ երբոր Յեմս օր մ'
ամենաչնչն պատճառով գազանի պէս
զայրացած զնա պայտել կուզէր, տպա-
րանը միանգամայն թողար ու հաստատ
վճռեց երբէք այն տեղ չվերադառնալ,
ինչ և պատահէր: Թէկ նոր ստորագրած
պայմանագիրը որոշ բարոյական պարտք
մը կը զնէր նորա վրայ, սակայն իսպառ
անտես թողաւ այս կէտը և միայն այս
հանգամանքին պապաւինեց, որ եղբայրը

կարող չէ դատաստանի զիմել և նորամեն
օրէնքով բան պահանջել, եթէ ինքը նախ
և յառաջ պատիժ կրելու չուզենայ: Իրաւ-
է, բայց արի տես, որ Յեմս՝ ծնողներու
ոչ հոգսին և ոչ վշտին նայելով՝ իսկոյն
հնար գուաւ նորան վնասելու և այս ըրաւ,
որ Ըենիամին Բոստոնի տպարաններէն
ոչ մինի մէջ գործ ստանալ չըկրցաւ:
,,Եթէ այդպէս է, ուրեմն թողնենք Բոս-
տոնը, ըստ դառնութեամբ սրտարեկ պա-
տանին և ունեցած դրամը գումարելին ետ-
քը՝ առանց ծնողներու գիտութեանու կա-
մաց՝ որոշեց նաւով ։ Նիւ - Յօրկ գնալ ուր
որ նա աշխատանք մը գտնելու կը յուսար:

Եյս ծամբորդութեան մասին հետեւ եալը
կը պատմէ նա : „Օդի հանդար-
տութեան պատճառով օր մը նաւը կանգ
առաւ և նաւաստիքը սկսան ձուկն որսալ:
Ես դեռ հաւատարիմ էի շնչաւոր և կամ
անշունչ էակ չուտելու ուխտիս և հետե-
ւաբար ձուկ բռնելը՝ առանց պատճառի
գործուած սպանութիւն կը համարէի.

քանզի խեղձուկ կենդանին անզօր էր ում և իցէ զրկանք կամ վաս հասցնելու։ Բայց պէտք է խոստովանիմ, որ առաջ չափազանց իսկ սիրող էի և երբ ամանի միջէն իր պատուական հոտը գէպի ինձ բուրող տապկուած ձուկ մը տեսնէի՝ ախորժակս և ուխտս սաստիկ կըթշնամանային։ Այսուամենայնիւ չէի ուտեր ։ Բայց օր մը կտրած ձուկի վրայ նայելով տեսայ, որ փորին մէջ փոքրիկ ձուկ մ' ունէր։ „Այ անիրառ, ըսի ես այն ժամանակ, — եթէ դու ուրիշ ձուկ կուտես, ուրբթն ինչո՞ւ մեք ևս քեզ չուտենք։“ Այդպէս ֆրանկին կը հաշտուի մանդէն կերակուրներու հետ և կրսէ ինք իրեն. „Տես, թէ ի՞չ ձեռնտու է ճանաւոր կենդանի լինելը, որն որ ամեն բանի համար հաւանական պատճառ մը բերել գիտէ։

Աս կը հասնի յաջողութեամբ իր երկրէն երեք հարիւր անզիւկան մղոն հեռու տրուած վիւ-Յօրկ քաղաքին, սակայն չի կրնար գործ ստանալ հոն բնա-

կող միակ տապագրին մօտ։ Բայց սա խոր հորդ կուտայ, որ Ֆիլադելֆիայ նաւէ, յուսով որ իր որդին — որ նոյնպէս տպարանի տէր էր այն տեղ — թերեւս կարող լինի պարապմունք մը գտնել նորա համար։ Ծովային ծամբու վրայ սաստիկ անձրեի ու վտանգաւոր ալեկոծութեան ենթարկուելին ետքը՝ Բանիրամին կուգայ Ֆիլադելֆիայ։ Այսպէս կը նկարագրէ իր առջի անզամ հոն մտնելը։ „Ես եկայ գործափարի հալաւով, իսկ նոր շորերս վերջը գալու էին նաւով։ Այս գործաւորի հագուստս աղտօտ էր և ջերերս հին շապիկներով ու գուլքաներով լիքն էին։ Վարողջ քաղաքին մէջ ոչ մի հոգի չի ծանչնար և բնաւ չի գիտեր, թէ ուր տեղ օթեան պիտի գտնեմ։ Եկած նաւակիս վրայ լոյս է լցու առանց քնանալու ուրան մ' ուտելու օգնած էի նաւաստիներուն, ետքը բաւականին երկար ծամբայ ոտքով անցած էր և այժմ վերջապէս շափէ դուրս քաղց և յօդնութիւն կըզգայի։

Բաղրը առ ձեռն գումարս մէկ հոլանդական թալեր ու մէկ շելլենգ էր: Ը իլլինդ ները տուի նաւապետին, նա չէր ուզեր ճամբու ստակ առնել ինձմէն, ըստ որում թիակելու օգնած էի. բայց ես խնդրեցի և նա վերջապէս ընդունեց: Խըբեմն մարդս քիչ ստակով աւելի առատաձեռն է քան թէ շատով, վասն զի այդ կերպով իր չքաւորութիւնը թաքցնել կուզէ: — Վէքերս մտադրութեամբ յաջ և յահեակ դարձնելով՝ մտայ փողոց մը, ուր որ տղայ մը տեսայ ձեռքին մէկ հաց բռնած: Հարցուցի, թէ որ տեղ գներ է զայն և շիտակ գնացի նորա ցոյց տուած փուռը: Ուզեցած ըլիթու չկար այն տեղ. ուստի երեք վեհնանոց սպիտակ հաց մը խնդրեցի, բայց այս գնի ևս հաց չկար: Ա երջապէս պահանջեցի, որ ինչ տեսակ հաց և լմնի տան ինձ երեք վիճնսի և երեք հատ ահազին նկանակներ ստացայ: Այս էժանութեան վրայ զարմանալով և գրպաններուս մէջ արձակ տեղ չունենալով՝ նկանակներէն մին մէկ

թեկիս տակ, միւսը միւս թեկիս տակ դրի և երրորդն ու տելով գնացի իմ ճամբաս և կրկին եկայ նաւակը ջուր խմելու համար: Հացերէն մին ուտելէս ու վրայէն ջուր ըմպելէս ետքը լիովին հագեցայ և միւս երկու նկանակներս կնոջ մ' ու նորա որդուն տուի, որք նաւակով եկած էին մեզ հետ և աւելի հեռու պիտի նաւէին: Այսպէս ոյժ առնելէն վերջը նորէն վերադարձայ փողոց, որն որ այժմ լիքն էր վայելու հագուած մարդիկներով, որք ամենքը միենոյն ճամբան կընթանալին: Մտայ բազմութեան մէջ ու նորա ճամբան բռնելով եկայ վերջապէս կուաքերներու ժողովարանը, որն որ հրապարակի վրայ էր: Այս տեղ ես ևս ուրիշներու պէս տեղ մը ըրունեցի ինձ համար և բաւական ժամանակ չորս կողմն նայելէս ետքը, տեմնելով որ ոչ ոք ինձ բան չի ասեր և կամ ասել չի ուզեր, յոդնութենէս ու ձանձրութենէս այնպէս առողջ ու քաղցր քնոյ մէջ ընկայ, որ ժողովի վերջանալն անգամ չէի լսեր, եթէ

բարեսիրտ ոմն զիս հուշիկ չը զարթնեցնէր։
Ուրեմն Առւաքերներու տաճարն էր այս
տունը, ուր որ ես առաջին անգամ ոտք
կոխեցի ու ննջեցի Ֆիլադելֆիայի մէջ, ...

Տպարանի տէղը, որին որ Գրանկլին
ուղարկուած էր, ինքը չը կրցաւ գործ տալ
նորան, այլ բարեկամցուց զնա իր ընկեր
Քայմերի հետ և սա վերջապէս պարապ-
մունք գտաւ նորա համար, թէեւ սակաւ
ուռնկով։ Եւյս միջոցին Բենիամինի ողնո-
դուկն ու գոյքը եկան և նա մաքուր շորեր
հագնելու զուարձութիւնը կրկին ստանա-
լով՝ մտաւ մարդոց մէջ և բարեկամցաւ
քանի մը գրասէր երիտասարդներու հետ,
որոց ընկերութեան մէջ բաւականին քաղ-
ջըր ժամեր կանցուցանէր։ “Եղն իսկ մի-
ջոցին ծանօթացաւ նաև պարկեշտ ու նո-
րահասակ օրիորդի մը հետ, որոյ անունը
Քիդ էր, և նորա աջը խնդրելու փափագ
զգաց իր սրտին մէջ։ Եռաջուայ պէս չա-
փաւոր ու շատ աշխատասէր կեանք վարե-
լով՝ փոքր ժամանակին ետքը քանի մը

կաոր ոսկու տէր դարձաւ և երբէք նեղու-
թիւն կամ վեշտ չը քաշեց օտարութեան
մէջ։ Յաւալի է միայն, որ այդ միջոցին
հօր տունը չէր յիշէր և լուր մ' անգամ
չէր յայտնէր ծնօղներուն։ Հանգամնակր-
ներու բերմամբ նորա ազգականներէն մին՝
Ուորերթ Հոլմ, որ առեւտրական նաւի
մը տէր էր, իմացաւ որ Բենիամին Ֆիլա-
դելֆիայ է և նամակի միջնորդութեամբ
ծնօղներու և եղաօր դէմ արած անիրտ-
ութիւնը նորա միտքը բերելով՝ ինդրեց
որ տուն վերադառնայ։ Գրանկլին իսկոյն
մտերմաբար պատասխանեց ազգականին
ափսոսալով, որ չի կրնար ինդիրն կատա-
րել և ապա ընդարձակօրէն պատմեց, ինչ
որ պատահած էր իր ու եղաօր մէջ։ Եզ-
գականն ընդունեց Բենիամինի գրութիւնը
“Նիւ Քասթլ” նոյն իսկ բոպէին, երբ որ
Աիր Ալլիբամ Քայթ անուն գաւառա-
պետի հետ միասին նստած էր։ Թէեւ նա-
մակի միտքը բացասական էր, բայց ձեփ ու
փաստաբանութեան կողմանէ տարազա-

գործ մը լինելով՝ անչափ ուրախալի տպաւորութիւն արաւ չովմի վրայ, որ սա իսկոյն ցոյց տուաւ զայն գաւառապետին, որն որ նոյնպէս զմայլած մնաց նամակէն։ Ինքնիամինի 18 տարեկան լինելն իմանալով՝ գաւառապետն աւելի զարմացաւ նորա քանիքարի վրայ և յայտնեց, թէ պէտք է անշուշտ օգնութիւն մը հասցնել այսպիսի ընդունակ պատանւոյն և ասաց, թէ ի սրտէ յօժար իր աջակցութեամբ տպարան մը հիմնել տալ նորան և օգնել, ինչքան որ կարելի լինի։

Այս անցքի վրայ Բենիամին քնաւ տեղեկութիւն չուներ, վասն զեւով վերջը յայտնեց նորան, ինչ որ մեք վերը պատմեցինք. սակայն անոր հետեանքը իսկոյն զդալու էր։ Կակից քանի մը օր զինի, այն ինչ Ինքնիամին և Քայմեր պատուհանի մօտ աշխատելու վրայ էին՝ յանկարծ տեսան, որ գաւառապետն ու Ֆրենչ անուն մեծաւորը փառաւոր զգեստ հագած փողոցէն անցնելով՝ շիտակ իրենց տպարա-

նին կմօտենան; Քայմեր կարծելով թէ այս այցելուքը զինքը տեսնել կուզեն ու թերեւ ապսպրելու բան մ” ունեն, իսկոյն աճապարեց և աստիճաններէն վայր վազելով՝ բաց արաւ տան զուոր հիւրերու առջեւ։ Գաւառապետը Ֆրանկլինի մասին հարցուց, նորագ ործարանը մտաւ, քաղցրութեամբ հետը զբուցեց և վերջապէս հրաւիրեց, որ բաժակ մը գինի ըմսին դայ իր հետ։ Ա սեմաշուք պարզնի զիջողութեան ու մեղմութեան վրայ պազշած Փրանկլին նոր շորեր հագաւ, և փոքրիկ ընկերութիւնը գնաց գնետուն։ Հոն մազգէյուա գինու բաժակն առջեւը դրած՝ գաւառապետը խորհուրդ տուաւ Ֆրանկլինին, որ տպարան մը հիմնէ իր բնական քաղաքին մէջ, խոստանալով ամբողջ գաւառի տպագրելիք բաներն այժմէն իսկ իրեն կապահովացնէ։ Խըրոր Փրանկլին յայտնեց, որ տպարանի հիմնարկութեան համար պէտք եղած միջոցներն իր հօրէն ստանալու յոյս չունի, նա մանաւանդ որ

դաղտնի փախստովն նորա սրտին վերք ու
միշտ պատճառած էր, գաւառապետը քա-
ջալերեց զնա և ասաց, որ ինք իր ձեռքով
յորդորական նամակ մը կը գրէ հօրը և
ձեռնարկութեան անտարակուսելծ օգուտ-
ները պարզ ցոյց կտայ նորան:

Այս խօսակցութենէն ետքը Գրանկին
ճամբայ ընկաւ դէպի տուն: Հայրը սրտի
մոօք ընդունեց զնա, սակայն յօժարու-
թիւն չը տուաւ վերոյիշեալ գործին և իր
ուրախութիւնն ու շնորհակալութիւնը
յայտներով գաւառապետին որդուն ցոյց
տուած բարեկամութեան համար, գրեց,
թէ իբրև մեծ ընտանեաց հայր անզօր է
տպարանի շինութեանը կարեոր եղած
գումարը մէկ որդուն յանձնել, նա մա-
նաւանդ որ սա դեռ տասնեւութ տարեկան
և ուրեմն տակաւին անփորձ պատանի մը
էր:

Գրանկին չէր ուզեր եղօր այցելութիւն
մը չարած հայրենիքը թողնել: Այս
պատճառով ես զնացի տպարան. կըսէ նա.

այժմ աւելի վայելու հագուած էի, քան
թէ առաջ երբոր նորա մօտ էի, վրաս ժա-
մացոյց մը կախուած էր և քսակիս մէջ
զրեթէ հինգ ստերլինգի չափ ազնիւ դրամ
կար: Խղբայրս շատ քաղաքավարի չընդու-
նեց զիս և ոտքէս ցցուխս վրաս նայելէն
ետքը իր գործը հանդարտ շարունակեց:
Գործաւորները մօտեցան ինձ և սկսան
հարցնել, թէ ուր էի և ինչ երկիրներ տե-
սած էի: Պատասխանելով նոցա հարցե-
րուն, չափէ գուրս գովեստներ կարդացի
Ֆիլադելֆիայի վրայ, պատմեցի, թէ ինչ
եւ ջանիկ կեանք կը վարեն այն տեղի մար-
դիկն և յայտնեցի որ կը կին հօն վերա-
դառնալու եմ: Աշխատաւորներէն մին կա-
մեցաւ իմանալ թէ ինչ տեսակ էին հոնի
դրամները: Այս լսելով իսկոյն մէկ բուռն
արծաթ հանեցի գրպանէս և ցոյց տուի,
նոցա համար այդ չըստեսնուած բան էր,
որովհետև Բոստոնի մէջ սովորական դրա-
մը թղթի էր: Այսուհետեւ զանց շատի
ժամացոյցս ևս յերեւան հանելու, բայց

տեսնելով որ եղբայրս դառն ու դժգոհ լինելէ չեր դադարեր, գործավարներուն մէկ սուերլինդ ընծայեցի և իսկոյն դուրս ելայ տպարանէն: Խղբայրս շատ բարկացած էր այցելութեանս վրայ, և երբ մայրս հաշտութեան վրայ խօսելով մեզ վերստին միաբանել կը ցանկար, պատասխանեց թէ ևս այն աստիճանի վիրաւորած եմ զնա գործաւորներու առջև, որ չի կրնար երբէք զայն մոռնալ ու հետո հաշտուիլ սակայն կը սխալէր այդ կտորիս մէջ":

Տան բարեկամները կուզէին փոխել հօր միտքը, բայց նոցա ջանքը ի զուր կորաւ: "Օերունին կը սէր, թէ յիմարութիւն է պատանու մը ձեռքով այնպիսի մեծ ձեռունարկութիւն սկսելը. "Թող այլ ևս երեք տարի զարգանայ և այնուհետեւ արդէն զայ հետո խօսելու գործի մասին" — կը սէր նա: Ավակայն և այնպէս ուրախ էր, որ Խենիամին գեղեցիկ հասակ առած էր և գաւառապետի նման կարող մարգու բարեկամութիւնը կը վայելէր: "Կարունակիր, որդեակ,

աշխատասիրութիւնդ, ասաց նա վերջին անգամ. այդպիսով քանի մը ժամանակէն ետքը գուցէ ինքդ առանց ուրիշի օդնութեան կարող կը լմնիս տպարան մը հիմնելու":

Եւ այդպէս Գրանկիլին իր յուղարկաւորութեան նպատակին չը հասած վերադարձաւ դէպի յետ. բայց տրտում չեր, ըստ որում այս անգամ ծնօղական օրհնութեամբ կը հեռանար հայրենի տունէն: Ճամբու վրայ նորա նաւակը կանդ տուաւ. "Եիւ - Փոռութ և Գրանկիլին այցելութեան գնաց եղբայրներէն մինին, որ հոն կապրէր և շատ գգուանօք ընդունուեցաւ նորա տան մէջ: Եյդ եղօր ընկերը - Վերոն անուն պարոն մը բարեկամնցաւ Գրանկիլինի հետ և նորա Գիլադելֆիայ գնալն իմանալով, մուրհակ մը յանձնեց նորան և խնդրեց, որ անոր զօրութեամբ Գիլադելֆիայի մէջ իրեն վճարելիք 36 ֆունդ ստերլինգ պարտքը ստանայ և դրամը մօտք պահէ, մինչև որ լուր չստանայ զայն Խիւ-

Փոռթ ուղարկելու։ Բենիամին սրտի մաօք
յանձն առաւ կատարել բարեկամի խնդի-
րը։

Ախւ - Յօրքի մէջ սա հանդիպեցաւ
Քողինսին, որոյ հետ ինչպէս որ ընթեր-
ցողն կը յիշէ, առաջ նա շատ կը վիճէր և
որ այն ժամանակ զիտութեամբ ու յա-
ջողակութեամբ նորամէն բարի էր։ Քող
լինս կուզէր այնպէս Գիյադելֆիայ գալ,
այն տեղ իր բազը փորձելու, և միացաւ
Գրանկլինին, որ մինչև այժմ դեռ ջերմ
սիրո պահած էր մանկութեան ընկերի
համար։ Ճ'ամբու վրայ իմանալով, որ
Քողինս միանգամայն դրամ չուներ ու
միայն ընկերի վրայ ապաւինելով յուղի ե-
լած էր, Գրանկլին իսկոյն օգնութիւն ա-
ռաջարկեց նորան, սակայն վատն այս էր,
որ ընկերին տրուելիք ստակն այն գումա-
րէն հանելու էր, որոյ վրայ միայն Ա ե-
րոնը կարող էր իշխանութիւն բանեցնել։
Մէկ բան չը հանեց Գրանկլին ընկերին
վրայ։ Եթե առեարական գործակատար

այլ և այլ ճամբորդութիւններ անհեղով՝
Քողինս համեմատաբար կարծ միջոցին
արդէն խմիչքի սովորած էր։ Գիլադելֆիայի
մէջ նա չկրցաւ գործ գանել, թերեւս այս
պատճառով որ կարմրած երեսն ու շունչը
արդէն առջեւէ մասնողաբար կիմացնեին
նորա ինչ տեսակ մարդ լինելը, և այդպէս
օրէ ցօր և շաբաթէ ի շաբաթ Գրանկլինի
քսակէն կապրէր և ընկերի բարի կամքը
շարագործելով նորամէն մեծ ու փոքր գու-
մարներ առնելէ չեր դադարէր։ Այդպէս
Ա երօնի ստակն հանուած գումարի թի-
ւը քանի գնաց կը շատնար և վարանեալ
Գրանկլին չեր զիտէր, թէ ինչ պէտք է
անէ, եթէ որ յանկարծ ստակն իրմէն պա-
հանցելու լինին։

Գիլադելֆիայ հասնելին ետքը Գրանկ-
լին յայտնեց գաւառապետին, ինչ որ լսած
էր հօրէն։ Որովհետեւնա չի ցանկար Զեղ
օդնել, զէ՞հ, ուրեմն ես կօգնեմ Զեղ՝
ըստ գաւառապետը։ Այդ շատ լաւ խօս-
քեր էին, սակայն դժբախտաբար գաւա-

ռապետն այն տեսակ մարդոց կարգին էր, որք բարեսրառութեամբ թէև շատ բան կը խոստանան, բայց բնաւ չեն մտածեր, թէ արդեօք զանոնք կարող են իրաւ կատարել: “Ես Ձեզ ստակ կուտամ”, նոյնագէս և նա մակներ” — ասաց նա Գրանկինին, գնացէք Անզլիայ և բերէք այն տեղին ինչ որ պէտք է տպարանի համար: Գնելու բաները մասմբ նազտ ստակով կառնէք և մտսամբ նամակներուս զօրութեամբ — վերեսիայ և մնացեալ պարտքը հետզհետէ կը վճարենք”:

Յօւղի ընկնելին առաջ Շենիամին ուղեց ամուսնանալ չքնաղ Ոիդ օրիորդի հետ. սակայն մայրը այս ամուսնութեան նկատմամբ հօր հետ ձայնակցելով ըսաւ, թէ տասնեւթէ տարեկան մարդ մը տակաւին գրեթէ մանուկ է և որոշեց, որ սպակը յետաձգուի գոնեա մինչև Շենիամինի վերադառնան ու տպարանի հիմնովը: Շենիամին հնագանդեց սիրելի մօր կամքին և Ոիդ օրիորդի հետ — ինչպէս որ

ինքը կը վկայէ — ժառայլ խոստմունքներ առելին ետքը ձամբայ ընկաւ գէպի Լոնդօն:

Գաւառապետի ինչ տեսակ մարդ լինելը Գրանկին նախ և առաջ Լոնդօնի մէջ իմացաւ, նորան նամակներ արուած էին, դրամը ետքը պիտի գար գաւառապետի խոստմամբ: Բայց դրամը չեկաւ, իսկ նա մակները միանդամայն օգուտ չը բերին: Եւ այդպէս յենիամին ապրանք գնելու տեղ ստիպուեցաւ այժմ գործ որոնել, որպէս զի օրուայ հացի կարօտ չմնայ: “Ես գնաց Փալմերի տպարանը, որ Լոնդօնի մէջ նշանաւորներէն մինն էր, և ընդունուեցաւ այն տեղ: Երկար ժամանակ Փալմերի մօտ աշխատելին ետքը, աւելի լաւ պաշտօն գտաւ Վաթսի տպարանին մէջ ուր որ դրեթէ յիսունի չափ գործաւորներ կը բանեին: Բոլոր այս գործաւորները սաստիկ արրեցող էին: Երբ նոքա տեսան, որ Գրանկին միայն ջուր կը մզէ վրան ծաղը անելով “Ամերիկային ջրամարդ” մականուն առւին նորան և բնաւ չեն կարծէր,

որ նորա ջղերուն մէջ ևս կարող է զօրութիւն գտնուիլ։ Այս պատճառով նոքա սաստիկ զարմացան, երբոր տեսան, որ Գրանկին իւրաքանչիւր ձեռքի մէջ մէկ մէկ ձեւ բռնած աստիճանի վրայ կը բարձրանար, այն ինչ նոքա երկու ձեռքի կարօտ էին միայն մէկ ձեւ վերցնելու համար։ “Ամամուլի գործակիցն, կըսէ Գրանկին, ամեն օր մէկ բաժակ գարեջուր կը մղէր նախաճաշկին առաջ, մէկ բաժակ նախաճաշկի և ճաշի մէջ տեղը, մէկը ճաշին, դարձեալ մէկն երեկոյեան վեց ժամին և վերջապէս այլ ևս մէկը ընթրիքին։ Այս սովորութիւնը զզուելի թուեցաւ ինձ, իսկ նա կը վկայէր, թէ այդ բոլոր գարեջուրը նորան անշուշտ հարկաւոր է աշխատելու ոյժը չը կորցնելու համար։ Աշխատեցայ բացատրել նորան, թէ գարեջուրի տուած ֆիքական զօրութիւնը յառաջ կուզայ միայն գարիի ամուր մասերէն, որք ջուրի մէջ լուծուելով՝ գարեջուր կը դոյացնեն, և թէ մէկ փենիանոց հացի մէջ աւելի շատ

ալիւր կայ և որ ուրիմն եթէ նա այս հացըն ուտէ ու վրայէն բաժակ մը ջուր ըմակէ աւելի զօրութիւն կըստանայ, քանի թէ մէկ սափոր գարեջրէն։ Ուակայն եզրափակութեանս չընայելով՝ գործաւորն իր սովորութիւնը կը շարունակէր և ամեն շաբաթ օր չուս կամ հինգ շելլենգ կը վատակը միայն փորթերի համար։ “Աորա պէս գապրէին և միւս թշուառականները, որք մինչեւ ի մահ աղքատութեան և կարօտութեան մէջ կը մնային”։

Յարատե աշխատասիրութեամբ ու մանաւանդ գրաշարութեան մէջ ցոյց տուած գերազանց յաջողակութեամբ Գրանկին տպարանատիրոջ սերն այնպէս զրաւեց, որ սա բոլոր շտապողական գործերը—որք և սովորաբար աւելի թանկ կը վարձատըրուէին—նրան յանձնեց։ Ինչպէս որ յառաջ Քոլլինս, նոյնպէս և այժմ Ուալֆ անուն մարդ մը ձանձրոյթ կուտար նրան։ Ա երագարձնելու վրայ իսպառ փոյթ չը քաշելով և հետզհետէ ստակ կառներ

Գրանկլինէն և պարտքի թիւը արդէն 27
ֆունթի հասուցած էր: Օր մը Առաջ հե-
ռացաւ 1 ոնդոնէն ուրիշ տեղ պաշտօն
որոնելու համար. նորա ամուսինը տունը
մնաց և Գրանկլին աւելի խնամ՝ իր քաշէր
վրան, քան թէ անկու պատշաճ էր: Տուն
վերագառնալով Առաջ սկսաւ հայհոյեր
Գրանկլինի դէմ և յայտնեց, թէ շնորհա-
կալութենէ ազատ կը համարէ իր անձը—
այսինքն թէ պարտքը չե վճարեր: Այդ
վճռի վրայ նա հաստատ մնաց և Գրանկ-
լին զբեթէ ոչ մէկ փենի յետ չըստացաւ:

Բայց ի՞նչ դրութեան մէջ էին նորա
յարաբերութիւնքն Ռիդ օրիորդի հետ:
Այս օրիորդը նորա վերադարձն ի գուր
սպասելին ետքը, տեսնելով որ նա մէկ
տարիէն աւել բնաւ նամակ չե զրեր, կար-
ծեց թէ Գրանկլին զնա արդէն մոռցեր ու
մերժեր է: Այդ միջոցին մէկ ուրիշ մարդ
խնդրեց նորա աջը և Ռիդ՝ մօր յորդո-
րանքին լսելով յօժարութիւն տուաւ և
ամուսնացաւ մարդու հետ:

Գրանկլին արդէն համարեա մէկ տարի
ու կէս է որ 1 ոնդօն էր և իր արհեստի
մէջ բաւականին մեծ յառաջաղիմութիւն
արած էր: Երեկոյեան ազատ ժամերը այ-
ժըմ ևս ընտիր զբքերու ընթերց անութեան
կը նուիրէր և կամ ժրաջաւ: Երիտասարդ-
ներու ընկերութեան մէջ կանցուցանէր:
Օր մը նա բարեկամացաւ Դինհամ վա-
ճառականի հետ և սա համակրութիւն
զգալով դէպի Գրանկլին, խնդրեց որ գոր-
ծավարի պաշտօն ընդունէ իր մօտ: Դին-
համ ազնիւ ու բանիմաց վաճառական էր
և կուզեր հարուստ ապրանք տանել Գի-
լադիլֆիայ, բացի լաւ ոսթիէն որ նա որո-
շած էր Գրանկլինի համար, նա խոստա-
ցաւ նոյնպէս որ քանի մը ժամանակէն յե-
տոյ ինքնակախ առուտուր սկսելու կօգնէ
նորան: Այդ գործի վրայ ունեցած բարի
յոյսերէն ու վերջապէս հալրենեաց անձ-
կալի կարօտէն զրգուելով, Գրանկլին
յանձն առաւ Դինհամի առաջարկութիւ-
նը և առաջուայ պաշտօնի հրմժեշտ տա-

լով՝ սկսաւ այլ և այլ տպրանք գնել իր
նոր տիրոջ հետ:

Բայց ուրիշ տեսակ հրաժեշտ մ' և ո
առած էր նա այդ միջոցին: Եթ անցեալ
արարմունքները զիաելու ժամանակ քա-
նի գնայ աւելի պարզ կը տեսնէր, որ խըդ-
ճի հաւանութիւն չեր կարող շնորհել իր
ամեն մէկ արարմունքին, նոյնպէս և ծա-
նօթ երիտասարդաց վրայ մտածելու ժա-
մանակ, մինչդեռ ոմանց սկզբունքներուն
յարգանք տալու հարկ կը համարէր, միւս-
ներունը նորա զզուանքը կը յարուցանէին
և անարդ կը թուեին աչքին: “Աս որոշեց
այնուհետեւ արդարութեան և հաւատար-
մութեան ձամբան ընթանալ, և մէք գեռ
առիթ կունենանք տեսնելու, որ նա իբրև
ազնիւ մարդ, որ նա իրաւ հաւատարիմ
մնաց այս ուխտին: Եւ այսպէս՝ մոլորու-
թեանց ժամանակն անցաւ ու գնաց:

ՎԵՐԱԹԵՒՈՒՄՆ

Գեղեցիկ և իմաստուն կերպով քննու-
թեան կենթարկէ ՈՒգիւելթ Ֆրանկլինի
մտաւոր զբաղմունքը այդ միջոցին: “Տի-
եղերքը—կըսէ նա - օրէնքներու ներդաշնա-
կութիւն է: Ակսեալ աստղերէն, որք միշ-
լիօնաւոր տարիներէ ի վեր անսահման տա-
րածութեան մէջ ըստ օրինաց ծանրու-
թեան կըշընէն և ամենայն իրերու բար-
ձրագոյն Ըլարչէն մէկ անգամ ընդունած
հզօր զարկին և զգողական անյեղլի զօրու-
թեանը կհետեւն, մինչեւ տերևներու վե-
րայ երերազով ըոսկեական կեանք վարող
միջատները—ամենայն մարմին, ամենազն
էուկ որոշեալ և հաստատուն օրինաց կը-
հնազանդին: Եյո՝ Վստու ծոյ խորագէտ
իմաստութեամբ սահմանուած, նորա բա-
րութեամբ ի զործ դրուած և նորա ար-
դարութեամբ պահպանուած սքանչելա-

Հրաշ օրէնքներն ամենակատարեալ շարս
ժողութիւն յառաջ կրերեն առաս ու
հարուստ կեանք կըծաւալեն և դաշնակա-
ւոր կարգ կըհաստատեն տիեզերաց մէջ :
Վարդս բոլոր արարածներէն ամենաբա-
զադրեալն ու վսեմազոյնը, որ այս օրէնք-
ներուն ներքեւ և ոչ թէ վրան կանգնած
է, որ զանոնք մտքով ըմբռնել կարող է,
բայց փոփոխելու անզօր, որ մարմնոյ նիւ-
թական և էակաց կենդանի օրէնքներուն
ենթարկեած է, — Վարդս իմացականու-
թեան հոյակապ ձիրքը, ազատութեան
գեղեցիկ իրաւունքը և արդարութեան
սատուածային զգացմունքն ունի իր մէջ :
Իրեւ բանաւոր և իմացական էակ՝ պէտք է
որ նա ճանաչէ տիեզերաց օրէնքները, իրեւ
արդարութիւն զգացող՝ պէտք է որ հը-
նազանդի անոնց և քանզի ազատ է, պէտք
է որ պատիժ ընդունէ, եթէ խոտորի այս
օրէնքներէն, ըստ որում կարող չ' խան-
գարել զանոնք ոչ ֆիզիքական և ոչ բա-
րոյական սահմաններու մէջ՝ առանց պա-

տիժ կրելու իր տղիտութեան և կամսիսա-
լի համար: Առողջութիւն ու հիւանդու-
թիւն, երջանկութիւն ու տառապանք,
խնդութիւն ու վիշտ — այս ամենը կախ
ուած են կամ նորա փոյթեռանդ ջանքէն,
որով վերոյիշեալ օրէնքներուն կըհետեի
և կամ վտանգաւոր և անփոյթ յամառու-
թենէն, որով անոնց դէմ կանիբաւէ:

Գրանիլին հասկցաւ այս: Տեսնելով աշ-
խարհիս կարգը, նա ամբարձաւ դէպի անոր
Երարիչն, ձանաչեց զբանուած և հաս-
տառուն կայան տուաւ նորան իր մտքի ու
սրտի մէջ: Դիտելով ոգւոյ ու նիւթոյ
տարբեր բնութիւնը, անբաժանելի ողին և
անցաւոր նիւթը — եղբափակեց, ինչպէս
որ բոլոր ազգերն և բոլոր՝ թէ կոպիտ և
թէ մաքուր կրօնները, որ մարդուս հոգին
անմահական է: Տեսնելով կարգի հար-
կաւորութիւնը տիեզերաց մէջ ու մար-
դուս արդարութեան ընդունակ լինելը —
հետեցուց, որ բարի զործը վարձք ու չար-
գործը պատիժ պիտի ստանայ այս և կամ

այն կեանքի մէջ : Աստուծոյ գոյութիւնը,
հոգոյ անմահութիւնը, մարդկային արար-
մանց վարձատրութիւնը եթէ որ նոքա բա-
րոյականին յարմար, և պատիժը, եթէ որ
բարոյականին հակառակ գործուած են —
Թրանկիլինի աչքին ճշմարիտ հաւատոյ հի-
մունք դարձան և այդպէս նորա բնական
հաւատը յայտնեալ հաւատոյ հաւաստի-
ութիւն ստացաւ :

Մինչև այժմ Թրանկիլին իր գիտութիւ-
նը ընդարձակելու և իր արհեստի մէջ ըստ
կարելոյն շատ կրթուելու փոյթ կը քա-
շէր, այժմ նա զգօն ծանրութեամբ իր
բարոյական կեանքն ի նկատի առաւ և
վճռեց ունեցած թերութիւնքն ուղղելու,
բարի սովորութեանց մէջ զինքն ամրաց-
նելու և առաքինի կեանք վարելու, մեք
յառաջ կը բերենք այն բարի յատկու-
թեանց ցուցակը, զորս նա ինքն իրեն
սեփականել ցանկալով ամեն մինի վրայ
առանձին ծանօթութեամբ թղթի վրայ
գրած էր :

1. Ճառածիալունին : Ո՞ի՛ ուտեր այն-
չափ որ անասուն գառնաս և մի՛ խմիր
այնքան որ դլուխդ այրուի :

2. Լուսնին : Խօսիր միայն այն, ինչ
որ քեզ և ուրիշներուն օգտել կարող է :

3. Կորդապահունին : Վանի բանի ո-
րոշեալ տեղ տուր, ամեն մէկ գործիդ ո-
րոշեալ ժամանակ :

4. Անհատահարսնին : Ա ճռիր կատա-
րել այն ինչ որ անելու ես, և կատարիր
այն ինչ որ վճռած ես :

5. Անօգուտ
ծախըեր մի՛ աներ ոչ քեզ և ոչ ուրիշնե-
րու համար, այսինքն ոչինչ մի՛ վատներ :

6. Անբարտահարսնին : Երբէք ժամա-
նակ մի՛ կորցներ — միշտ օգտաւետ գոր-
ծով զբաղիր : Երա ինչ որ միայն կարե-
ւոր է :

7. Անիշուննին : Խոտորնակ ճանա-
պարհներ մի՛ ընտրիր և թոյլ տուր, որ
միայն անկե ծութիւնն ու պարզութիւնը
առաջնորդ լնին մտքերուդ :

8. Երդարսութիւն: Ոչ ոքի դէմ անի-
բաւութիւն մի՛ գործեր և արա ուրիշնե-
րուն, ինչ որ նոքա իրաւունք ունին սպա-
սել քեզմէն:

9. Երկայնաձայնութիւն: «Օ այրայեղու-
թիւնէ զգոյշ կաց և մի՛ լինիր վրէժինդիր
քեզ վիրաւորողներու դէմ, թէ և կար-
ծէիր, որ նոքա ատոր արժանի են:

10. Առաջանալիքութիւն: Կեզդ մի՛ համ-
բերիր ոչ մարմնիդ վրայ, ոչ շորերուդ
վրայ և ոչ բնակարանիդ մէջ:

11. Աղոյրութիւն: Չնչին կամ սովո-
րական և անխուսափելի պատահարներէ
մի՛ վրդոգիր, մի՛ զայրանար:

12. Կոռուպութիւն: Ենարատ ու մաքուր
կեանք վարէ, որպէս զե քո և կամ ուրիշ
հանգստութիւնը ու բարի համբաւը վր-
նաս չըկրեն:

13. Խոնարհութիւն: «Եմանիր Յիսու-
սին և Առկատեսին:

Եյս կանոններու դասաւորութեան մէջ
անդամ կարգ դրած էր Ֆրանկին: «Ճուժ-

կալութիւնը կամ չափաւորութիւնը ա-
մենէն վերը դասեցի, կրոէ նա, ըստ որում
մարդուս գլուխը սառ և մոքերն ազատ
կըապահէ. այդ շատ հարկաւոր է, եթէ ու-
զենք մեր վրայ միշտ հսկել, միշտ արթուն
մնալ և միշտ պատերազմել հին սովորու-
թեանց հրապոյրի և փորձութեան ուժի
դէմ, որք անդադար կհալածէն զմեզ:
Եյս առ աքինութեան մէջ մէկ անդամ
զօրանալին եաքը լուս-թիւնը աւելի հեշտ
թուեցաւ ինձ, և որովհեան բարի գոր-
ծելու համար զիտութիւնք ստանալ կու-
զի, որովհետ և կտնանէի, թէ մար դսական-
ջով աւելի բան կուսանէ, քանթէ լե-
զուով, և որովհեան ամեն անդամ ծաղը և
կատակով խօսելու հին սովորութենէս—
որով իմ ընկերութիւնս միայն թեթևա-
միտ մարդոց հաճելի կըդառնար—վերջա-
պէս հրաժարուել կըցանկայի, ուստի լը-
ռուս-թիւնը երկրորդ տեղը տաւի: Տարակոյա
շունէի, որ նորան յաջորդող խարժի միջ
նորդութեամբ աւելի ժամանակ կըստա-

նամ ուսմունքս և գործերս յառաջ տա-
նելու: Ա ճահապունիւնիւնը, որ իմ մէջ ար-
դէն սովորութիւն զարկած էր, վստահու-
թիւն կուտար ինձ միւս առաքինութեանց
թիկն ածելու, իսկ առկաստովնիւնն և
աշխատասիրունիւնը, որք մինչեւ այժմ՝ ու-
նեցած պարագերս քիչացնելով բարօրու-
թիւն և անկախութիւն կընորհեն ինձ, ան-
կեղծութեան, արգարութեան, երկայն-
մութեան, մաքրասիրութեան, հանդար-
տութեան, կուտութեան և խոնարհու-
թեան մէջ ևս կըթուելու կողնեին:

Ա ակայն երկու տեսակ կանոններ կան.
կան այնպիսիք, որք անպտուղ և այնպի-
սիք, որք պտղաւոր բոքքոջի կընմանին.
Ֆրանկլինի կանոնները վերջին տեսակն է-
ին: "Ճսկեցէք և աղօթս արարէք" պա-
տուերն ի մտի ունելով, ամենայն երեկոյ
նա հաշեւ կըպահանջէր ինք իրմէն ամ-
բողջ օրուայ ժամերու համար և խստիւ
դատաստան կընէր ինք իր վրայ: Ա յնու-
հետեւ վերոյիշեալ կանոններու գրքոյկը

առջեր կըդնէր և կընշանակէր, թէ ի՞նչ
բան անոնց յարմար և ինչ բան ընդդէմ
գործած է: Ա երջը ի խորուց սրտէ ջերմ
աղօթք կամրառնար գէպի Երարիչն ամե-
նայնի և զօրութիւն կըմաղթէր նորամէն:
Ե յս գրքոյի մէջ շատ աղօթքներ կային,
մասամբ նորա սրտէն դուրս բղխած, մա-
սամբ ս գրքէն և մասամբ իրեն սրտակից աշ-
խարհական բանաստեղծներէն առնուած:
Թօնմոն անգլիական բանաստեղծի հետե-
ւեալ տունը ստէպ յառաջ կուգայ գըր-
քոյկիս մէջ.

Ա զբիւր կենաց և լուսոյ, Երարիչ իմ
Վաստուած:

Տուր ինձ զբարին ձանաչել և զայն
միշտ կատարել,
Պահպանեա զիս յիմարութենէ և ի
մեղաց
Եւ յամենայն մնոտի, յամենայն գարշ
խորհրդոց.
Լցո զիս գիտութեամբ, հոգւոյ հանդս-
տութեամբ

Եւ անթառամ առաքինութիւն շնոր-
հեա ինձ:

Քաղցը է տեսնել մանաւանդ, որ Գլ-
րանկին արտաքին կողմանէ բարեբաստիկ
վիճակի մէջ էր այս եռանդադին վերա-
թեման ժամանակ: Այժմ նա Դինհամ
հարուստ վաճառական ի գործական էր
և իր ապագայի համար ամենայն ինչ բա-
րիք կըստասէր նորա ազնուութենէն: —
Ինչքան երիտասարդներ կան, որ մնուի
հրապոյներու ետեւ ընկած, իրենց մար-
մին ու հողուն վեաս կը բերեն: Աղորմու-
թեամբ Վատուծոյ Գրանկին ու զեղ Ճամ-
բու վրայ մնաց և կրցաւ պահպանել զինքը
այն դժուար փորձանքներու մէջ, որք գեռ
հասնելու էին նորան:

Դ.

ՄԻՆՉԵՒ ԻՆՔՆԱԿԱԽԵՈՒԹԻՒՆԲ:

Այդ փորձանքները ըլյապաղեցին վրայ
հասնելու: Դինհամ, Գրանկինի ազնուա-
սիրտ աղան, նորա հեա համարեա իբրե-

որդու հեա կը վարուեր, յանկարծ մեռաւ
և Գրանկինի յոյսերէն շատերը ի չեք գար-
ձան: Կամայ ակամայ պարտ էր նա այժմ
կրկին այն տեղէն սկսել, որ տեղ որ եր-
կու տարի առաջ գաղարած էր — այսինքն
նորէն գրաշարի պաշտօն որոնել Գիլազել
Փիալի մէջ: “Եոյն իսկ միջոցին տպարանա-
տէր Վայմերը, որոյ մօտ Գրանկին առաջ
ծառ այսիծ էր, լաւ ոռչկով տեղ մ’ու զեց
տալ նորան իր տպարանին մէջ: Գրանկ-
ին չեր համակրէր այս կասկածելի և իր
արհեստին անհմուտ մարդուն, բայց և
այնպէս ընդունեց նորա առաջարկած
տեղը, որովհետեւ ուրիշ մը չեր կարող
գտնել, այն ժամանակ, և իսկոյն արթուն
ու ժիր կերպով ձեռն արկաւ աշխատու-
թեան:

“Նորամին զատ այլ ևս հինգ մարդիկ կա-
յին տպարանի մէջ, որք Վայմերի նման
թերատ աշխատաւորներ էին: Գրանկինի
ձեռաց տակ, որ ըստ սայմանի տիրոջ տե-
ղը բոնած էր տպարանի մէջ, բոլոր գոր-

Ճերն առաջին օրէն սկսեալ միանդամայն նոր կեանք ստացան: Աշակերտներն ու գըրաշարները պատիւ կուտայիննորան, քանզի կրտեսնէին նորա հանձարեղ կորովութիւնը և ամէն օր նոր բան կուտանէին նորամէն: Քայմեր ևս ուրախ էր և նորան գովեստներ կարդալէն չեր դադարէր. սակայն այս գովեստներու իսկական շարժառիթը թաքուն չմնաց Գրանկլինին; “Թա՞ղ որ Գրանկլին տպարանդ մէկ անդամ կարդի բերէ և գործաւորներդ ինչպէս հարկ է կրթէ, այնուհետեւ կարող է դնալ կորչել կըսէր Քայմեր ինք իրեն: Զարին չարհօք պատասխաննելը Գրանկլինի բանը չեր: “Թա՞ղ Քայմեր անդութ անամօթ վարուի հետս, կըսէր և իր կողմէն, այդ գեռնաւ չմնշանակէր, որ և ես անդութ և անամօթ պիտի լմնիմ. ընդհակառակն, ես կը փութամ կատարել ամենայն գորութեամբ յանձն առած պարագս և կաշխատեմ յառաջ տանիլ գործը—ինչպէս իմ սեփական գործս: , ,

Եւ նա կատարեց այդ երեսաց քրտին քով: Դժուար հանգամանքն երու մէջ սովորաբար և հետեւեալ ճամբան կը բռնէիր: “Նախ հանգիստ քննութեամբ գործը կը ընթիւնէր, յետոյ թուղթ մը ծայելով, այն ամէնը ինչ որ կարելի էր ասել յօդուտ և կամ հակառակ գործի դէմառ դէմ թըրղթի վրայ կը շարէր: Այնուհետեւ, ինչպէս որ թուաբանական հաւասարութեան մէջ կընեն, հաւասար կշորի հիմքերու վրայ գիծ կը քաշէր և կը տեսնէր, որ ստէպ մէկ կողմի մէկ նկատմունքը միւս կողմի շատնկատմունքներէն աւելի կշիռ ունէր: Այդպիսով ընդդիմադաս փաստերու թիւը կը նուազէր, քննելի հարցը կը պարզուէր և վճիռը վերջապէս առանց դժուարութեան յերեան կելէր: Այս էր նորա բարոյական ալգերբան:

“Նորա այս կերպով աշխատելը Քայմերին ի հարկէ շատ օգտաւէտ էր. սակայն աւելի օգտաւէտ էր նոյն իսկ Գրանկլինին, ըստ որում իր գործի մէջ աւելի կը մար-

զուեր ու կը յառաջանար: Խնչքան գործաւորներ կան աշխարհիս վրայ, որք շեն կրնար հասկանալ, թէ շար տիրոջ մը անփութութեամբ մնասել յանկալով—իրենք իրենց աւելի շատ կը մնասեն:

Քայմերի տպարանը շատ անդամ տառաեր կը պակսէին և որովհետեւ այնժամանակ Ամերիկայ դեռ ոչ մէկ ձուլարան չը կար, ուստի սաստիկ շփոթմունք կը ծագէին տպարանի մէջ: Ֆրանկլին, որ Լոնդոն եղած ժամանակ միայն մէկ անդամ տառերու ձուլումը տեսած էր, այժմ ձև մը շինելու մտքի եկաւ և հին տառաերը տարազի տեղ գործածելով, կարծ միջոցին նորեըր թափեց կաւեղէն մայրերու մէջ: Բացի այդմանէ փայտի վրայ զանազան վարդեր փորագրեց, ուներկ շինեց միով բանիւ ամեն բանի մէջ ինք իրեն օգնեց:

Ամերիկան որչոփի որ նորա օդնութեամբ գրաշարները յառաջ կերթային իրենց առուեստին մէջ, նոյնչափ կը վատանար և

Փայմերի վարմունքը Ֆրանկլինի հետ: Այս անդուհ ցոյց կուտար զինքը և Ֆրանկլինի հետ կուռելու առիթ մը կը պատեր, զոր և գտաւ հետեւեալ չնչին անցքի մէջ: Օր մը փողոցի վրայ զարհուրելի ազմուկ բարձրանալով, Ֆրանկլին բաց արաւ պատուհանը իմանալու, թէ ի՞նչ էր պատճառը: Քայմեր որ տան առջեւ կանգնած էր, նոյն իսկ շփոթման աղաղաւ պատուհանէն դուրս նայող զբացիներուն միանգամայն առանց ուշադրութիւն դարձնելու, վերաւորիչ կերպով կանչեց որ նա իր գործը հոգայ, յետոյ ներս մտաւ, հրաժեշտյայտնեց Ֆրանկլինին և ափսոս կարդաց, որ արձակման ժամանակ ըստ պայմանի դեռ երեք ամսէն վերջը գալու էր: Այդ մասին անփոլթ կացէք, ես ինքս իսկոյն կը հեռանամ, ասաց Ֆրանկլին և նոյնժամանեցաւ տպարանէն:

Երեկոյեան նորա մօտ եկաւ Այերեղիթ անուն գրաշարը: Այդ երեսուն տարեկան մարդը առաջ դիւղական տնտեսութիւն

ուսած էր և գրաշարական արհեստին համար, որ վերջը ակամայ սկսած էր, առանձին սէր մը չունէր: “Նա ափսոսաց Գրանկլինի տպարանէն դուրս գալուն, վասնորոյ և Գրանկլին յայոննեց, թէ մոտաղիք է տուն վերադառնալ:” Մերեղիթ խորհուրդ չըտուաւ ինձ այդ անելու, կը պատմէ Գրանկլին—և ասաց թէ Քայմեր աւելի պարտք ունի, քան ստակ, թէ նորա փոխատուները սկսած են արդէն երկնչել, թէ նորա խանութը թշուառ վիճակի մէջ է, քանի նազդ դրամ ստանալու համար շատ ապրանքներ չնչին գնով կը ծախէ և առանց հաշեւ պահելու ստէպ պարտք կուտայ, թէ նա ուրեմն շուտով կոտր կընկնի,— հանգամանք մը, որ ինձ նոր տպարան հիմնելու առիթ կուտար: Ատակ դէմ Մերեղիթ յայտնեց, թէ իր հայրը շատ մեծ յարգանք ունի դէպի ինձ և թէ նորա հետ իմ մասին արած խօսակցութենէն պարզ կեղրափակէ, որ և լիովին պատրաստ է մեզ

դրումով օգնելու, միայն թէ յօժար էի ընկերանալ նորա հետ: Եկած գարնան նորա ծառայութեան ժամանակը Քայմերի մօտ լըանալու էր և արդ թէ և կը խոստովանի, որ անընդունակ է գործին, սակայն և այնպէս յոյս ունի, որ եթէ ես նորա առաջարկութիւնը ընդունիմ և իմ հմտութիւնս նորա ստակին միացնեմ—ամէն բան կը յաջողի և մեք գործը յառաջ կը տանենք, արդիւնքը հաւասար բաժանելով: Այդ աղնիւ առաջարկութիւնը ձեռնտութուեցաւ ինձ և ընդունեցի: Մերեղիթի հայրն ես, որ այն ժամանակ քաղաք եկած էր, յօժարութիւն յայտնեց: Իմ աղդեցութեամբ երիտասարդ Մերեղիթը առժամանակ մը դադարած էր արբենալին: Այդ իմանալով ծերունին կը յուսար, թէ որ զին գուցէ իսպառ կաղատի իր չարաբատիկ սովորութենէն, եթէ ես աւելի մօտենամ նորան:,, Ինչ որ պէտք էր տպարանին լոնդոն ապսպրեցինք, սակայն դիտուած նպատակը գեռ գաղտնի մնալուէր:

Եցրի իսկ միջոցին Քայմեր սկսաւ տփ-
սասալ Գրանկինի արձակման վրայ :
Դա լսած էր, որ “Նիւ—Զերսի նահանգը
թղթադրամի ապազրութիւն ապսպրելու
էր նորան, բայց ո՞վ կարող էր այդ դը-
ֆուար գործի համար կարեւոր տիպարներն
ու զարդելը ի զրոխ ածել, եթէ ոչ Գր-
քանկին։ Աշրկնչելով որ մի գուցէ Նիւ—
Զերսի կառավարութիւնը իր ապսպրելի-
քը Բռանդ Փորթին յանձնէ և սա զիրանկ-
ին իր ասպարանը կանչէ, Քայմեր իսկոյն
քաղաքավարի նամակ մը գրեց Գրանկինին
և անոր մէջ իր սրտմառութիւնը զղջալով
ինդրեց, որ կրկին վերադառնայ իր մօտ
Քիչ մը ասրտամելին ետքը Գրանկինը
գունեց իննդիրը։ Կոյն իսկ ժամանակ եկաւ
և Նիւ—Զերսիին սպասուած ապսպրոն-
քը և Գրանկինը պարզ տեսաւ, որ ոչ թէ
հաշտափութիւն, այլ միայն նիւթական
լոկ հաշիւ էր նորա յետ կոչուելուն պատ-
ճառը։ Ոտկայն այդ խարդախութեան վը-
բայ առանց երկար մտածելու, բոլոր իր ու-

շաղրութիւնը յանձն առած գործին նուի-
րեց և պղնձատիպ մամուլ մը պատրաս-
տեց, որ մինչեւ այն ժամանակ Ամերիկայի
մէջ դեռ չը տեսնուած բան էր։ Մամլոյ
շինութենէն ետքը իր ձեռքով պէսպէս
նկարներ ու զարդեր փորեց պղնձէտ տախ-
տակի երեսին, որ պէտք էր այժմ Բռուր-
լինդթօն տանել՝ այն տեղ զաւառական
վարչութեան աչքի տակ զայն բոլորովին
աւարտ հասցնելու գործածութեան հա-
մար։ Թաղթի տպազրութիւնը կատա-
րուելուէր յատկապէս առայդ նշանակուած
առանձին պաշտօնեաներու վերատեսչու-
թեամբ։

Քայմեր շատ կը ցանկար ի հարկէ միայ-
նակ ի կատար հանել ապազրութեան գոր-
ծը Բռուրլինդթօնի մէջ, բայց այնքան
հանձնար չը ներգ ուստի իր հետ տարաւ
զիրանկին և ստիպուեցաւ տեսնել ու լը-
սել այն ամեն զովասանքը, որ նա իր հըմ-
տութեամբ ստանալու էր վարչութեան ա-
կանաւոր մարդիկներէն։

Վեծաւոր պաշտօնեաներէն ոմանք շատ
սիրեցին զՓրանկլին, մանաւանդ Աաշակ
՚իիկով անուն գիտուն և կորովամիտ վե-
րատեսուչը, որ իրրե չքաւոր ծնողներու
զաւակ վաղ մանկութեան ժամանակ ար-
դէն որմաշէններուն աղիւս ու հող բերե-
լով հաց վաստակած էր, գրելը ուշ սովո-
րած, յետոյ երկրաչափի մը մօտ ծառայե-
լով նորա արուեստն ուսած և վերջապէս
յարատե երկասիրութեամբ և աղնուու-
թեամբ պատոյ ու բարօրութեան հա-
սած էր: Ֆրանկլին ագահութեամբ կը լսէր
այդ պատկառելի ծերունու պատմութիւն-
ները և իրրե անդին գանձ իր սրտի մէջ
կը նդունէր: «Օերունին ևս սրտի մտօք կը
լսէր Ֆրանկլինի անցեալը և այն, թէ ի՞նչ
կերպով յառաջ տարած էր գործը մինչեւ
այժմ: Քարեմնայի ժամանակ, երբոր ֆր-
անկլին գրամներու տպադրութիւնն ա-
ւարտելով Ռերլինգթօնէն հեռանալու էր,
ծերունին ասաց նորան: « Առջեկ կը
տեսնեմ, որ դու այն մարդէն (Քարերէն)

շուտով կը բաժնուեմ և քո հանձարովդ
մեծ հարստութիւն կը վաստկես Գիլագել-
ֆիայի մէջ,,: Ֆրանկլին յայտնած չէր նո-
րան, որ Վերեղիթի հետ նոր գործ սկսե-
լու մտադիր էր: ՚իիկովի և միւս գաւառա-
բնակ մարդոց բարեկամութիւն ու սէրը
ժամանակով բարի հետեանք ունենալու
էր նորա համար:

Այնուհետև Ֆրանկլին իսկոյն բաժա-
նուեցաւ Քայմերէն: Վերեղիթի ծառա-
յութեան ժամանակը լրացաւ, տպարանի
մարդիքն ու կարասակը մեծ մեծ արկղնե-
րու մէջ Լոնդոնէն եկան և Ֆրանկլին և
Վերեղիթ հրապարակի վրայ մէկ տուն վար-
ձելով ձեռնարկութիւնը կարգի ձգեցին:
Վամուլը դեռ նոր գրուած էր ոտքի վրայ,
երբոր Ֆրանկլինի բարեկամը Գէորգ Հուղ-
գիւղացի մուշթարի մը բերաւ նորա մօտ:
Ֆրանկլին սաստիկ ուրախացաւ, նա մա-
նաւանդ որ ընկերութեան գանձը արդէն
միանդամայն նուազած էր: «Այդ գիւղա-
ցու տուած հինգ հատ շելլինդները — կըսէ

նա—որ մեր առաջին արդիւնք էին, ի դեպ ժամու հասնելով աւելի ուրախութիւն ազդեցին սրտիս, քանիթէ այնուհետեւ վաստկած բոլոր գումարներն ի միասին առնուած, իսկ Գևերդ Հուղի ազնիւ արարմունքը վրաս երախտագիտութեան պարագ զնելով պատճառ դառաւ, որ և ես նոյն օրէն սկսեալ երիտասարդ ձեռնարկողներուն ի սրտէ օգնել սկսայ:,,

Եյժմ պէտք էր ամուր և հաստատուն դիրք ստանալ քաղաքի միւս երկու տպարաններու հանդէպ, պէտք էր այնքան դըրամ վաստկել, որ կարելի լինէր տպարանի պիտոյքը հոգալ, տան վարձը վճարել, Ֆրանկլինի ու Մերեդիթի ապրուսոք հայթայթել ևլու: Մերեդիթ ամենայն գորութեամբ կաշխատէր, բայց և այնպէս բոլոր գործը Ֆրանկլինի ուսերու վրայ կը ննար: Վերջնս պարզ տեսնելով, որ յառաջազիմութեան միակ ճանապարհն ըստ կարելոյն լաւ աշխատած բանն ու քըրանաջան երկասիրութիւնն էին, ամենայն

օր վաղարշալուսին գործ կըսկսէր և շաբաթը միայն մէկ ժամ հանգիստ կառնէր համամիտ ընկերներու շրջանին և կամ իր հիմնած քլուրի մէջ, ուր որ միշտ ձառեր կըկարդացուէին պէս պէս շահաւէտ խնդիրներու վրայ:

Ինչպէս որ Գևերդ Հուղ, նոյնպէս և Ֆրանկլինի միւս բարեկամները կը հոգային գործ գտնել նորա համար: Ալուրի անդամներէն մինի միջնորդութեամբ նորան յանձնեցին տպելու կուաքերներու պատմութիւնը, որ քառասուն թերթ պիտի շարուէր: Թէկ գիրքը մեծ ծալք ու բնաբաննը մանր տառերով տպուելու ընդարձակ ծանօթութիւններ ունէր, սակայն և այնպէս Ֆրանկլին իւրաքանչիւր օր մէկ մէկ թերթ կըշարէր և այդպէս աշխատելով սովորաբար կէս գիշերէն առաջ անկողին չեր մանէր: Եշբ որ մէկ անգամ գիշերուայ մէջ նորա երկու ութածալ էջերը իսպառ խառնուեցան, սա սկսաւ, վերստին շարել և բոլորը նորէն կարդի բե-

բելէն յետոյ միայն ննջելու գնաց։ Այդ
տեսակ վաստակասիրութեամբ ամենայն
կողմէն հաւատարմութիւն ու պատիւ գը-
րաւեց։ Վաճառականներու կուրի մէջ
օր մը տարակոյս եղած էր, թէ արդեօք
Քրանկլին և ընկ. տպարանը կարող է
միւս երկու տպարաններէն յառաջ և կամ
նոցա հետ հաւասար ընթանալ։ “ Քրանկ-
լինի պէս աշխատասէր մարդ մը երբէք տե-
սած չեմկեանքիս մէջ, ըստեյանկարծ դկ.
Բարտը, զիշերը ըլուրէն տուն վերադառ-
նալիս միշտ կը տեսնեմ, որ տակաւին գոր-
ծի վրայ է. գործի վրայ է դարձեալ և
առաւտեան, այն ինչ նորա դրացիքը
դեռ անկողնի մէջ են,,։ Այդ գովեսար
լաւ տպաւորութիւն արաւ կուրի ան-
դամներուն վրայ և նոցամէն մէկը միւս օր
ազատ բերմամբ Քրանկլինի մօտ գնաց և
յայտնեց, թէ սրաի մտօք յօժարէ պարտ
տալ նորան, եթէ օրինակի համար
գրելունիւթոց խանութ մը բանալ ուզե-
նայ։

Քրանկլին արդէն հրաժարուած էր ըղ-
բօսանքներէ, ոչ էրկոց որսի կերթար և
ոչ ձկանց և ոչ պանդոկները կը յածախէր։
Գործերու մէջ խարութիւն չէր անէր,
աննշան կամ չնչին գործ չը զիտէր և գոր-
ծաւորի զգեստ հագնելը իր համար պա-
տիւ կը համարէր։ Տպարանին հարկաւոր
թուղթը ինքը կը բերէր ձեռաց սայլեկով։
Կը խոստանար միայն այն, ինչ որ կարող
էր կատարել, անշուշտ կը կատարէր, ինչ
որ խոստացած էր—գրամ թէ գործ։ “ Առ-
րա անձանօթներէն շատերը տեսնելով
զնա սայլեկը զիլ ի զիլ մղելիս կը կարծէ-
ին, թէ հոգով ու մոքով աղքատներէն
մէկն է. բայց երրոր հետը կը խօսէին, խե-
լօք աչքերու մէջ կը այեցին, բարեհամրոյը
կերպարանքը կը տեսնէին, եռանդուն ճա-
ռը կը լսէին—այդ վաղահաս կարծիքը իս-
կոյն կը փոխուէր։

Մերեգիթ օր է յօր աւելի կը զգար իր
ու Քրանկլինի մէջ եղած տարբերութիւնը;
Քրանկլինի պէս փութաջան աշխատել չէր

կրնար և նորա ամնչան դեր խաղալը սըրտին դառը կը թուէր, նա մանաւանդ որ հայրը դժբախտաբար նեղ վեճակի մեջ ընկելով յանձն առած պարտաւորութիւնը չէր կրնար կատարել:

Օր մը Աերեղիթ հետեւեալ նամակը գրեց Գրանկլնին. «Աւեսնեմ, որ զիր տպողի պաշտօն վարելը միանդամայն խրանս չէ. ես կրթուած եմ զիւղական տընտեսութեան համար և ուրեմն այս տեղ գալս և արդէն քսան տարեկան հասակիս իբրև աշակերտ նոր արհեստ մ' ուսանելս իմ կողմանէ միայն յիմարութիւն էր: Հայրենակիցներս շատերը հիւսիսային—Կարօլինայի արգաւանդ երկիրը պիտի գաղթեն. կը փափազիմ միանալ նոցա հետ և առաջուայ պարապմունքներուս կը կին ձեռն արկանել: Տարակոյս չունիմ, որ դուք անշուշտ ձեղ օգնական ընկեր մը կը գտնէք: Եթէ բարեհաճիք մեր ընդհանուր պարտքելը յանձն առնել, հօրս տուած հարիւր ֆունթը վերադարձնել, մասնաւ-

որ փոքրիկ պարտքերս վճարել և ինձ երեսուն թոշիր դրամ ու մէկ նոր թամբ տալ — ես դուրս կելեմ գործէն և ասոր մէջ ունեցած բաժինս լիովին ձեղ կը թողում:

Այդ առաջարկութիւնը Գրանկլին չէր կրնար ընդունել, թէ քիչ մ' առաջ հետեւեալ անցքը ըստ պատահէր: Քանի մ' ը օր առաջ մէկ ընկեր նորա մօտ գալով խորհուրդ տուած էր, որ եթէ կարելի է խակոյն բաժնուի Աերեղիթէն, որ շատ անգամ փողոցներու և պանդոկներու մէջ զինովի քարշ կուդար և ուրեմն տպարանի համբաւը կապականէր, և գործը միայնակ յառաջ տանէ, յաւելցնելով, թէ այդոր համար պէտք եղած գումարը Գրանկլին կարող է ազատորէն նորամէն ըստանալ: Գրեթէ միենոյն ժամանակ ուրիշ ընկեր մ' ևս, առանց նախընթացի արարմունքը իմանալու, նոյնատեսակ առաջարկութիւն և խորհուրդ տուած էր նորան: «Այդ էին երկու ձշմարիտ ընկերներ — կըսէ Գրանկլին — « որոց վե-

Հանձն վարմունքը մոռանալու չեմ, քանի
որ յիշողութիւն կայ մաքիս մէջ: Ֆրանկ-
լին ընդունեց յօժար մոօք առաջարկուած
նպաստը, այլ մէկ և կամ միւս ընկերի
սիրտը չը վերառորելու համար, իւրա-
քանչիւրէն իրեն հարկաւոր գումարի կե-
սը միայն ինդիեց: Այնուհետեւ հրատա-
րակութեամբ իմաց տուաւ ժողովրդին,
որ ընկերութիւնը լուծուած է և թէ ար-
պարանի միակ տէրը այժմ նա ինքն է:

Տպարանի գործը այժմ շուտ յառաջ
գնաց: Ֆրանկլին գրչութեան նիւթերու
խանութ բացաւ ու սկսաւ վաճառական-
ներու համար յարմարուած հաշուազիր-
ներ, պայմանագիրներ, մուրհակներ և ու-
րիշ այդ տեսակ թղթեր տպելու որք Ամերի-
կայի մէջ նոր բաներ լինելով շատ մուշ-
թարիներ գտան:

Այդ միջոցին ինդիեր մը ծագած էր նոր
թղթագրամներ արձակելու մասին: Ճին
թուղթ ունեցողները կերպնչէին, որ նոցա
արժէքը չը նուազի: Ֆրանկլինի հիմնած

կլուքի մէջ այդ ինդիերը հիմնաւոր քըն-
նութեան տակ ընկաւ և նա ինքը յօդո-
ւած մը հրատարակեց, որով ակներև կա-
պացուցանէր, թէ թղթագրամի գործա-
ծութեամբ տուքեառը ժրութիւն ու-
կեանք կստանայ, միայն թէ չափ ու սահ-
ման պահպանուէր նոցա գուրս տալու մէջ:
Գրաւառական պատգամաւորներու ժողո-
վի մէջ թղթագրամի նոր հրատարակումը
ձայներու բազմութիւն ստացաւ և ֆրանկ-
լինի ընկերներն ու բարեկամները զանց չա-
րին յերևան հանել, որ նա՛ միայն ձեռն-
հան էր տախաւիները փորելու և տպա-
գրութիւնը հոգալու:

Այնուհետեւ Ֆրանկլին լրագիր մը հրա-
տարակելու մաքի եկաւ: Աերձաւորներէն
մին նորա մտերմութիւնը չարագործելով
այս միաքը զնաց Քայմերին յայտնեց և
սա իսկոյն յայտարարութիւն մը տպելով
ֆրանկլինին առաջ լրագիր մը լոյս ընծա-
յեց: Աակայն չը կրցաւ մնաս տալ ֆրանկ-
լինին: Արձագանք զանել ուղեցող լրագի-

ըր պէտք չէ որ միայն տպուի, այլ պէտք է որ նախ և առաջ պատշաճաբար խմբագրուի. բայց այս բանին հարկաւոր հըմտութենէն Քայմեր գլխովին թափուր էր: Խննսունէն աւելի բաժանորդ չը գտնելով նա ստիպուեցաւ վերջ ի վերջոյ լրագիրը Գրանկլինին ծախել: Գրանկլինի ձեռքին տակ թերթը նոր ուղղութիւն ստացաւ և կարծ միջոցին ամենի համակրութիւնը գրաւեց: Մինչև այժմ Ամերիկայի մէջ եղած լրագիրներու սովորութեանը հակառակ, որք միայն Անգլիային եկածներու ըկ կրկնութիւնն ու ստուերն էին, նա ըսկսաւ ինքնակախ քննել հայրենեաց հանգամանքները և այս բանիս մէջ ցոյց տուած քանքարով այն տեղը հասաւ, որ Նահանգային ժողովի ամենակորովի անդամները նորան գործակից դարձան: Խնչպէս որ ամէն բան ուղիղ գործածուելով՝ օրհնութիւն և չարագործուելով—չարիք կը բերէ, նոյնպէս է և լրագիրը: Գրանկլինի խմբագրատան մէջ իմաստութեան հետ

բազմած էին նաև ազնուութիւն և արդարութիւն. ինչ որ ընդհանուր օգտին հակառակ էր արիապէս ի բաց կը մերժէր և քամահանօք կը պատասխանէր այն ինքնասէրներուն, որք երբեմն ահագին գումարներ կառաջարկէին նորան, իրենց մասնաւոր շահից ձեռնտու յօդուած մը տըպել տալու համար:

Գրանկլինի առեւտուրը կը ծաղկէր գլւխաւորապէս այն տնտեսական կանոններու շնորհիւ, զորս նա իբրև ուղիղ ճանաչած էր և երկաթեղեն կամքով հանապազ ի գործ կը դնէր:

“Նորա մոլորութեան օրերէն տակաւին քանի մը բաներ մնացած էին, զորս հարկ էր վերստին ուղղել և նա երջանիկ կը համարէր զինքը, եթէ այդ պարագայից վերարերեալ վաղեմի փափագին վերջապէս լրումն տալ կարողանար: “Նա լիովին հաշտուեցաւ եղթօր հետ, նորա զաւակներէն մէկը իր մօտ բերաւ, օրինաւոր կը թեց և վերջը ամենայն տեսակ տպարանական գոր-

ծիք ունիւթեր ընծայեց, որ ուրիշ տեղ
գնայ ու ջոկ տպարան մը հաստատէ: Ա՞եք
դիտենք, որ նա Ա երօնի անուամբ ընդու-
նած գումարին բուռն արկած էր ցանկա-
լով օգնել նեղեալ բարեկամներուն, որք
յետոյ սեերես ապերախտներ գուրս ելան: :
Նա վճարեց Ա երօնին բոլոր գումարը տո-
կոսեօք հանդերձ: Ա երջապէս օրիորդ Ռի-
դի վիճակն ևս երկար ժամանակ նորա սիր-
ար կը ճմէր: Բ նթերցոզս կը յիշէ, որ Ռիդ
զինքը Գրանկլինէն բացընկեցիկ համարե-
լով, ուրիշ մարդու ամուսնացած էր, այդ
ամուսնութիւնը չարաբաստիկ եղաւ:
Վարդը գինարբուներէն մէկն էր. վերջը
յերեան ելաւ, որ նա սահմանէն գուրս
պսակուած էր և այն տեղ ևս տակաւին
կենդանի ամուսին ունէր: Օր մը նա փա-
խաւ Գիլադելֆիայէն շատ պարտքեր թող-
նելով և այնուհետև մեռաւ: Խեղճուկ
Ռիդը դառն վշտի մէջ էր. “Ա իշտ արտում
էր և առանձնութիւն կորոնէր,, , կըսէ
Գրանկլին: “Առաջուայ սիսալս կրկին ուղ-

ղելով — կը շարունակէ Գրանկլին — ես ա-
ռաջարկեցի նորան իմ ձեռս և չը զջա-
ցայ ատոր վրայ: “Նա ինձ բարի ու հաւա-
տարիմ ընկերուհի դարձաւ և խանութիւն
երկարատև բարգաւաճմանը շատ օգնեց:
Ա՞եք երջանիկ էինք միմեանց հետ և հա-
ւասար եռանդով կաշխատէինք, որ մեր
բաղդը պահպանուի, քանի գնայ պերճա-
նայ ու յաւէտ անպակաս մնայ,, :

Ա երջապէս Գրանկլին հանդիսաւ առաւ-
և հասաւ այն կէտին, որ տեղէն որ իր
հոգոյ հարուստ գանձերը աւելի առա-
տօրէն կարող էր սփոխիւ, քանի թէ մինչեւ
այժմ:

Ե.

ԳՐԱՆԿԼԻՆԻ ՀԵՌԱՏՈՐ ԳՐԱՄՄՈՒՆԵՌ-
ԹԻՒՆԸ:

Գրանկլին ամուսնացաւ 1730թ. իր քը-
սանելորրորդ տարեկան հասակին: Առա-
ջուայ սովորութիւնը շարունակելով այժմ
ևս կատարեալ զուարձութիւն և բերկ-

բանք կը գտնէր աշխատանքի մէջ. զիշերները գոհս սրտով հանդիսաւ կառնէր, առաւօտները զուարթ զուարթ գործի կիրթար: “Նանիր ու դատարկ ցոյցերու մէջ բաղդչէր որոնէր. մինչև անդամ և այժմ, եր լիութիւնն արդէն ոտք դրած էր նորա շէմքին, առաւօտէն մինչև գիշեր հասարակ գործաւորի շոր հագած կը բանէր. այժմ ևս չէր քամահէր պէտք եղած բոպէին սայլեկով թուղթ տանելու տպարան, այժմ ևս կաւեղէն էին նորա անօթները, որով իր պարզուկ ձաշը կընդունէր, անագեայ էր դգալը, որով իր թէյն կըմպէր: Օր մը Գրանկլինի կինը փորսելանի թասով կաթրերաւ նորան, որոյ մէջ արծաթի դգալ մը դրուած էր և նորա ապշութիւնը տեսնելով ասաց, “Ոիրելի մարդս, դուն ևս այնքան արժանի ես փորսելանի և արծաթի, ինչպէս և մեր դրացին” : — Այդ առաջին անդամն էր, կըսէ Գրանկլին, “որ արծաթ ու փորսելան երեցան տանս մէջ: ,

Ով որ մինչև այժմ չէ հասկցած Գհեօտէի *) խօսքերը, թէ “Ակսիր ընտանեկանէն և այս տեղէն ընդարձակիր զինքդ աշխարհիս մէջ ”, թող Գրանկլինի կեանքը դիտէ և այդ իմաստուն խօսքերումքին վերահասու լինի: Իր մտաւոր զարգացման վրայ միշտ հոգ տանելով Գրանկլին այժմ օրը մէկ ժամ որոշեց շահաւետ ընթերցանութեան համար, լրիկ սենեակի մէջ նստած հին ու նոր դարուց երեելի հանձարներու հետ կը բանակցէր, իմաստութեան և առաքինութեան զասերուն ականջ կը դնէր և գիտնական նկրտմանց

(*) Տիեզերահոչակ գերմանական բանաստեղծ. ծնաւ 1749 և վախճանեցաւ 1832: Սա և Շիլերը (1759—1805) Գերմանական բանաստեղծութեան ամենապայծառ աստղերն են: Միայն այս երկու անմահական բանաստեղծից սքանչելի շարադրութիւնքը բնագրին մէջ իսկ կարգալու համար կարժէ սովորելու գերմանական հարուստ լեզուն:

արդիւնքը դիտելով, զանոնք իրեն սեփականելու կը փութար: Ընտիր գրքերու համար շատ ստակ կը վճարէր, բայց որքան հարուստ ու սքանչելի գործեր կային աշխարհիս վրայ, որք գեռ նորան յայտնի չէին: Միայն իր վրայ չէր մտածէր նա, այլ հոգ կը քաշէր և նոցա մասին, որք իր նման դեռ շատ բանէ զուրկ էին աշխարհիս մեջ: Եւ այդ է, իրաւ, աղնիւ մարդոց պլխաւոր յատկանիշը, որ նոքա զբարին ոչ թէ միայն իրենց համար կը ցանկան, այլև ընկերները նորան հաղորդակից անել կուզեն: Ընտիր մտահան մը դիւրին կերպով շատերուն օդտաւէտ անելու միջոցներ որոնելով, 1731 թ. Գրանկին հասարակային գրադարան մը հիմնելու միաք յղացաւ: “Եորա գաղափարը իսկոյն համակրութիւն դտաւ, և յիսուն մարդիկ դիր գնելու համար առ ժամայն քառասնական շելինդ տալրով պայման դրին, որ այսուշետե իւրաքանչիւրը տարին տաս տաս շելլինդ վճարէ: Բաժա-

նորդներու թիւը գալով բազմացաւ և գիւղագելիքիայի “Գրասիրաց խումբը” տաստարիէն յետոյ ընկերութեան իրաւունք ստացաւ: Յաւելցնենք ի դէպ, որ այդ ընկերութեան գրատունը 1790 թ. զրեթէ 8,000 հատորներ ունէր: 1850 թ. նոցաթիւը 32,000ի հասաւ, իսկ այժմ 500,000 է: Ընթերցողս կարող է ինքն ասել, թէ որքան օդտաւէտ էր այդ գրատան հիմնարկութիւնը **): Գրանկինի հայրենեաց համար, որ նորա տուած բարի օրինակին հետեւլով այժմ զրեթէ ամէն տեղ մի մի հարուստ գրադարան ունի:

Ընսպառելի էր Գրանկինի աշխատասիրութիւնը: Քուութը Ընդիւնայէն բերելու փոխարէն, որ միշտ աւելի թանկ կընսաէր ուղեց զայն ինքը պատրաստել: Այդ միտ-

(**) Տե՛ս. Ազգային կրթութիւն. Հրապարակական ընթերցանութիւնք Եդուարդ Լարուկէի, տպագրութիւն Պ. Միքայէլի Միանսարեանց, Ս. Պետերբուրգ:

քըն իսկոյն կեանք ստացաւ և Ամերիկան արուեստի նոր ճիւղով մը հարստացաւ։ Նորա գործարանը տարազի տեղ բռնելով ուրիշ քաղաքներու մէջ ևս թղթի գործարաններ հիմնեցին։ — Եորա տպարանի մէջ ամենահմուտ գրաշարներ կը վարժուէին, երբեմն Գրանկլին այլև այլ գործիքներ կընծայէր նոցա և հեռաւոր քաղաքներ կուղարկէր, որ գնան և իրենց արհեստն ուրիշներուն սովորցնեն և կամ ինքեանք տպարան բանան։ Եթէ բանային, առ ժամանակ ստակով ևս կօգնէր, և երախտապարտ աշակերտներն երեք չէն չարագործէր նորա վեհանձն մարդասիրութիւնը։

1732 թ. Գրանկլին և գաղթականութեանց համար առանձին նշանակութիւն ունեցաւ։ Այդ թուականին Վիրդինիայի անտառներու, յատկապէ Աաշխնդաօն անուն հասարակ մարդու տան մէջ մանուկ մը լոյս տեսաւ, որ Գէորգ անուն ընդունեց։ Գէորգ Աաշխնդաօն։ Իրեւ աստ-

ուածային գաղտնի խորհուրդ մը, մարդկային աչքերէ հեռու, ուշիկ կապրէր նա որորանի մէջ և աշխարհս դեռ չըդիտէր, որ այդ հրաշեայ մանկիկը օր մը փառօք և յաղթութեամբ սուսեր հանելու էր յազատութիւն բռնօրէն Ճնշեալ հայրենեաց։

Սակայն մէկ ուրիշ բան մ'ևս լցո տեսաւ նոյն իսկ թուականին, ելանելով աղնիւ Գրանկլինի սրտէն ու գլխէն—այդ էր մէկ Օրացոյց, որ քսանեհինդ տարի նոր ի նորոյ խրատելով և ուսուցանելով նահանգէ ի նահանգ պիտի շրջէր և զօրութիւն ու լոյս տար աղքին—առաջեկայ դժուար փորձանքներուն արիապէս համբերելու համար։ Որորանի մէջ մանուկ դիւցազն ևս պատանի դառնալով կազդուրիչ մնունգ ստանալու էր այդ գրքոյին։

Պէտք է որ արեւը ձառագայթէ, պէտք է որ լոյս սփռէ տիեզերքի մէջ։ պէտք է որ ազնիւ բնաւորութիւնը «սեր շնչէ», ի սեր կենայ, սիրով ի մահ իսկ ննջէ, . պէտք է որ մէկ անգամ տեսած ծշմարտութեանը

հպատակելով զայն քարողէ։ Երգելք մը
չկայ աշխարհիս երեսին, որ կարողանար
երկիւղ ազդել նորա սրտին և խափանէր
հետեւ երկնային ձայնին—ոչ հուր, ոչ
բանտ և ոչ սուր։

Վմենայն առաւօտ երիտասարդ Ֆրանկ-
լին—նա գեռ նոր քսանեվեց տարեկան էր,
երբար օրացոյցի առաջն տարեհամարը
հրատարակեց—միայնակ սենեկի մէջ կը
նստէր և առաքինութիւն ու իմաստու-
թիւն քարողելու քահանայական պաշտօ-
նի մէջ զինքը կը մարզէր։ Իր անցեալ՝ դա-
սերով հարուստ կեանքը դիտելով, նա կը
տեսնէր, որ ինչոր բարի բան արած ունէր,
իր ներքին մարդոյ լաւագոյն ձայնին հնա-
զանդելով արած էր և ինչ որ վատ—նո-
րան հակառակելով։

Օրացոյցը լոյս տեսաւ Ռիչարդ Ասուն-
դերսի կեղծ անուամբ “Խեղծ” Ռիչարդի
Օրացոյցը,, վերնազրով։

Վյդ օրացոյցի մէջ գործածուած դրու-
թեան եղանակի վրայ երկար զրուցելու

փոխարէն լաւ է որ կտոր մը յառաջ բե-
րենք նորա մէջէն։ Վանենք 1758 թ. հա-
մարը, օրացոյցի վերջին համարը, որոյ մէջ
Գրանկին (գարձեալ Ռիչարդ Ասուն-
դերսի անուամբ) կենսական իմաստութեան
դասերը զանազան հին հատորներէն միա-
սին գումարելով, մէկ պատմութեան մէջ
գեղեցիկ ամփոփած էր։ Վյդ դասերէն
շատերը, ինչպէս որ ընթերցողս շուտով
կը տեսնէ, անմահական առածներու կար-
գըն անցած են։

“Հարստութեան ձանապարհ,, կո-
չուածյօդուածի սկիզբն հեղինակը կըսէ,
թէ շատ կուրախանայ, երբոր ‘‘խեղծ’ Ռի-
չարդի,, խօսքերը ուրիշներու շրժունքէն
կը լսէ և կը շարունակէ հետեւ ալ կերպով։

“Տեսէք, թէ որչափ պիտի ուրախանա-
յի հետագայ անցքի վրայ։ Քանի մ'օր ա-
ռաջ ես կանգ տուի ձիուս այն տեղ, ուր
որ սնանկացեալ վաճառականի մը՝ գոյքերու
ծախուելուն պատճառով՝ ահազին բազ-
մաւթիւն մը գումարուած էր։ Կուանա-

Հարկութեան բոպէն տակուին հասած չէր, մարդիկ վատ ժամանակներու վրայ կը զբուցէին: «Նոցամնն մին մաքուր ու պարզակ հազուած ալեւոր ծերունու մը դիմելով, ասաց. «Հայր Աբրահամ, խօսիր, լսենք թէ ինչ կըսես աս վատ ժամանակիս մասին: Երդեօք այս ծանր հարկերը մեր երկիր իսպառ չեն քանդեր, ի՞նչպէս անմինք, որ կրնայինք վճարել արդ հարկերը: Ի՞նչ խորհուրդ կուտաս, հայր Աբրահամ, :

Հայր Աբրահամ տեղէն բարձրանալով պատասխանեց. «Եթէ կուզէք ականջ գընել խորհրդիս, ասելիքս կարճ կը կապեմ, որովհետեւ իմաստունին և մէկ խօսքը բաւարկան է, իսկ յիմարին հազարն ես քիչ ինչպէս որ կըսէ խեղճ Ռիչարդը, :

Ամենեքան յայտնեցին, թէ կը ցանկան լսել, և ծերունին, մինչդեռ մարդիկ նորա շուրջը խռնուելով տեղ բռնելու վրայ էին, շարունակեց խօսքն և ասաց:

«Քնիերք ե դրացիք, մեր հարկերն իրաւ շատ ծանր են: Եթէ տէրութենէն

սահման ածներէն ջոկ ուրիշ հարկեր չունենացինք, գեռ կարելի եր համբերել և թերես հեշտիւ վճարել, բայց տեսէք, որ մեք նոցամնն զատ ևս զեռ շատ հարկեր ունինք վճարելու: Տէրութեան հարկերէն երկու անդամ աւելի ծանր հարկ դրուած է վրայներս մեր ծուլութեամբ, երեք անդամ աւելի մեր հապարառութեամբ ու հինգ անդամ աւելի մեր յիմարութեամբ, և այս հարկերը ոչ մէկ իշխան կամ պատգամաւոր կարող չէ թեթեացնել կամ նուազացնել: Ասկայն եկեք, խորհուրդ տեսնենք գուցէ փրկութեան հնար մը զբանիք, ով որ ինքն իրեն կօգնէ, Աստուած ևս նորան կօգնէ, կըսէ խեղճ Ռիչարդը օրացոյցին մէջ :

Եթէ տէրութիւնն մը կամենար, որ ազգին իր ժամանակի տասներորդ մասը առանց վարձատրութիւն ստանալու նորան ծառայէ, ապաքէն միթէ չիք ասեր, թէ շատ կոպիտ տէրութիւն է, բայց դատարկութիւնն աւելի ժամանակ կը խի մեզ

մէն, եթէ հաշուենք այն բոլոր ժամերը, որ
կը վատնենք անգործութեամբ, սնոտի վայ-
րաբանութեամբ և կամ անօդուտ գործե-
րու և նանիր ձեռնարկութեանց վրայ:
՞Օռուլութիւնն իր ետևէն հիւանդութիւն
կը բերէ և մեր կեանքը կը կարծէ: ՞Օռու-
լութիւնը ժանդէ, որ կապականէ և կու-
տէ, իսկ աշխատութիւնը միայն կը հնա-
ցնէ, և շատ անգամ գործածուած բանա-
լին քանի զնայ աւելի կը փայլի, ինչպէս որ
կըսէ խեղճ՝ Բիշարզը: Ի՞նչքան ժամանա-
կը կորցնենք քնոյ վրայ, մոռնալով որ քը-
նող աղուէօք հաւ չի բոնէր և որ զերեզ
մանի մէջ դեռ բաւականի ժամանակ կու-
նենանք քնելու, ինչպէս որ կըսէ խեղճ՝ Բի-
շարզը: Եթէ ամէն բաներէն առնեաթան-
կապինը ժամանակնէ, ապաքէն նորա վատ-
նումը միթէ պարսաւելի շռայլութիւն չէ.
կորած ժամանակը յետ չփառ վերստին,
կըսէ խեղճ՝ Բիշարզը: Աւընմն, եղբայրք,
արթուն լինինք, հսկենք և դործենք և
շահաւետ բան գործենք: Այդպիսով ամէն

բան, որ մինչեւ այժմ դժուար կը թուեր
մեզ, կը թեթենայ և ի գլուխ կուգայ:
՞Օռուլութիւնն ամէն բան կը ծանրացնէ,
իսկ աշխատասիրութիւնն ամէն բան թե-
թե կընէ, և ով որ ուշ կը զարթի, ամ-
բողջ օրը պատէ պատ կընկնի և հազիւ ե-
րեկոյեան նպատակին կը հասնի. պղերգու-
թիւնը տարտամ կը շարժի և սրավագաղ-
քատութենէն կըմբռնուի, ինչպէս որ կըսէ
խեղճ՝ Բիշարզը: Կուգե՞ն լինիլ առողջ,
հարուստ, իմաստուն—ջան դիր գործիդ
առաւառեան զուարթուն:

Երդ, լաւ ժամանակներու յուսով ու
կարօտով ի՞նչ օգուտ կըստանանք. ներկայ
ժամանակիս բարւոքումը միթէ՝ մեր ձեռ-
քէն կախուած չէ: Վշխատասիրութիւնը
կարօտելու հարկ չունի, և ով որ յուսով մի-
այն կապրի, անօթի կը մեռնի: Չկայ հան-
ձար առանց փութոյ. օգնեցէք ինձ ձեռ-
ներ, քանզի չունիմ ես գյոքեր: Երհեստի
յատակն ուկի՞է, ինքը յարդելի, բայց մի-
այն պէտք է որ մարդս զայն սիրով կատա-

թէ: Վաղցը թէև կը մօտենայ աշխատաւոր
մարդու շէվքին, բայց չի կրնար ներս մրտ-
նել. ներս չի մտներ և դատաստանի պաշ-
տօնեան, որովհետեւ աշխատաւորը պարտ-
քերը միշտ կը վճարէ, իսկ անհոգը կը շա-
տացնէ: Դնենք, որ ոչ գանձ զտած ես և
ոչ հարստութիւն ժառանգած — փոյթ
չէ. աշխատասիրութիւնն է բաղդի հայրը:
Սստուած ամէն բան կը չնորհէ աշխատա-
սէրին, ուստի գնա, դի՞ր ձեռքդ արօտի
մաճին, մինչ ծոյլերը մնան տարտամ ի
մէջ մահճին և թող շտեմարանքդ լիու-
թեամբ ուռչին: Աշխատիր քանի որ օրը
կը տեի, քանզի չպիտես, թէ վազն ինչ
արգելք կը գտնես: Մէկ այսօրը երկու վա-
ղէն թանկ է: Եթէ ունիս վազն անելու
գործ կարեսը, մի՛յետ ձգիլ և վերջացուք
իսկ այսօր: Եթէ սպասաւոր լինեիր, մի-
թէ՛ չիր ամաչեր անգործ երկելու բարի
աիրոջդ առջեւ արդ, քո տէրը ինքդ ես.
ամաչիր ուրեմն, եթէ ինքդ քեզ անգոր-
ծութեան մէջ գանես: Որովհեաւ այսքան

բան ունիս անելու յատկապէս քեզ հա-
մար, ընտանիքիդ համար, հայրենիքիդ ու
տէրութեանդ համար, ուստի այգուն այ-
գուն ոտքի կանգնիր և տես, որ արել վայր
նայելով շատէ, թէ նա պառկած է դեռ
անփառունակ: Աստարիր գործդ առանց
ձեռնոցի և մի՛ մոռնար, որ ձեռնոցով կա-
տուն չի բռնիր մաւկ: Մեր գործերը շատ
են ի հարկէ և ձեռներս տկար, բայց այդ
ոչինչ — ամէն բան կը յաջողի, «միայն թէ
սիլով, հանդարա ու խելօք ջանք զլնենք
բարւոյն ու չընինք անհոգ»:

Կնձ կը թուի թէ ձեզմէն մի քանիք կը-
սեն, մի՞թէ մարդս բնաւ հանդիսաւ և ա-
զատ ժամ շնորհելու չէ իրեն: Ծարեկամ,
լսիր, թէ ի՞նչ կըսէ այդ մասին խեղճ՝ Ոի-
չարդը: Եթէ կուզես ազատ լինել, լու-
գործածէ ժամանակդ և ոչ մի ըուպէ մի
կորցներ, ըստ որում ոչ մի ըուպէի վստա-
հել կարող չես: Վզատութեան կը համնի
փութաջան մարդը միայն, իսկ գանդադը —
յաւիտեան, որովհետեւ ազատութիւնն ու

գանդաղ ծուլութիւնը անզուղելի բաներ
են: Ալ կարծես, թէ ծուլութիւնն աւելի
քաղցր կեանք կընծայէ քեզ, քան թէ
աշխատանքը: Աչ քանզի դատարկապորտ
ծուլութենէն շատ վշտեր կը ծաղին և
անօգուտ հանգստութենէն դառն հողսեր:
Փախիր զուարձութենէն, և նա ինքն ե-
աւելի կը վազէ: Լաւ պահիր խանութդ
և նա քեզ լսաւ կը պահէ: Եթէ կուզես,
որ գործդ յաջողի, ինքդ զնա ետևէն, ե-
թէ չես ուզեր — ուղարկիր ետևէն: Խնամ
քի պակասութիւնն աւելի վնասակար է,
քան թէ հմտութեան պակասութիւնը:
Ուրիշներու խնամքին վրայ ապաւինելը —
շատերուն կորուստ բերած է. քանզի աշ-
խարհիս գործերուն մշջ մարդս քանի քիչ
վնասահէ ուրիշներու վրայ, այնքան աւելի
իրեն կ'օգտէ: Գործերդ ինքդ հոգա — այս
է ամենալաւ բանը: Աշխատասէր ուսա-
նողը անշուշտ կըստանայ գիտութիւն և
շրջատես մարդը հարստութիւն, ինչպէս
որ քաջը զօրութիւն և աւաքինին արքա-

յութիւն: Կուզեր գտնել հաւատարիմ
ծառայ, ծառայիր ինքդ քեզ: — Ամե-
նամանը գործերուդ վրայ անզամ հոգ
տար. որ մը մէկ բւեռի (մեխ, գամ) պակ-
սելով նալը կորաւ, նալի պակսելով ձին
կորաւ, ձին պակսելով ձիաւորը կորաւ —
թշնամին հասաւ ետևէն ու սպանեց. այդ-
պէս ամենայն ինչ կորաւ, որովհետեւ
հոգ չեր տարած գամի պէս չնչին բանի
վրայ:

Այսքանը հերիք թող լինի, ընկերը իմ
հոգասարութեան և աշխատասիրութեան
մասին, որ իւրաքանչիւր մարդ ունենալու
է սեփական գործերու նկատմամբ: Ուսիցն
ով որ կուզէ հաւատամի արդիւնք քաղել
այդ բաներէն, պէտք է որ չափաւորու-
թիւնը բանեցնէ կեանքի մշջ: Աըքան կու-
զես քրտինք թափէ, աշխատէ, բայց թէ
վնասակդ պահէլ չը կրնաս, աղքատ կը
մնաս, կըսէ խեղճ քիչորդը: Պարարտ խո-
հանոցը նիշար կտակ կը զրէ: Առեզե՞ն հա-
րուստ գառնալ. ինչ փութով որ կը վաս-

արկես, նոյն փութով ալ պահպանիք ։
Նդկասատանով Պահիացիք չը հարս-
տացան, որովհետեւ ծախքերն աւել էր,
քան արդիւնքը։

Ուրեմն մոռցէք ձեր թանկ յիմարու-
թիւնները, և ծանր ժամանակներու, հար-
կերու վրայ արտնջելու հիմք չի մնար այ-
նուշեաւեւ։ Պէկ շայլութիւնը աւելի
թանկ կը նստէ, քան թէ երկու մանկանց
կիթութիւնը, կըսէ խեղճ Ռիշարդը։ Դուք
կը կարծէիք թերես, որ քիչ մը թէյ, եր-
բեմն փունչ, երբեմն ընտիր ճաշեր, քիչ
մ'աւելի սիլուն շորեր և մերթ ընդ մերթ
փոքրիկ խնջուք շատ թանկ չեն նստեր,
սակայն միտեներդ բերէք, սիւելիք բարեկամք,
որ հատիկները շատնալով կոյտ կը կաղմն։
Զգոյշ եղեք փոքր ծախքերն։ Երբեմն
չերիք է փոքրիկ ծակ, որ մեծ նաւ գնայ
ծովի տակ, կըսէ խեղճ Ռիշարդը։

Դուք հաւաքուած էք այժմ այս դա-
տակ պահուածանքն գնելու, այդ բաները
գուք բարիք կանուա էք, բայց քիչ մը խոր

նայեցէք, և կը տեսնէք որ թերես լունիտ
են։ Յօյսերդ դրած էք էժանութեան վրայ
և իրաւ, գուցէ յատուկ զնէն էժան ծա-
խուին, բայց և այնպէս, եթէ ապրանքը
անշուշտ հարկաւոր չէ, միշտ թանկ կը նըս-
տի։ Ունե աժէր մէկ վարապէ, նախ պիտոյիդ
մտիկ արա, կըսէ խեղճ Ռիշարդը և կաւել-
ցնէ, թէ չափեաք բաներ գնելով, պէտքերն
ալ կը ծախես շուտով։

Եյդով կուզէ ասել թերես, որ էժա-
նութիւնը միայն երեւութական է և ոչ
իսկական, կամ թէ առքդ աւելի վնասա-
կար է, քան օգտակար, ըստ որում գործիդ
հարկաւոր դրամը կը նուազացնէ։ Պիւս
անդ նա կըսէ, թէ էժան զնելով շատերն
իրենց տունը քանդեցին։ Խմաստուն մար-
դիկ ուրիշներու վնասէն բան կուսանին,
իսկ յիմարներն իրենցին անդամ չեն
խրատուիր։ Ըատ մարդիկ դատարկ որո-
վայնով անկողին կերթան և գերդաստա-
նը քաղցով կիսամահ կընեն, միայն մէկ
նոր զգեստով պահնելու համար։ Աերպաս,

մետաքս, թաւիշն ու ասուին շատերուն
օջախը մարեցին: Այդ իրերը կեանքի պի-
տոյքներ չեն, բայց և այնպէս ո՞քքան մար-
դիկ տե՛նչանօք կը փափագին նոցա, քան-
զի սիլուն են արտաքուսա: Վարդուս ա-
րուեստական, շինծու պիտոյքներն այդ-
պիսով կը բազմանան, մէկ աղքատի փոխա-
րէն հարիւր կարօտեալք յառաջ կուգան:
Այդպիսով մեծատունները կը չքաւորին և
պարտք կառնեն այն մարդիկներէ, զորս ա-
ռաջ կատէին և որք աշխատութեամբ ու
շափաւորութեամբ իրենց պատիւն և տու-
նը կը պահէն: Ումանք փոքրիկ հարստու-
թիւն ժառանդելով կը կարծեն, թէ անըս-
պառելի է, դեռ ցերեկ է և գիշերը հեռու,
կը սեն նոքա. շատէն քիչ հանուելով վը-
նաս չի գար: Վանկտիք ու յիմարք կը հա-
ւատան, թէ մէկ փարան ու քսան տարին,
բնաւ վերջ և ծայր չունին. բայց նայիս
ալիւրի տոպրակին, եթէ մջէն միշտ հա-
նես ու վրայէն նորը չ'ածես, շուտով կը
հասնես յատակին, կըսէ խեղչ օիչարդը

և կաւելցնէ, թէ երբ ջրհորը ցամաքի,
կիմանան յարգը ջուրի:

ՊՃՆԱՍԷՐ Հպարտութիւնը պատուհաս
է աշխարհի համար: Ապարտութիւնը յան-
դուգն աղքատ է, ինչպէս և կարօտու-
թիւնը, թերես աւելի սկերես: — Վէկ
զարդ գնելէդ ետքը պէտք է տասն հատ ալ
վրայէն աւելիցնես, որ չափը գտնես: Բայց
խեղճ օիչարդը կըսէ. աւելի հեշտ է առա-
ջնն փափագը Ճնշել, քան թէ յաջորդնե-
րը յաղեցնել: Եւ աղքատի յիմարու-
թիւնը, որ կուրօրէն հարուստին նմանել
կուզ, նուազ չէ այն գորտի յիմարութե-
նէն, որ եղին նմանել ուզելով փքուեցաւ
ու պայթեցաւ:

ՎԵՃ նաւերը կարող են աղատ աղատ
մանել ծով; փոքրիկները պարտաւոր են
Ճամբայ բռնել եզերքով: Ապարտութիւնը
Ճաշ կուտէ մնափառութեան հետ, ընթ-
րէքը ատելութեան հետ: «Եղինպէս հպար-
տութիւնը լիութեան հետ կը նախաճաշէ,
կարօտութեան հետ կը ճաշէ և խայտա-

ռակութեան հետ կընթրէ: Եւ ի՞նչ դին
ունին վերջապէս այդ հպարտութիւնը,
փքանալը, շուք ու զարդը, որոց համար
մարդիկ այնքան տառապանք, աղէտ և
վիշտ կը քաշեն. ոչ առողջութիւն կու-
տան մարդուս, ոչ ցաւերը կը մեղմեն: Ո՞եկ
մազի չափ չեն բերեր պատիւ, այլ միայն
նախանձ ու չարիք անթիւ:

Երդ միթէ յիմարութիւն չէ այդպիսի
չնչին բաներու համար պարտքի տակ ըն-
կնելը: Այս վաճառման պայմանները վեց
տասու այ վարկ (քրիդի) կուտան մեղ, և
մեղմէն շատերը թերես միայն այդ պատ-
ճառով եկած են այս տեղ, որովհետեւ քը-
սակէն նազդ դրամ հանել չեն ուզեր և
առանց ստակի դիւրաւ պճնելու յոյս ու-
նին: Բայց մտածեցէք, եղբայրք, թէ ի՞նչ
կընէք պարտքի տակ մանելով: Դուք իշ-
խանութիւն կուտաք ուրիշին ձեր ազա-
տութեան վրայ: Եթէ որոշեալ ժամանա-
կին պարտքը չը հատուցանէք, պարտատէ-
ըին հանդիպելու պիտի ամաչիք, հետը խօ-

սելու պիտի երկնչէք, ողորմելի, ստորա-
քարշ, թշուառական ներողութիւններ պի-
տի յառաջ բերէք, հետղիւնէ ձեր արդա-
րութիւնը կորցնէք և վերջապէս մինչեւ ի
վատթար ստութիւնը նուաստանաք: Ալ-
տութիւնը երկրորդ մեղքնէ, պարտք անե-
լը—առաջին: «Կոյնպէս. ուղեղ կանգնել
շատ դժուար է դատարկ պարապ քսակին:

Ի՞նչ կըսէիք, եթէ իշխան մը սասարիկ
հրովարտակով, բանտ ու կապանք սպառ-
նալով արգելէր ձեզ՝ արանց և կանանց ըստ
չափոյ կարողութեան հազնվելու: Ոչ ա-
պաքէն կըսէիք թէ ազատ էք հազնուելու,
ինչպէս որ կամենաք, որ այդ իշխանը բրո-
նակալ է: Երդ միթէ չէք տեսնէր, որ այդ
իսկ հազուստի համար պարտքի մէջ ընկ-
նելով կամովին բանակալութեան տակ կը
մննէք: Պարտատէրը զօրութիւն ունի իր
ուղածին պէս ձեր ազնուութիւնը խլելու:
Վաղանք գնելէն յետոյ հատուցման վրայ
գուցէ շատ քիչ կը մասձէք. բայց փոխա-
ռան ունի աւել յիշողութիւն, քան փո-

իստու : Փոխառուն փոխառուի ստրուկն է
և պարտապանը պարտատէրի ծառան,
ուստի ատիր այդ կապանքները, պահպա-
նիր ազատութիւնդ և հաստատիր ինք-
նովախութիւնդ . եղի՛ր աշխատասէր և
տղատ, եղիր չափաւոր և ազատ : Առ այժմ
կուցէ շատ լաւ վիճակի մէջ ես և քիչ մ'
աւելի ծախք անելն անմնաս կը համարես.
բայց յիշե՛ր, որ ծերութիւն կայ, նեղու-
թիւն կայ: Վրդինքը վաղանցուկ է, բայց
ծախքը միշտ կայ ու կայ, քանի որ կապ-
րես: Աւելի հեշտէ երկու հաց շինելքան
թէ մէկը տաք պահել ուստի, լաւ է քնել
քաղցած փորով, քան թէ զարթել պարտ-
քերով : Եթէ քրաստմբ վասակածդ պահ-
պանես, գտած կինիս իմաստութեան քա-
րը, որ բոլորը ոսկի կը դարձնէ: Եւ երբ
որ իմաստնոյ քարը գտնեք, այնուհետեւ
աւելի չէք գանգստեր վաս ժամանակներու
և շափաղանց հարկերու վրայ:

Այդ է, բարեկամք, բանականութեան և
իմաստութեան դասը. սակայն չափաղանց

յոյսեր մի՛ դնէք աշխատասիրութեան,
ժուժկալութեան և խոչեմութեան վրայ,
թէ գոքա պատուական բաներ են: Ա-
ռանց Աստուծոյ օրհնութեան ամենայն
ինչ կը մնայ ունայն, կը սէ խեղճ Բիշարդը.
ուստի խոնարհարար խնդրեցէք Աստու-
ծոյ օրհնութիւնը և գթուա սրտիւ օգնե-
ցէք այն ընկերներուն, որք առ այժմ զուրկ
են նորամին:

Դարձեալ մի խօսք. “Ով որ չուզէր խոր-
հուրդ լսել շատ դժուար է նորան օգնել,,:

Եյդպէս աւարտեց ծերունին իր ճառը:

Վարդիկ ուշադրութեամբ ականջ դը-
րին, խրամները շատ հաւանեցին, բայց նոյն
խոկ ժամուն—ասես թէ հասարակ քարոզ
լիներ լսածները—բոլորովին հակառակը
գործեցին. որովհետեւ սակարկութեան ըս-
կուելուն պէս ալեւորի խօսքերն և իրենց
սրտ՝ երկիւզն մոռնալով, կուրօրէն յար-
ձակուեցան ապրանքներու վրայ:

Շարեսիրտ ծերունին, ինչպէս որ կե-
րեի, օրացոյն հիմնօրէն ուսումնասիրած

զինը։ Վ.յն խորհուրդները հոսած էին
նորա հողին, աղբիւրը նորա կեանքի մէջ
էր։ Խմասութեան գոհարներէ շատերը
գուցէ ազգի շրժունքն ու զրքերէ հա-
նուած էր, բայց և այնպէս խորին պատոյ
արժանի էր որ նա մէկ անգամ գտած բա-
նին նոր, առանձին կնիք կուապր, որ ազ-
գի համար փրկաւէտ բաներուն միշտ աչք
ու ականջ կը գնէր և պահուած գանձերն
ի լոյս հանելով զանոնք ընդհանուր սե-
փականութիւնն շինելու ուղիղ ճամբան
գիտէր։ Աերոյիշեալ յօդուածը “Հա-
րսոտութեան ճանապարհն”, անունով ոչ
թէ օրադոյցի միջնորդութեամբ, այլ և
մասնաւոր տպագրութեամբ շատ տարա-
ծուեցաւ։ Վ.յլ այլ քաղուածներ մեծ
թերթի վրայ տպուելով ապակեոր շրջա-
նակի մէջ պատերու վրայ կախուեցան իր-
րէ զարդ։ Օրացոյցը արդէն առջի համա-
րէն սկսեալ մեծ հաւակրութիւն ստացաւ։
Ժողովրդի անտեսական և բայցական յա-
ռաջադիմութեան վրայ գեռ երպէք այդ-

ու լու մարսած էր։ Անունիս սոտէալ յի-
շուելը ուրիշներուն գուցէ ձանձրոյթ կը
պատճառուէր, այլ ոչ ինձ, ընդ հակասանկն,
անձնասիրութեանս համար այդ շատքադ-
ցըր փաղաքշանք էր, թէև հաստատ զի՞-
տէի որ իմ անուամբ ասուած իմաս-
տուն խօսքերու տամներորդ մասն անգամ
իմը չէր յատկապէս, այլ միայն արդիւնք
էր հնձոց, որ ես հնձած էի ամենայն դա-
րերու և ազգերու աւողջ բանականու-
թեան դաշտի վրայ։ Վրդ իմաստուն խօս-
քերու կրկնութիւնը վերստին օգուտ բե-
րաւ ինձ, քանզի թէև առջեւ նոր կապա-
ցու մը գնելու միաք ունէի, բայց ծերու-
նու ճառը լսելով որօշեցի բան չըգնել, և
վերադարձ դէպի տուն հին կապաս այլ-
ևս քիչ մ'երկար հագնելու մաքով։ Ըն-
թերցող, եթէ դուն ալ այդպէս անես,
ինձի նման կը շահուիս,, :

Դասանալով այն “ատամանորդիս, պէտք
է ասել, որ Գրանիկին համեստութեամբ
շատ կը փոքրացնէր իր վաստակաց յատուկ

պիսի խնամ տարուած չէր: Տարիե տալւ
օրացոյցի բաժանորդաց թիւը բազմանա-
լով վերջապէս 10,000 է հասաւ, որ այն
ժամանակ Վմերիկայի մէջ չը տեսնուած
բան էր: Եւ որքան հետևողներ գտաւ Գլ-
րանկին այդ ասպարէզի վրայ: Օրացոյցի
միջնորդութեամբ ժողովրդի մէջ լուսաւո-
րութիւն մացնելն ընդհանրապէս իրրե ա-
մենայարմար եղանակ համարուելով այդ
միջոցը այնուհետեւ շատ ու փոքր յաջո-
ղութեամբ սկսաւ ամենայն տեղ գործա-
ծուել: Ազգային օրացոյցներու թիւը, որք
Գլրանկինի ժամանակէն Եւրոպայի մէջ
հրատարակուել սկսան, հարիւր հազար-
ներով պէտք է համարել:

Գլրանկինի գրութեան եղանակը միշտ
ամենալաւը կը մնայ ազգասիրական գոր-
ծունէութեան համար: “Օրացոյցի մջ,,
կըսէ Մինչէն, Գլրանկին հիանալի պար-
զութեամբ կուսուցանէր զիւղական տըն-
տեսութեան, անասնաբուծութեան, ար-
հեստից և մարդկային առողջապահու-

թեան համար կարեոր միջոցները և ժո-
ղովրդական իմաստութեան անպաճոյն
ձեռվ ցոյց կուտար այն կանոնները, որք
մարդկային բազգի հիմքը կը կազմեւ:
“Խեղջ Ծիչարդի իմաստութիւնը,,
առաջնորդ է գործի, հսկողութեան, չափա-
որութեան, խոհեմութեան և ազնուու-
թեան: Վմենահասարակ խօսքերով,,
ամենաճշմարիտ ու մաքուր ոճերով նա խոր-
հուրդ կուտայ ազգակիցներուն և բարո ա-
կանութիւն կը քարոզէ յանուն շահի:
“Առա բոլոր խորհրդածութիւններու նը-
պատակն այս է, թէ առանց առատինու-
նէան հաստատուն շահ և բաղր չկայ: Այս
հայեցողութեան մէջ հետզհետէ զօրանա-
լով վերջին տարիները նա կըսէր, թէ ա-
ռանձին մարդու և թէ՛ աէրութեան բաղ-
դի միակ երաշխաւորն և անսուտ հաշուե-
ցոյցը առաքինութիւնն է: Վմենախարդախ
մարդն անգամ, կըսէ նա, ազնիւ մարդ կը
դառնայ, եթէ առաքինութեան օգուտը
ճանաչէր,,:

Օրացոյցի տարածման եղանակին մէջ անդամ գործնական ճամբար կը բռնէր: Եմերիկայի մէջ մինչև նոր ժամանակը հին լաթերը սովորաբար դէն կը ձգուէին. Գրանիկըն կը խոստանայ, որ պատրաստ է ստակի տեղ մէկ մէկ օրացոյց տալ հին լաթերողներուն և այդպէս հնոախները կուգան կը զիզուին նորա թղթի գործարանին մէջ: Եյդ ձեռնառու էր որպէս վաճառողին, նոյնպէս և գնողին:

Երդ, ստէպ կը պատահի աշխարհիս մէջ, որ մարդուս բարի գործերու ազնիւ սէրը նորա հարստանալին եաքը հետզիտէ կը մարի և նիւթական շահասիրութիւնը ժամ առ ժամ հոգու փրայ կը տիրանայ: Գրանիկըն այդպէսներէն չէր: Արշափ որ նորա բարերաստութիւնը կ'ածէր, նոյնչափ և կը զօրանար նորա փափազը ուրիշներուն նպաստաւոր լինելու և ըստ կարելոյն նըր կրտելու, որ լոյսն ու բարին աշխարհիս մէջ հաստատուին: Եյս անդուլ նկըրտման ժամանակ չէր մոռանար, որ ինքն իր

փրայ հոգալով, իր կատարելագործութեան փրայ աշխատելով կարող էր միայն յառաջադիմութիւն անել և իր փափագներուն հաւասար քայլ բռնել: Յորա ուսման և զարգացման գիխաւոր աղբիւրը դարձեալ գրականութիւնն էր:

Ի՞նչ նպատակով կը կարգան շատերը, կամ միայն ժամանակը վատնելու և կամ, որ աւելի չարն է, վատ գրականութեան անպիտան վիժածներու մէջ վայելք գրտնելու նպատակով: Գրանիկըն միայն անարատ ու յատակ աղբիւրներու կը դիմէր, նորա ընթերցանութեան միա՛ խորհուրդը մտաւոր ու բարոյական կատարելութիւն էր: Օտար գրականութեանց քանի մը գանձերը թարգմանութեամբ գրուած էին նորա առջև, միւսները նորա համար իսպառ անմատչելի փակուած էին: Եյդ փայուած շարադրութեանց յատուկ բընազիրը կարգալու փափագ ստանալով, նա որոշեց օտար լեզուներ սովորել: Վէ փափագ և յղանայր Գրանիկընի վսիմ հո-

զիս — այն և կ կատարէր անպատճառ, նա
մանաւանդ որ անկարելի բան երէք չէր
փափագէր:

Օտար լեզուներ սկսայ սովորել 1733
թ. կըսէ նա: (Ուրեմն երբոր քսան և եօթ-
արբեկան էր): «Վարձ միջոցին այնչափ
ընտելացայ Փրանսերէնին, որ այդ լե-
զուով գլուխ արդէն դիւրաւ կը կարդայի:
Այնուհետեւ դիմեցի իտալերէնին: Ռարե-
կամիներէս մէկը, որ նոյնպէս այդ լեզուն
կուսաներ, շատ անդամ միասին ճատրակ
խաղալու կը հրաւիրէր զիս: Տեսնելով որ
այդ բանը բաւականին ժամանակ կը խլէ
ինձմէն, ես վճռեցի միայն այն պայմանով
խաղալ հետը, որ տանողը իւրաքանչւրը
խողէն վերջը իրաւունք ստանայ դաս մը,
այսինքն բերանք սերտելու քերականական
կանոն և կամ թարդմանութիւն մը տա-
լու տարրուղին, որ և պարտաւորուի աղ-
նու արար պատրաստել զայն մինչև յետա-
գայ տեսութիւնը: Որովհետեւ մեք գրեթէ
հաւասար կը խաղայինք, ուստի երկուքս

ալ հուասար կը ջարթենք մէկզմէկու Խտա-
լերէնին մէջ: Ետքը Սպանիերէն գրքեր
կարդալ ուզելով այդ լեզուն ևս սովորեցի:
Վ երն արդէն յիշած եմ, որ մանկութեա-
նըս ժամանակ ես միայն մէկ տարի լաթի-
նական վարժատուն գնացի: Ա աթիներէնը
յետոյ իսպառ անտես մնաց: Բայց Գրան-
սերէն, Խտալերէն, Սպանիերէն յեզունե-
րուն ընտելանալէն վիրջը, երբոր օր մը
լաթիներէն Ըստուածաշռւնչ ընկաւ ձեռ-
քըս, զարմանալով տեսայ, որ աւելի կը
հասկնամ, քան թէ կը կարծէի: Այդ քա-
ջալերութիւն տուաւ ինձ վիրատին ձեռն
արկանելու լաթիներէն, որ և բաւակա-
նին յաջողութեամբ սովորեցի, նա մանա-
ւանդ որ առջեկ ուսած լեզուներս աշխա-
տանքս շատ կը թեթեցնէին,, :

Զ.

ԳՐԱՆԿԱՐԻՆ ՀԱՅ ԻՐԱԿԱՑԻՒՆ ՊԱՇՏՕՆՆԵ-
ՐՈՒ ՄԵջ:

Գեւսիլվանիայ նահանգի պատգամա-
ւորները միաբանութիւն մը կը կազմէին,

որ Ալոյդհանուր ժողով է, կը կոչուէր: Խնչակն որ մեզ յայտնի է, արդէն թղթագրամի առաջին տպագրութեան ժամանակ Թրանկիբն բարեկամներ գտած էր այն տեղ: Ա երջը օրացոյցի պատճռով որ արդէն երեք անգամ լոյս տեսած էր, բարեկամներու թիւը շատցաւ, այո՛, դատնուեցան նաև մարդիկ, որք Թրանկիբնի խական նշանակութիւնը ձանաշելով ու յարդելով, քարտուղարի պաշտօն առաջարկեցին նորան ընդհանուր ժողովի մէջ: Քնարուցութենէն առաջ ժողովի անգամներէն մին թէն աշխատեց ընկերներու մոսադրութիւնը ուրիշ անձի ու քայլ ուղղել և Թրանկիբնի զէմ ոգորել, սակայն և այնպէս վերջինս ձայներու բազմութեամբ ընտրուեցաւ: Եյս բանի վրայ սրամուելով՝ հակառակորդը նորա ոխորից թըշնամին դարձաւ: Թրանկիբն ի սրակ կը ցանկար, որ գժկամակ ոսոխը հանգստանայ և հետք հաշտուի: Օր մը նորան յայտնեցին, որ իջն ամիսն շտամատնասէր մարդ

է և հազուազիւտ զիրք մ'ունի, որոյ վրայ սաստիկ կը պարծի: Ե յդ լսելէն ետքը Գլուխնեկին քաղաքավարի նամակ զրեց նորան ամենենին ցոյց չտալով որ նորա թըշնամութեան լուրին արդէն իր ականջին հասած էր, և խնդրեց, որ եթէ կարելի է բարեհամարտի զիրքն իրեն ուղարկիլու քանի մ'օրուայ գործածութեան համար: Պատգամաւորն ոչ թէ միայն զիրքն ուղարկեց, այլ և յիտագայ նստի ժամանակ բարեկամորէն ընդ առաջ ելանելով՝ աջ տուաւ նորան և ամենայն մտերմութեամբ յայնեց, որ միշտ պատրաստ է նորա իղձերը կատարելու: Թաշնամութեան վրայ աւել խօսք չեղաւ: “Ինդհանրապէս աւելի օգտաւէաէ, — կըսէ Թրանկիբն — այս անըքը պատմելին եաքը, “խոհեմարար վերջ դնել թըշնամութեան, քան թէ չետպհետէ զրգուել և սնունդ տալ նորան,,,: “Եա վարուեցաւ իմաստնօրէն և ըլվնասեց իր պատուին:

Եյնուհետև ընդհանուր ժողովի ամէն ապազրելի զոլծերը Թրանկիբնի ձեռքն ան-

ցան և բայի այսմանէ նա Ֆիլադելֆիայի նամակատան վերատեսչի պաշտօնն ևս ըստացաւ։ Այս պաշտօնն առաջ Բրադ-Փորդ անուն ապագրապետը կը վարեր, որ ամենայն զօրութեամբ աշխատած էր Ֆրանկլինի հրատարակած օրացոյցի տարածուելուն արդելք դառնալու։ Այժմ Ֆրանկլին կարող էր վրէժ առնել, եթէ միայն այլպիսի վատութեան ընդունակ լներ։

Հին առասպելները կը ուն, թէ ամենայն ինչ որ Միդաս թագաւորը կը շօշափէր, ոսկի կը դառնար։ Այդ Ֆրանկլինին վերաբերելով կարելի է ասել, թէ ամենայն ինչ որ նորա գործունէութեան շըջանը կը մտնէր, բարուզըումն կըստանար, ինչ որ կը մտածէր—կեանք կընդունէր։

Ֆիլադելֆիայ քաղաքի մէջ թէ կային գիշերապահներ, բայց նոցա հրահանգումն ու գործունէութիւնը թերատ էր։ Ֆրանկլին վերուց այդ թերութիւնքը։ Այնուհետև հրկիղաշեցներու խումբ մը

կաղմեց և հրդեհի գէմ ապահովիչ ընկերութիւն մը հաստատեց, որ մինչեւ այսօրս գեռ կըտեի Ֆիլադելֆիայի մէջ։ “Եահանգի սահմաններ ապահով չեին վայրենի Նոդիկներու ասպատակներէն։ տեսնելով որ միայն կամաւոր զնուորներու գրնդով կարելի էր վերցնել այդ չարիքը, Ֆրանկլին յայնեց իր միաքը քաղաք ացիներուն և առանձին գրութեամբ բացարեց, թէ ինչպէս պէաք էր հոգ տանել սահմաններու պաշտպանութեան վրայ։ “Եորա առաջարկութիւնը Ֆիլադելֆիայի մէջ հազար երկու հարիւր, իսկ նահանգի մէջ տաս հազար ստորագրութիւն ստանալով՝ զինուորներու գունդը իսկոյն կաղմուեցաւ։ Օգտաւէտ ձեռնարկութիւն մ’ աւարտելուն վերջը Ֆրանկլին իսկոյն մէկուրիշ նորը յերեւան կը հանէր։ Այդպէս, մէկ ձեմարան հիմնեց Պենսիլվանիայի մանկակաց դաստիարակութեան համար և առաջին տարին իսկ հինգ հազար Փունթի չափ յօժարակամ նպաստ ստացաւ Ժո-

Պովողէն։ Ա արժարանի համար հոգաբարձութիւն կազմելու ժամանակ ընդհանուր ցանկութեամբ նա ինքը նախագահ ընտրուեցաւ։ այնուհետեւ վարժարանի բարգաւաճնան վրայ հանապազ փոյթ քաշելով՝ մինչև իր մահը այս պաշտօնի մէջ մնաց։ Իր խոհեմ հոգաբարձութեամբ Գրբանկին այնպէս համբաւ ստացած էր, որ ուրիշ նահանգներու պատգամաւորներն անգամ դպրոց հիմնելէն առաջ հեռու տեղերէն նորա մօտ կուգային խորհուրդ հարցնելու։ — «Քաղաքի փողոցները հարթ չեն, չեն լուսաւորուած և երեկոները ու գիշերները — մանաւանդ թունդ անձրեէն յետոյ, նոցա մէջէն անցնելը կեանքի համար շատ վտանգաւոր էր։ Մինչև որ լսատերներ ու քարայտակ չըստացան Գրբանկին հանգիստ չառաւ։ Եյնուհետեւ հիւանդանոց մ'ես հաստատեց տկարներու ու ծերերու համար։ Հետևեալ գէպքը ցոյց կուտայ, թէ ո՛չքան զգայուն էր նորա սիբուր։

Ա իթֆիլդ անուամբ օտար քահանայ մը եկած էր Գէորգիայ՝ ի պէտս վարժարանի դբամ հաւաքելու։ Գրանկին եկաւորի վրայ տեղեկութիւն ստանալէն վերջը յայտնեց նորան, որ աւելի քիչ ծախրքով կարող կլինէր հասնել իր նպատակին, եթէ վարժարանը Գիլադելֆիայի մէջ հաստատել ուղենար. ըստ որում Գէորգիայ նահանգը շինութեան փայտ չունի և զայն Գիլադելֆիայէն հոն տանելը շատ թանկ կընստի։ Եյս հիմնաւոր կարծիքին բոլոր խոհեմ մարդիկները հաւանութիւն տուին, բայց ոչ Ա իթֆիլդ. սա իր մաքի վրայ հաստատ մնաց։ Եւ Գրանկին որոշեց նորան ոչինչ չըտալ։ Որովհետեւ քաղաքի հոգևորականներէն արգելած էին Ա իթֆիլդին եկեղեցեաց մէջ ճառ ասելու, ուստի իր հրաւերը նա բաց հրապարակի վրայ կը կարդար։ «Օր մը պատահմամբ ես ևս առիթ ունեցայ, կը պատմէ Գրանկին, լսելու նորա ծառերէն մինը, որ ըստ երեսութիւն հանգանակութեամբ վեր-

ջանալու էր: Վիեղ ոչինչ չեմ տար, ըսի
ես մտքէս: Գրպանիս մէջ մէկ բուռն պղինձ
ունէի, երեք կամ չորս արծաթի գոլլար և
հինգ հատ ոսկի փիսթօլ: Մինչդեռ նա կը
խօսէր, սիրաս սկսաւ մեղմիլ և որոշեցի
գէթ պղինձէ ստակս տալ նորան: Նըրապու-
րիչ ճարտասանութիւնը գնալով այնպէս
ազդեց վրաս, որ պղինձէ դիտաւորութե-
նէս ամանչել սկսայ և որոշեցի՝ արծաթս
ալ նորան տալու: Խսկ ճառի վերջն այն-
պէս սքանչելի էր, որ ամէն ջերերս պար-
պեցի և տուի ի՞նչ որ ունէի — ոսկիս և
ամենայն ինչ: :

Գրանկլինի գործունէութիւնը զարմա-
նալի էր: Մեք հիացած կը մնանք տեսնե-
լով, որ այս իր ընտանեկան պիտոյքն օրա-
ցոյցի ու լրագրի խմբագրութեան դժուա-
րին գործերն այնպէս գեղեցիկ հոգացող,
քաղաքային նամակատան վերատեսչու-
թիւնն այնպիսի փութով կատարող, վե-
րոյիշեալ հաստատութիւններն և ուրիշ
շատ ընկերութիւններ ի լոյս կոչելով հա-

մարեա ամէն մէկի վարչութիւնն անձամբ
տնօրինող, օտար լեզուներու ուսումնա-
սիրութիւնն անդադար շարունակող և ի
վերջի վերջոյ ընդհանուր ժողովի քարտու-
ղարութեան տաժանելի պաշտօնն եռան-
դով յառաջ տանող մարդը, որ այս մարդը
դեռ ուսումնական յուղարկութեանց հա-
մար ևս ժամանակ կը գտնէր: Առանձին յօ-
դուած մը պէտք կը լինէր զրելու, եթէ ու-
զենայինք մի առ մի յառաջ բերել նորա
ուսումնական փորձերու և մաքերու ըն-
թացքը, որք շանթարգելի գիւտովն վեր-
ջացան: “Եորա շարադրութիւնն այս ա-
ռարկայիս վերաբերմամբ ծաղրի տակ ըն-
կաւ: “Ի՞նչ օգուտ կարող է ծագել ուս-
ման համար Պենսիլվանիայի անտառնե-
րէն,,, կըսէին այլևայլ գիտնական շրջան-
ներն և մանաւանդ Լօնտօնի մեծամիտ
ուսումնականները: Իսյց այնու ամենայ-
նիւ շարադրութիւնը թարգմանուեցաւ
Գրանսերէն, Գերմաններէն, Խտալերէն, և
չը նախապաշտուած հետազօտութիւն-

Ներու շնորհիւ հասարակային կարծիքը
Գրանկլինի կողմը մեկնել սկսաւ: Ա երջա-
պէս ճշմարտութիւնը լայն ճանապարհ բա-
ցաւ, և երբ որ Ծափական անուն տիեզերա-
հռչակ Գրանսիացի բնագէտը վճռողապէս
Գրանկլինի կողմն անցաւ, թերահաւատ-
ները պապանձեցան: Խօնդօնի գիտնական
պարոնները նոր նիստ մը կազմելով՝ խըն-
դիրը վերստին քննութեան տակ դրին և
վերջապէս իրենց ուսումնական մեծամտու-
թենէն յառաջ եկած սխալը ուղղեցին.
իսկ գիտութեանց արքունական Ճեմարա-
նը պատուաւոր անդամութեան իրաւունք
տուաւ շանթարգելի հեղինակին և պա-
տուեց զնա առանձին ոսկի մեղայլով:

Որ Գրանկլինի փառաւորուելովը նորա
քաղաքակիցներն ևս պարծենալու էին—
ինքն ըստ ինքեան հասկանալի է: Կեանքի
ամենայն ասպարէզներու վրայ հաւասա-
րապէս շահաւէտ ու կորովի մարդուն
իրենց խորին յարգանքը յայտնելով՝ քաղա-
քացիք նահանգային խորհրդաւորի պաշ-

տօն տուին նորան և վերջապէս պատգա-
մաւոր ընտրեցին ընդհանուր ժողովի հա-
մար: Քացի այդմանէ՝ տեղական վարչու-
թիւնը դատաւորի պաշտօն յանձնեց նո-
րան և բոլոր գաղթականութեանց փոս-
տերու գլխաւոր վերատեսուչ կարգեց: Ե-
թէ այնուհետեւ Գրանկլինի քաղաքակից-
ները նորա քաջագործութեանց լուրը կը-
լսէին, օրինակի համար, թէ ինչպէս 500
կամաւոր զինուորներու առաջնորդելով
ձմեռուայ մէջ նահանգի հիւսիսային սահ-
մաններէն Հնդիկները վանաեց ու սահման-
ները բերդերով՝ պատսպարեց, թէ ինչպէս
առանձին տեսակ հնոց մը հնարեց, բայց ար-
տօնագիրը մերժեց, ասելով թէ ամենայն
մարդ պարտաւոր է գիւտերն առանց անձ-
նական շահի ժողովորդին նուիրելու, նա մա-
նաւանդ որ աշխարհս մարդ չկայ որ ինքն ևս
նախորդներու գիւտէն օգուտ քաղած չլի-
նէր, — առաւել չէին զարմանար, այլ կը-
սէին. «դէհ, նա ամեն բան կարող է, աշ-
խարհ նորամէն դեռ շատ բարիք կրտեսնէ,,;

Է.

ԳՐԱՆԿԱՆԻ ՀԱՇՏԱՐԱՐԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ ԼՕՆՏՈՆԻ ՄԵԶ.

Ինչպէս որ Փենսիլվանիան, նոյնպէս և
միւս տասներկու Անգլիական գաղթակա-
նութիւններն Ամերիկայի մէջ ծանր փոր-
ձանքներու հանդիպելու էին շուտով: “Եռ-
ցա մայրենի երկիրը, որմէն որ գաղթուած
էին, Անգլիան էր. սակայն և այնպէս Ամե-
րիկայի մէջ հտստատուելէն սկսեալ նոքա
որոշեալ իրաւունքներ և ազատութիւններ
ունեին: Գհէորգ Գ. Անգլիական թագա-
ւորի պաշտօնեաները, կամեցան խել այս
իրաւունքներն ու ազատութիւնքը Ամերի-
կացիներու ձեռքէն:

Ամեն տասներեք գաղթականութեանց
վրայ կամայօրէն հարկ դրուեցաւ, այնինչ
առանց ազգային պատգամաւորաց որոշմա-
նը հարկ դնել օրէնքով արգելուած էր:
Երկրի ամենալաւ մարդիկը զարհուրեցան
ու զայրացան Լօնտօնէն եկած անիրաւ-

պահանջմունքներէն և իրենց զգուշարար
բողոքը բարձրացուցին: Բայց Անգլիայի
կառավարութիւնը կոյր էր և չէր տեսներ իր
սեփական օգուտը, որն որ կարգել էր բըռ-
նի և ապօրինի միջոցներ բանեցնել գաղ-
թականներու դէմ, եթէ չէր ուզեր որ նո-
քա բաժնուին մայրենի երկրէն: Երեք միլ-
լիօն ու կէսի չափ բնակիչ ունեցող գաղ-
թականնութիւններ Անգլիացւոց առեւտու-
րի համար վերին աստիճանի արդիւնաւոր
դաշտումն էին, ուր որ նոքա իւրաքանչիւր
տարի վեց միլիօն ֆունթ ստերլինգի ապ-
րանք կը փառառէին: Այժմ այս ամենը
կորցնելու վրայ էին: Ո՞եկ անիրաւութիւ-
նըն ետևէն ուրիշը կը բերէ: “Եթէ նոքա
դեռ յանդգնին,, , ըսին Անգլիացւոց մե-
ծաւորները, “Հակառակելու մեր հրամա-
նին, մեր զօրքերն իսկոյն կուսուցանեն նո-
ցա թէ ինչէ հնազանդութիւնը, և ի՞նչ
այնուհետեւ կրկին ու երեքին վճարեն,, :

Զանց կառնունք այս տեղ հակառա-
կութեանց ընթացքը քայլառ քայլ պատ-

մելու, աւելի ընդարձակ նկարագրութիւն ուղեցողները թող բարեհաջին դիմել վարը նշանակուած գրքովին, որ մեք ընթերցողի ուշադրութեանը կը նուիրենք *):

1764 թ. Գրանկլն իր քաղաքակիցներու անուամբ գնաց Լօնտօն հաշտարար միջնորդութեան համար: Մէկ տարի առաջ ևս եկած էր նա Լօնտօն, բայց ուրիշ պատճառով. այն ժամանակ Ամերիկայի մէջ դեռ ոչ չէր կարծէր, թէ արքայական կառավարութիւնը մօտաւոր ապագային ազատութիւնն ոտնակոխ անելով, պատշոյ և խոհեմութեան օրէնքները և իրեն հարազատ երկիրը բռնակալութեան լուծի տակ ընկծել կուզենայ: Ապայն այն ժամանակ ևս քանի մազատամիտ մարդիկ

(*) Գեորգ Ա.աշինգթոն: Գործ Գերդինանդ Շմիտթի: Ծանօթ. Հեղին: — Թարգմանիչն յցսունի, որ այս պատուական գրքովին ևս Հայ հասարակութեանը մատուցանելու բախտ կունենայ շուտով: Փ. Ա.

արդէն կը գուշակէին, թէ ո՞ր կողմ փչելու էր քամին կառավարութեան շրջաններու մէջ: Լորդ Արամդէն Գրանկլինի հետ խօսելով ասած էր, թէ « Ծնայելով ձեր այնքան գովասանուած սիրոյն գէպի Անգլիան, գիտեմ որ գուք Ամերիկացիքդ զձեզ նորա հետ միաւորող միութեան կապերը օր մը պիտի Խովէք և անկախութեան գրօշակը վերցնէք,,,: — Գրանկլինի պատասխանն էր. « Ոչինչ բան այնքան հեռու չէ Ամերիկային հայրենակիցներէս, ինչքան որ մայրենի երկրէն զատուելու և առանձին տէրութիւն կազմելու միտքը,,,: Վայրիկեան միետքը. « Վիայն թէ գուք անարգանօք ըստ վարուեկիք հետերս ,,, առ որ Լորդը խորհրդաբար ասած էր, թէ « Այդ Ճշմարիտ է և այդ է իսկ ապագայ գժտութեանց պատճառներէն մին, զոր ես այժմէն իսկ կը նախատեսեմ,,,: »

Այժմ Գրանկլին եկած էր Լօնտօն ամէն միջոց ի գործ դնելու, որպէս զի կառավարութիւնն և պաշտօնեաներուն կու-

բորէն հետեւող խորհրդարանը յիտ քա-
շուին անիրաւութեան ձանապարհէն:

Զկամինք զատուիլ ձեզմէն, բայց չկա-
մինք նաև անարգանք կրել ձեր ձեռքէն:
Ինչոր ասած էր Քրիստով կլին Լորդ Արամիէ
նին, նոյնը կըմտածէն լիովին և գաղթա-
կանութեանց ամենալընտիր մարդիկը: Ա-
մերիկացի պատգամաւորները խորհուրդ
կազմեցին “Նիւ—Յօրկի մէջ, ուր որ էր
նաև ազնուամիտ Ա աշխնդթօնը : Հետե-
ւեալ նամակէն, որ նա գրած էր ընկերնե-
րէն մէկին, պարզ կերևի, թէ որքան հա-
մամիտ էր Քրանկլինին զլիաւոր հարցի նը-
կատմամբ: “Արդ ի ժամանակիս,, , կըսէ
նա գրի մէջ, “Երբոր մեր գոռող տիրապետ-
ներն ոչ այլ ինչ կըցանկան, բայց եթէ մեր
ազատութեան ոսնակոխ լինելը, ինձ շատ
կարեւոր կըմուի, որ շուտով քայլ մ'ա-
նենք թշնամու հարուածը խափանելու և
մեր նախնեաց իրաւունքները պաշտպանե-
լու համար: Բայց թէ ի՞նչ պէտք է անենք.
այս գեռ անորոշ է. միայն գիտեմ հաս-

տատ, որ ոչ ոք վայրկեան մ' անդամ՝ յա-
պաղելու չէ սուսեր հանելու. ի պաշտպա-
նութիւն հայրենի սուրբ բարեաց.—այս
իմ խորին համոզմունքս է: Աակայն սու-
սերը, ինդրեմ նկատեցէք այս, մեր Աւրծին
օժնութեանը պիտի լինի, Աւրծին տղաւունելը:
Արդէն փորձով տեսանք, կըսեն ոմանք,
որ մեր ինդիրներն արքայական գահի ու
խորհրդարանի առջև կշիռ չունին: Աա-
կայն եկէք, այլ ևս փորձ մը փորձենք,—
նեղենք նոցա առեւտուրն ու գործարան-
ները, թերեւս այդով ստիպենք զնոսա-
յարգելու մեր իրաւունքները: Հեիւսիսա-
յին նահանգներն արդէն դիմած են այս
միջոցին,, :

Աահանգները իրաւ այդ միջոցն ի գործ
դրին և երկար տարիներ համբերեցին ա-
ռանց զէնքի դիմելու: Քրանկլին իրը հաշ-
տարար միջնորդ ամենայն զօրութիւնքը, և ան-
թիւ շարադրութիւններ կըհրատարակէր
Լօնտօնի մէջ, ցոյց տալով Անդլիացինե-

ըուն, թէ ինչ կորստաբեր ճամբու վրայ
էր կառավարութիւնը։ Յէէև նա գիտէր,
որ հայրենակիցները վերջ ի վերջոյ զէնքի
պիտի դիմէն, այնու ամենայնիւ մինչև որ
յոյս ունէր համողական բանիւ աղբելու
կառավարութեան վրայ՝ պարտք կրհամա-
րէր անելու ինչ որ միայն կարելի էր, որպէս
զի մարդկային արեան յեղումն արգելուի։

« ատ բնական է, որ այսպիսով կառա-
վարութեան ատելութիւնը յարուցանե-
լու էր դէմ։ կառավարութիւնը զրկեց
զնա Ամերիկային փոստերու պլիաւոր վե-
րատեսչութեան արդիւնաւոր պաշտօնէն։
Բայց այս ոխակալութիւնը միթէ կարող
էր արգելք լինել Գրանկինին՝ պաշտպան
կալու արդար դործին։ Բնաւ ոչ։ « Ո՞ւր
նահանգները, , , գրեց նա խոյն բարե-
կամներէն մէկին, « ամենախոչէմ և ամե-
նայարմար կերպիւ վարուած կըլինին, և
թէ այժմէն իսկ ընդհանուր ժողով մը կազ-
մէն, իրենց իրաւունքները հրապարակաւ
և ամենայն պնդութեամբ հրատարակեն,

ալքունեաց հարկ չըտալու միաբան դաշն
կապեն՝ մինչև որ թագաւորը ու երկու
խորհրդարանները մեր իրաւունքները չը-
վերականգնեն, և վերջապէս այս պայմանն
Ենգլիական կառավարութեանը հաղորդեն։
Հաւասարի եմ, որ այս քայլը վճռողական
որոշունք յառաջ կըբերէ և այնուհետեւ
կառավարութիւնը կամ հարկ կըտեսնէ
կատարելու մեր արդարացի պահանջմուն-
քը և կամ սաստիկ միջոցներու դիմելով՝
կուղենայ բռնօրէն ստիպել, որ հրաժար-
ուինք անսոցմէ. բայց չենք հրաժարուեր
և նորա անիրաւութենէն ու զազեր հալա-
ծանիքներէն մեր միութեան համար զօրու-
թիւն, խրախոյս, պնդութիւն քաղելով՝
վերջապէս ցոյց կուտանք աշխարհին, որ
մեր վարմունքն արդար էր միանգամայն, :
Այդ խորհրդին հետեւելով տասնեւերեք
նահանգներու պատգամաւորները Ֆիլա-
դելֆիայի մէջ ընդհանուր ժողով կազմե-
լու գումարուեցան և գրեցին մէկ մեկնու-
թիւն աղդային իրաւանց, մէկ խնդիր դէ-

պի թագաւորը, մէկ ընդհանրագիր դէպի
մեծ Ըրբիտանիոյ ազգը և մէկ յայտարա-
րութիւն Ընդլիւական գաղթականներուն—
թղթեր, որոցմէն իւրաքանչիւրն ամենա-
վսեմ ազնուութեան ու հասուն խոհե-
մութեան վկայական մի էր: Գրանկիբն այլ
ևս անդամ մը հաշտութեան փորձ արաւ,
բայց տեսնելով որ և այդ անցածող մնաց
ու լսելով, որ զնա բանտարկելու միտք ու-
նին, նաւ նստաւ ու հայրենիք չուեց:

1775թ. Մարտի 22. տասնեմէկ տա-
րուայ բացակայութենէն վերջը՝ կրկին ե-
կաւ Գիլաղելֆիայ — բայց այժմ իբրև 69
տարեկան ալեռոր ծերունի: Քաղաքացիք
ընդունեցին զնա մեծ պատուով և նոյն
իսկ թուականին պատգամաւոր ընտրեցին
ընդհանուր ժողովի համար:

Բ.

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԺԱՄԱՆԱԿԸ:

Հայի տեղ քար տուին գաղթականնե-
րուն և ապստամբ անուանեցին, այսինքն

յայտնեցին որ պէտք էր միայն վառօդով,
կապարով ու սուսերով պատասխանել
նոցա: Ի՞նչ կարող էին այլ ևս անել
Ամերիկացիք, բայց եթէ հրատարակել
աշխարհիս առջև, որ նոքա այնու չետե-
մեծ Ըրբիտանիոյ կառավարութիւնը չեն
ընդուներ իրբեւ իրենցը: Այդ ևս արին:
Տան և երեք միացեալ նահանգներին
անկախութեան յայտարարութիւն տեղի
գտաւ 4 Յուլիսի 1776թ:

Բայց Ընդլիւական կառավարութիւնը
իր իշխանութիւնն առանց մարտնչելու
կորցնել չուղեց և նորածին տէրութիւնն
ազատութեան հասնելու համար՝ մարտըն-
չելու ստիպուեցաւ: Խոռովութիւնը սաստ-
կանալով բանը արեան հասաւ և այդպէս
սկիզբ առաւ Ամերիկայի պատերազմը վասն
ազատութեան:

Ընդլիւան տասնեւրեք գունդ զօրք ու-
ղարկեց Ամերիկայ՝ Յով անուն զօրա-
պետի հրամանատարութեամբ, սորան հը-
րամայուած էր, որ գաղթականներէն հնա-

զանդութիւն պահանջէ, և եթէ ընդդիմանան, պատերազմն անցապաղ յառաջ վարէ: Ֆրանկլինի ազդեցութիւնը ժողովրդի վրայ իմանալով, զօրապետը գրաւոր կերպիւ հաղորդեց նորան, որ զգոյշ կենայ ազգի եռանդը բորբոքելու:

Ֆրանկլին պատասխանեց. «Այն մտերմական թղթերն, որ դուք կը յիշէք, խորհրդարանի տուածներէն աւելի բան չեն խոստանար մեզ և նոցամէն աւելի նշանակութիւն չունին մեր աչքին. ներողութիւն կիսուտանան մեզ, եթէ յօժարին+ հանգանդէլու: Զեր գոռող, տակաւին խելքի ըրբերուած ազգի ոգուն միայն վայել բան է, վիրաւորուած ու զրկուած գաղթականներուն ներողութիւն առաջարկելը: Այդպիսի թիւը միջոցներով միայն մեր զայրոյթը կը շարժէք: Ի՞նչ հանգանդի՞նք ու հպատակինք դարձեալ այն տէրութեանը, որ ձմեռուայ մէջ մեր քաղաքները կայրէ, հանդիսա դիւղացիներն ու ստրուկները մեր դէմ կաղմէ, մինչև անգամ վարձու

օտարականներ կառաքէ մեր դաշտերն արեամբ զանգելու համար: Աակայն դնենք, որ կրցաք անյիշաչար լինել դէպի մեզ. արդեօք կարող ենք նոյնը սպասել և ձեր ազգէն, որ մեզմէն սաստիկ վիրաւորւած կրհամարէ զինքը: Ոչ. ձեր ազգն ամենայն հնար բանեցնելու է մեր քաջութիւն անողորմ բռնութեամբ ընկճելու և մեր բարօրութիւնն ի չկը դարձնելու: Զերդ պայծառութիւնը կը անք, որ թագաւորը կուզէ յարատե խաղաղութիւն և սերտ միաբանութիւն հաստատել գաղթականներու հետ: Մեր կը նախադասէնք ի հարկէ այս տեսակ խաղաղութիւնն օտար զօրութեանց դաշնակցութենէն, եթէ միայն հաւաստի լինէնք որ դուք իրաւ առ այդ պատգամաւորեալ էք: Բայց ատոր վրայ է իսկ որ կերկրայիմ: Անզիսկան ազգը կարող էր անշուշտ կրկին զրաւել մեր բարեկամութիւնը, եթէ ատելի կուսակալները յեսս կանչէր, մեր այրուած քաղաքները նորէն վերականգնէր ու վերջապէս մեզ հասած

Վկասները վճարելու յօժարէր. բայց նորա հպարտութենէն և անխոչեմութենէն այս- պիսի իմաստուն ընթացք սպասել կարելի չէ: Իբրև հարստահարիչ, պատերազմա- սէր, բռնակալ և արտօնասէր ազգ, Անդ- լիացիք իրենց սրտի չար կրքերուն դար- ձեալ հոսանք տալու և վերջապէս այնքան գանձ ու մարդիկի զոհելու են, ինչքան որ Խօժէնը զոհած էր խաչակրաց պատերազ- մի ժամանակ: Պատերազմ զեկուցանե- լով ձեզ երկիւղ աղդած չեմ լիներ ի հարկէ. Անգլիացիք չեն հաւատար, մինչեւ որ բանի վերջը ըլտեմնեն,,,: :

Պատերազմը շարունակուեցաւ: Ամերի- կայի միացեալ նահանգներու համար Ա- շխնթգոն շատ պատուական զօրապետ էր, միայն դեռ զինուորներ չունէր և պատե- րազմի ժամանակ իսկ գունդեր կազմելու ստիպուած էր, այն ինչ թշնամին հակա- սակորդէն շատ գերազանց ու բարեկարգ զօրքերու վրայ իշխելով՝ արդէն յաղթա- նակներ տանելու սկսած էր:

Եյնու ամենայնիւ քաջասիրտ Ամերի- կացիք վայրկեան մ' անդամ չերկբայեցին, այլ ո՛վաւ է,, — ըսին — «մեռնել դաշ- տի վրայ ազատութեան և իրաւանց համար մարտնչելով, քան թէ անարդօրէն խոնար- հիւ օրինազանց բռնակալին,, :

1796 թ. վերջին Թրանկին միացեալ նահանգներու կողմէն դեսպան առաքուե- ցաւ Թրանսիայ՝ այս երկիրս իր հայրենեաց հետ դաշնակցութեամբ միաւորելու հա- մար: Եյդ միջոցին յաջողութիւնը դեռ լիովին Անգլիական զէնքին կրպատկանէր և Եւրոպացիք կարծելով, թէ մանուկ տէ- րութիւնն Ովկիանոսի միւս կողմը արդէն իսպառ հոգեվարքի մէջ է, նորա հետ միա- նալն անխոչէմ կրհամարէին: «Պակայն Թրանկին բորբոքեց ամբողջ Թրանսիան և նոր ողբ շնչեց այս երկրի մէջ: «Քաղա- քական հասարակ զգեստ հազած, մազե- լը պարզ սանտրած, պատկառելի և իմաս- տուն ալեռը ասես թէ ուրիշ աշխարհէ- եկած տեսլեան տպաւորութիւն գործեց

Ա երսայլիք ոսկեզարդ պալատականներու բազմերանդ շրջանին մէջ և նոր ժամանակի մարդարէ երեցաւ նոյսա աչքին: Գրանստիական ազնուականները, նոյն իսկ ազնուականները, որք իրենց քաղաքացիներու վրայ միայն քամահանօք կընայէին, մէկ մէկու հետ կըմրցէին այժմ որքան կարելիէ աւելի մեծարանք չնորչելու Ամերիկայի քաղաքացուն,,,: “Այն մտերմութիւնը,, , — գրեց Գրանկլին ընկերներէն մինին— և այն յարգանքը, այն ջերմ սէրը, որ Ամերիկացիք այս տեղ կըստանան, երբէք չեն գտներ Անգլայի մէջ, եթէ այն տեղ գնան,,,: Որովհետեւ քիչ ժամանակէն ետքը Ամերիկացւոց զօրքերն ևս նշանաւոր յաղթանակներ սկսած էին տանելու, ուստի 1778 թ. յաջողուեցաւ մէկ առեւտը րական և մէկ յարձակողական ու պաշտպանողական դաշնագրութիւն հաստատելու Ամերիկայի ու Գրանսիայի մէջ, և Գրանկլին վերջապէս թոյլատութիւն ստացաւ ներկայանալու Լիւդվիկ Ժ.Օ. թա-

գառողին: Ահա թէ ինչ կըզրէ այս մասին չիլիարդ դ'Օրերթօյլ: Ա երջապէս Գրանկլին տեսութիւն ունեցաւ նորին գերիշխանական մեծութեան հետ: Կտաքը բքրութիւնէ շարժուելով հետն եկան նաև շատ ուրիշ Ամերիկացիք և այլ օտարականք, որք արդէն առջեւէ գումարուած էին: Ճողովրդի ու շաղրութիւնը միանդամայն յուղուած էր ծերունու ալեաց, պատկառելի կերպարանքի ու պարզուկ հագուստի վրայ: “Օափահարութիւնքն ու կրկնապատկուող մտերմական ցոյցերը յայտ արարին այն համակրութիւնը, որին որ Գրանսիայիք բոլոր միւս ազգերէն աւելի ընդունակ են և որոյ հրապոյը նոքա իրենց նուրբ ազնուութեամբ ու քաղաքավարութեամբ գիտեն աւելի ախորժ ու գրաւիչ անել անոր արժանացող մարդու սրտին: “Նորին մեծութիւնն այսպէս խօսեց առ նա: “Ա կայեցէք Ամերիկայի միացեալ նահանգներուն իմ բարեկամութիւնս և թոյլ տուէք ինձ

ասելու, որ ձեր վարմունքէն, մինչդեռ որ
տէրութեանս մէջ էք, գոհ եմ ի սրտէ,, :
Երբոր այնուհետև Ֆրանկլին արտաքին
գործոց պաշտօնեային այցելութիւն անե-
լու գնաց, ջերմ ողջոյններ ստացաւ ժողո-
վրդէն, որ նորան սպասելով ճամրու վրայ
կանդնած էր,, :

Ֆրանսիայի դաշնակցութիւնն այն օ-
գուտն ունեցաւ, որ միացեալ նահանգնե-
րը սիրտ առին, թշնամիները վհատել սկզ-
սան և Վաշինգթոնի պատերազմա կան մի-
ջոցները շատցան։ Աակայն Ֆրանսիայէն
Վամբիկայ ուղարկուած զօրքերը զրեթէ
մարտի մէջ չըմտան, քանզի Վամբիկացիք
իրենց արդար գործը օտարի ձեռքով հո-
գալու տեղ, իրենք իրենց քաջութեամբ
զայն բարի վախճանի հասուցին։

Միացեալ նահանգներու վրայ վերստին
իշխանութիւն ձեռքբերելու համար Վամ-
բիկացիք այլ ևս մէկ անգամ ոտքի ելան,
վայրինի հնդիկ ցեղերը գաղթականներու
վրայ յարձակուելու դրդեցին և ամենա-

զարհութելի միջոցներ բանեցնելով սկսան
նոցա դաշտերն ու գիւղերն այրել և աս-
պատակել։ Աակայն որչափ և կորուստա-
բեր էր այդ գարշելի մոլեգնութիւնը հիւ-
սիսալին Վամբիկայի բնակչաց համար, այ-
նու ամենայնիւ հետեւանքը բարի եղաւ։
Վինչե անգամ և այն մարդիկը, որք մայ-
րենի երկրին գեր հարազատ էին, ոտքի ե-
լան և զէնքի դիմեցին այժմ, քանզի չէին
ցանկար հարազատ մնալ տէրութեան մը,
որ իր իշխանութիւնը բարբարոսական դա-
րուց վայրինի հնարներով հաստատել կը-
ջանար։ Վզատութեան համար նահատակ-
ուող քաջ աղդի համբաւն այնպէս տա-
րածուեցաւ և տյնակէս ջերմ համակրու-
թիւն գտաւ աշխարհին մէջ, որ ամենայն
երկիրներէն յօժարակամ զինուորներ եկան
Վամբիկայ և մասն Վաշինգթոնի դրօշա-
կին տակ։

Վերջապէս Վնդիկայի բազուկը թուլա-
ցաւ, և քանզի այսուհետեւ մարդիկ ու գան-
ձեր զոհելով ինք իրեն օգտել կարող չէր,

Հարկ համարեց հաշտութիւն հաստատել,
որ և տեղի գտաւ Փարիզի մէջ 1783 թ:
Հիւսիսային Ամերիկայի անկախութիւնն
ընդունելով՝ Ենդիան կորուց 20,000 քա-
ռակուսի մղոն երկիր :

թ.

ՎԵՐՁԻՆ ԺԱՄԱՆԱԿԸ:

Ֆրանկլին, որ իր խորին ծերութեանը
չնայելով դեսպանական պաշտօնը մինչեւ
այժմ փութաջան կերպիւ կրվարեր, այ-
սուհետեւ կրցանկար կոչուիլ Փարիզէն՝
իր վերջին օրերը հայրենեաց մէջ վայելե-
լու: Թէեւ Փարիզի մէջ նա քանի մը Ֆր-
րանսիացիք ճանաչած էր, որ լիակատար
պատուց արժանի էին, այնու ամենայնիւ
չը սիրեր այդ քաղաքը և իր ուղղասիրա
հայրենակիցները Փարիզացիներէն աւելի
բարձր կրդասէր: «Ես կրտենչար շուտով
հեռանալ այս պատրուակեալ ինքնասի-
րութեան», քաղքէն: «միայն մարդասի-
րաբար ուրիշն էարի կամենալն է հոգոյ ճըշ-

զրիտ քաղաքավարութիւնը,, , կըսէր նա
ստէպ այդ միջոցին: Ասկայն նահանգներու
կառավարութիւնը Ֆրանկլինի Ֆրանսիայ
մնալը դեռ կարևոր տեսնելով՝ կարքն իս-
կոյն չոկատարեց և այդպէս պատկառելի
ծերունին վերջապէս միայն 1785 թ. վե-
րադարձաւ Գիւլասելֆիայ:

Նաւահանգստի մէջ բազմութիւնը
զուարթագին աղաղակներով ընդ առաջ ե-
լան նորան և զանգակահարութեամբ ու
ռմբակոծութեամբ ընդունեց զնա քաղա-
քի մէջ, որ այժմ նորա գալու պատճա-
ռով տօնական զարդերով պՃնուած էր:
Եւ այս այն իսկ քաղաքն էր, ուր որ նա
երբեմն իբրև տասնեռութ տարեկան պա-
տանի մրրկաւոր ծովային ճամբարէն հոգ-
նած, պատառուն ու թրջուած հագուս-
տով, փողոցներու մէջէն հուշեկ անցնե-
լով թմբութենէն անոյշ ննջած էր կուա-
քերներու տաճարին մէջ: Այն ժամանակ
դեռ չըդիտէր իր ապագան և ընտրելու էր
ապառնին, քանզի մարդս որոշեալ մա-

սամբ տէր է իր Ճակատազրի վրայ: Առդու
ամենալաւ բերմունքներուն սրտին վրայ
իշխանութիւն տալով՝ բարի մարդ մարտըն-
չեց նա, այժմ կարող էր պարծիլ իր ալե-
ւոր հերքերով: « Կատերու աչքն արտա-
սուք կուգար Փարիզի ծերունու աղնիւ
կերպարանքը տեսնելին: » « Նորա մուտա-
քը, , — կըսէ ականատեսներէն մին, « Հան-
դիսական մուտք մի էր, ուր որ կերթար՝
օրհնութիւն կըստանար աղատ և երախ-
տագէտ ժողովրդէն, որ նորա բարերարու-
թիւնքը միշտ կըյիշէր: Օ մինուորները,
որք նորա իմաստութեամբ ապահոված ան-
կախութեան համար արիւն թափած էին,
իրենց մեծարելի վէրքերը նորան ցոյց տալու
կըփութային: ծերուկները, որք մինչև նո-
րա վերադառնալը կենդանի մնալու աղօթքը
արած էին, անոր շուրջը կըհաւաքուէին,
և մանուկ սերունդ մը վառվուուն սրտով
կըտենար տեսնել այն մարդու պատկերը,
որոյ քանքարն, առաքինութիւններն ու-
գործերը նորա սրտի մէջ սուրբ ողեւորու-

թեան առաջին բերկրանկքը յարուցած էին:
Այսուհետեւ բոլոր ազգերու առջեւ բայց
նաւահանգստէն քաղաք մտնելով, նա տե-
սաւ իր հիմնած ժողովրդական վարժարա-
նը, որ կըբողոքէր, տեսաւ և հիւանդա-
նոցը, իր հիմնարկութիւններէն ամենաա-
ռաջինը, իր յարատեւ խնամոցը արդասիքը,
որ նոյնալիս ամենալաւ զրութեան մէջ էր, :
Պրանկլին ութսունեմէկ տարեկան էր, սա-
կայն որք կըկարծէին, թէ այսքան աշխա-
տելին ետքը, վերջապէս հանդիսաւ առնել
կուղենայ, նորա կեանքի խորութիւնը չէին
ճանաչչը: « Վեռ ժամանակ կունենաք
հանգչելու, երբոր աչքերդ փակուին, , ,
կըսէր նա հայրենակիցներուն, և այս դա-
տարկ ոճ մը չէր, այլ նորա ամենաներքին
էութեան արտափայլութիւնն էր: Որքան
և աղջէին նորա մարմնոյ վրայ բնութեան
անցեղի օրէնքները, դարձեալ կըմնար նը-
ման ծառոյ մը, որոյ բունն թէւ արդէն
քայքայուած է, բայց ինքը դեռ բողըողջ
ու պատուղ կուտայ:

Գրանկին կառավարութեան ամենաւ-
բարձր ժողովի անդամ ընտրուեցաւ և փոքր
ժամանակէն ետքը նոյն իսկ ժողովի նախա-
գահը դարձաւ: «Եորա հիմնած հաստա-
տութիւնքն այժմ ևս ազգու օժանդա-
կութիւն կըստանային նորամէն: Եշրկու
մեծ ընկերութիւնք, որոցմէ մին բանտե-
րու վերանորոգութիւնն ու միւսը ստրուկ-
ներու ազատութիւնն ի նկատի ունէր, նա-
խագահ ընտրեցին զնա. և այդպէս նորա
ձեռքերը միշտ լիքն էին գործով և մանուկ
սերունդը կարողէր ուսանել ծերունիէն,
թէ ինչ կրնշան ակէ անձանձրոյթ աշխա-
տէն ու գործելը:

«Եորա Գիլատելֆիսյ մանելէն երկու տա-
րի վերջը՝ նոյն իսկ քաղաքի մէջ գումա-
րուած ժողովը — Առնդրեսոր — վերստին
քննութեան տակ ձգեց խուռայով պա-
տերազմի ժամանակ ծագած ընդհանուր
սահմանադրութիւնն և զայն նորէն ստո-
րագրեց: Այս հանդիսի պատճառով հա-
ւաքուած ահապին բազմութիւնն իմաս-

տուն ալեւորի շրթունքէն այլ ևս մէկ ան-
գամ ձառ լսելու շնորհ դտաւ: Ճառը վի-
վճռէն ամենքը գոհ չեն, անմիաբանու-
թեան չար ողին սկսած էր արդէն շարժել
անդամներու մէջ, այդ բոպէին ոտքի ելաւ
Գրանկին և յիշագայ խօսքելն ասաց իր
ստորագրուելէն առաջ:

«Ես կընդունեմ այս սահմանադրու-
թիւնս թերութիւններովն հանդերձ, ե-
թէ ունի այդպիսիք, քանզի կըկարծեմ,
որ մեղ կառավարութեան ձեւ մը անհրա-
ժարկաւոր է և քանզի կըհաւատամ,
որ ամենայն ինչ կառավարչական ձեւ լսւ
է, եթէ լաւ գործադրուի: Աըհաւատամ
նոյնպէս, որ մեր սահմանադրութիւնը քա-
նի մը տարի լաւ կըպահուի, և տեղի չե-
տար բռնակալութեան, եթէ ազգի ապա-
կանութիւնը զայն կըպահանջէ: Չեմ կար-
ծեր, որ ուրիշ ժողով մաւելի լաւ սահ-
մանադրութիւն հաստատել կարողանար:
Ա ասն զի երրոր միացեալ կարծիքներէն
օդուա քաղելու համար շատ մարդիկ միա-

սին կը հաւաքուին, կը հաւաքուին նոյնպէս
և նոցա նախապաշարմունքը, կիրքերն ու
տեղական մասնաւոր շահերը, և կատա-
րեալ գործ մը յառաջացնելն անհնարին
կը դառնայ: Ես կը զարմանամ մինչեւ ան-
գամ, որ կը ցանք կատարելութեանը այս-
քան մօտենալ և ինձ կը թուի, որ թշնա-
միք անգամ՝ կը զարմանան, ըստ որում մեր
խորհրդածութիւններէն ուրիշ բան չեն
սպասեր, եթէ ոչ միայն աշտարակաշնուր-
թեան հետեւանքը և կը կարծէին, թէ նա-
հանդները երբէք միմեանց չեն մօտենար
վերստին, եթէ ոչ միայն դաշյն միսելու
մէկ մէկու սրտի մէջ: Արդ ես կուտամ իմ
ձայնս, քանզի աւելի ընտիր սահմանա-
գրութեան յոյս չունիմ, և մասնաւոր
մաքերս ընդհանուր օգտին զոհ կը բերեմ:
Ատենէս դուրսը նորա վրայ բան խօսած
չեմ և կը ցանկամ, որ ինչ որ այս յարկիս
տակ ասուեցաւ՝ մեր մէջ մնայ: Եթէ ամե-
նայն մարդ տուն վերադառնալով ուղենար
մի առ մի պատմելը ընտրողներուն ինչ որ ա-

սուած էր հոս, ապա հեշտ կարող էր պա-
տահել, որ սահմանադրութիւնն ընդհա-
նուր վարկ չէր դանէր և այդպիսով այն
բարի ներգործ ութիւնը ի չեք կրդառնար,
որ թէ մեր ու թէ ուրիշ երկիրներու նը-
կատմամբ ծագած էր մեր իրական կամերե-
ւութական միաբանութենէն: Կառավա-
րութիւն մը այն ժամանակ միայն կարող
է յառաջ տանել ազգի բազդը, երբոր ազ-
գը նորա բարելաւութեան ու կառավարիչը
ներու ուղղամիտ աղնւութեան վրայ կա-
տարեալ վստահութիւն ունի. այս պատ-
ճառով կը ցանկամ, որ ինչպէս մեր սեփա-
կան օգտի, նոյնպէս և յօգուտ յաջորդ սե-
րնդեան, ամենքս սերտիւ միաբանինք սահ-
մանագրութիւնս ըստ չափոյ կարելութեան
ամենայն տեղ քարոզելու և մեր բոլոր ջան-
քըն ու ներելի միջոցներն ի գործ դնելու,
որպէս զի շուտով ընդունուէր: Արտիս ա-
մենաջերմ փափազը նախ քան զամենայն
այս է, որ իւրաքանչիւր անգամ ժողո-
վիս, որ զեռ գուցէ քանի մը բան ունէր ա-

սելու մեր դէմ, իր անսխալականութեանը
շատ հաւատ չընծայէ և ինշան միաբանու-
թեան՝ թղթիս տակ իր անունը ստորա-
գրէ,, :

Ի զուր չըխօսեց ծերունին, ամեն պատ-
քամաւորները ստորագրուեցան; Վայնու-
հետեւ սահմանադրութեան գիրը միացեալ
նահանգաց բնակիչներու ձայնարկութեա-
նը ենթարկուելով՝ այն տեղ ևս ընդհա-
նուր հաւատնութիւն գտաւ :

Մէկ տարիէն վերջը միացեալ նահանգ-
ներու պատգամաւորները նախագահու-
թեան պաշտօնը ձայներու միութեամբ
Վաշինգթօն Գաներալն տուին: Զրանկ-
լին սրտի մտօք կուրախանար տեմնելով,
որ իրերու նոր կարգը քանի գնայ կամրա-
նար Վաշինգթօնի խոհեմ ու հաստա-
տուն վարչութեան տակ: Եւ ինչպէս չու-
րախանար. միթէ նորամէն քսանելից տա-
րեօք կրտսեր Վաշինգթօն նորա ամենա-
մեծ աշակերտներէն մինը չէր, որնոր վար-
ժապետի կէս դարու չափ — թէ բանիւ

ու թէ գործով քարոզած Շմարիտ ըսկզ-
բունքներու իրագործուելուն կ'օժանդա-
կէր:

Աերջապէս հասաւ ժամանակը, երբոր
Զրանկլինի պէս մարգու կեանքն ևս հանգ-
չելուէր: Ազօր առողջութիւնը, որ ընու-
թեան ձիրք մի էր, չափաւոր կեանք վարե-
լով կրցաւ պահպանել մինչեւ ուժուն և
երկու տարեկան հասակը. սակայն այնու-
հետեւ վրայ հասան այլեայլ հիւանդու-
թիւնք, որք նորան ուժգին ցաւ պատճա-
ռելով, ստիպեցին որ անկողին մտնէ:;
Բայց հիւանդութեան մահճի մէջ անգամ
կօդներ ուրիշներուն խորհրդներով, և
շատ մարդիկ, որք տեսութեան կուզային,
զուարթ որտով կ'վերագառնային նորամէն:

Վա տուաւ բարեկամներուն յիտակաց
տապանագիրը, որ յիսուն տարի առաջ
մնիքն իր համար յօրինած էր:

Վայս տեղ կըննջէ՝
Կրբես սողնոց կերակուր,
Վարմինը

Գիր տպուլ

Բենիամին Գրանկլինի.

Աման տփոյն հին մատենի,

Որոյ մջէն թերթերը քաղուած են,

Կազմը մաշուած:

Սակայն շարագրութիւնը չե կորչեր,

Եյլ կրկին լոյս կրտեսնէ, այսպէս կը յու-

սայ նա,

Եոր տպագրութեամբ,

Աւզուած ու բարուոքած

Եջո՞ն

ՀԵՊԻ ԵՎԵԿԻ:

Եյս հաւատը դէպի ամենաբարձրեալ
ին և հոգոյ շարունակութիւնը հողեղին
կեանքէն յետոյ այժմ ևս կենդանի էր նո-
րա սրտի մէջ և ոգելից բառերով կարտա-
սանուէր նորա շրթամբ: “Խցէ”թէ,, , կը-
սէր և զուարթադին դիմօք, “կընայի աե-
սանել զքեղ ի փառս քում, հայրդ ոգոց,
անհասդ էութեամբ, տեսանել հիացմամբ
զհրաշալիս քո յաշխարհս վերինս և մտա-

նել ի հաղորդակցութիւն ընդ հոգիսն եռ
բանելուաց,, :

Եորա կատակած գումարի մէկ մասն որու-
շուած էր այն վարժարանի համար, ուր
որ ինքը սկզբնական կրթութիւն ընդու-
նած էր, միւս մասը ջրմուղ մը նաւազը-
նաց անելու և վերջապէս աղլ ես մէկ մա-
սը յօդուած գործաւոր աշակերտաց Բօս-
տօնի և Գիլատելֆիայի. իսկ ստանալիք
պարտքերու մուրհակները կատկուած էին
Գիլատելֆիայի հիւանդանոցին: Աւան-
դազրի վերջին խօսքերն էին. “Օքսոնե-
լու գաւազանու վայրենի խնձորենին, ազա-
տութեան զլսարկի նման՝ ոսկիէ սիրուն
շինաւած ճարմանդով, կրթողաւմ իմ և
մարդկութեան ընկերին, Աշխնդօն զօ-
րսակետին: Եթէ և արքայական գայիսօն
լինէր, արժանի էր զայն ստանալու և կը-
ստանալու,, :

Հանգիստ հողավ սպասնց Գրանկլին յե-
տին բազէին և մինչև վերջին օրը միաքը
պարզ պահցէց: 1790թ. ապրիլի 17, երեկո-

յեան 11 ժամին մահը փակեց նորա աչքը :

Նորա թաղման պէս հանդիսաւոր թառումն Ամերիկան գեռ տեսած չէր: Գիշատելի ֆիսյի բնակիչները սզոյ հանգերձ հազան, զանգակները տրառւմ չնչեցին, տանիքներէն ու դրօշակները պարզուեցան, լրագիրները սև շրջանակ զգեցան և Առնդրեսոր բոլոր միացեալ նահանգներու վրայ երկու ամսուայ սուգ դրաւ:

Վիւս երկիրներն ևս ի խորոց սրտէ արտմեցան նորա մահուան բօթը լսելով: Ֆրանսիայի օրէնսդրական ժողովի մէջ այս սիսի արտայայտութիւն տուաւ Միքարօն ընդ հանուր վշանի.

“Ֆրանկլին մեսառ: (Խորին լռութիւն ժողովի մէջ:) Այն ողին, որ Ամերիկային ազատութիւն տուաւ և ամրող Ձւռ բուպայի վրայ լռույց հոսանք կը յօրդէր, Աստուածութեան զիրկը վերագարձառ:

Առնդրեսոր Ֆրանկլինի համար երկու ամսուայ սուգ կարգեց ամեն միացեալ նաև հանգներու մէջ, և այդպիսով Ամերիկան

վճարեց հիացման ու պատուոյ պարտքը իր ազատ սահմանադրութեան հիմնադիրներէն մէկին:

Ով օրէնսդիրը, արդեօք ձեզ ևս արժանի չէ, որ միանաք այս կրօնական արարմունքին և մարդկային իրաւունքներուն ու նոցա իշխանութիւնն աշխարհիս մէջ տարածող փիլիսոփային այսօր ընծայուած փառաբանութեանը ի տես աշխարհի մասնակցիք:

Այս մահկանացուին, որն որ յօդուտ մարդկութեան՝ իր վսեմ հոգոյ զօրութեամբ երկինքը ու երկիր ըմբռնելով՝ շանթըն ու բռնակալութիւնը սանձահարել կրցաւ, հեթանոսական հին աշխարհը բագիններ կը կանգներ անշուշտ:

Փիլիսոփայութեան և ազատութեան համար երբ և իցէ ապրող ամենամեծ մարդիկներէն մէկին լուսաւորեալ և ազատ Աւրոպան պարտաւոր է իր վիշտն արտայացանը և անունը լիշտաւակնելու:

Ուստի կառաջարկեմ, որ ազգային ժողովը վճիռ հաստատէ՝ երեք օրուայ սուրբ դնելու Տաճնիամին Գրանկլինի համար,,:

Միքարօյի առաջարկութիւնն ընդունուեցաւ:

Երդ մէք ևս կանգնած ենք մաքով անմաշ ննջեցելոյ աջիւնին առջեւ: Յառղ մեր սիրտն երախտագիտութեամբ ու հիացմամբ լցուի նորա վրայ նայելով, և թռղ նա օրչնէ զմեզ իր գերեզմանէն:





6373

00023306

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0002306

